

**ՆՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ**

**Գ**

**Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ**



**ՆՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

**Գ**

**Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ**

**Խ Ր Ա Տ Ն Ե Ր**

**ՀՐԱՄԱՆԱԲ**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

**ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ-  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՆՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2007**

ՀՏԴ 25  
ԳՄԴ 86.37  
Ս – 970

**ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ**

Ս – 970 Հոգևոր խրատներ: - Էջմիածին: Մայր  
Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007.- 176 էջ:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկեմասությամբ

.....

ISBN 978-99930-75-54-7

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

**ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ  
ԿՅԱՆՔՆ ՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ս**ուրբ Եփրեմ Ասորին ծնվել է, հավանաբար, չորրորդ դարի սկզբներին Մծբինում՝ Միջագետքի հյուսիս-արևելյան մասի գլխավոր քաղաքում կամ նրա մերձակայքում: Նրա նախնիները, ինչպես վկայում է ինքը, ընչազուրկ էին և ողորմությամբ էին ապրում, պապերն արդեն հողագործ էին և բարեկեցիկ կյանք էին վարում, ծնողները նույնպես հողագործ էին և ազգակցության մեջ էին ոչ երևելի քաղաքաբնակների հետ: Սակայն տոհմի ազնվազարմ չլինելը հատուցվում էր քրիստոնեական առաքինություններով և իրենց որդուն Աստծու երկյուղածությամբ դաստիարակելու՝ ծնողների հոգածությամբ: Ինքը՝ սուրբ Եփրեմը, խոսում է իր պատանությունների մասին. «Ես արդեն պատրաստ էի բարիքի հաղորդությանը, հայրերից հորդորներ էի ստացել Քրիստոսի մասին: Ծնողներս ներշնչել էին Աստծո երկյուղը: Ես տեսնում էի բարեպաշտ կյանքով ապրող հարևաններես, լսում էի Քրիստոսի

Համար տառապած շատ մարդկանց մասին. հայրերն իմ ներկայությամբ խոստովանում էին նրան դատավորի առջև, ես նահատակների բարեկամն եմ»: Դեռևս Եփրեմի կյանքի առաջին տարիներին Աստված ցույց տվեց մանկան գալիք մեծությունը նշանակալից տեսիլքում կամ երազում, որի պատճառով էլ նա, հավանաբար, անվանվեց Եփրեմ, այսինքն՝ պտղաբեր: Բացահայտվեց, որ մանկան լեզվի վրա խաղողի թուփ է աճել, որը, ի վերջո, այնքան աճեց, որ իր ճյուղերով ծածկեց ողջ երկիրը, և այնքան պտղատու էր, որ թռչուններն ինչքան սնվում էին պտուղներով, դրանք այնքան բազմանում էին:

Սակայն պատանուության տարիները Եփրեմի համար առանց որոշ խոչընդոտների չանցան: Նա ի բնե կրակոտ և դյուրագրգիռ էր, իսկ պատանի մարմնում երբեմն գրգռվում էին անմաքուր ցանկություններ: Հետագայում ինքը՝ Եփրեմը, այդ գծերով է ներկայացնում իր պատանության առաջին տարիները, թեպետ, անկասկած, նրա նկարագրության մեջ չի կարելի չնկատել այն խոր հեզությունը, որը նրա բնավորության առանձնահատկությունն էր, երբ վանականություն ընդուն-

նեց. «Դեռ երիտասարդ տարիներին, – ասում է նա իր «Նոստովանանքում», – ես երգում տվեցի, սակայն այդ կարճ տարիների ընթացքում ես չարախոս էի, գժտեցնում էի ուրիշներին, վիճաբանում էի հարևաններիս հետ, նախանձում էի, տարօրինակ մարդկանց հանդեպ անմարդկային էի, ընկերներիս նկատմամբ դաժան էի, աղքատների հետ կոպիտ էի վարվում, անկարևոր բաների պատճառով վեճերի մեջ էի մտնում, անխոհեմ էի վարվում, աղտեղի մտահղացումների և անառակ մտքերի էի տրվում նույնիսկ ոչ մարմնական գրգռվածության ժամանակ»: Իսկ երիտասարդ, դեռ անհաս խելքի հարցախուզությունը, որը ջանում էր ըմբռնել այն, ինչն իր ուժերից վեր էր, կամ երիտասարդական թեթևամտությունը նրան որոշ կասկածների հանգեցրին Աստծո նախախնամության վերաբերյալ: «Պատանության օրերին, երբ ես դեռ աշխարհիկ կյանքով էի ապրում, թշնամին հարձակվում էր ինձ վրա, այդ ժամանակ իմ պատանությունը ինձ համարյա թե հավատացրել էր, որ կյանքում մեզ հետ կատարվող ամեն բան պատահական է: Ինչպես անդեկ նավը, չնայած որ նավավարը կանգնած է նա-

վախելին, հետ է ընթանում կամ բնավ տեղից չի շարժվում, իսկ երբեմն էլ խորտակվում է, եթե հրեշտակը կամ մարդը նրան օգնություն չի հասնում. այդպես էր լինում նաև ինձ հետ»:

Բայց Աստծո նախախնամությունը տատանվող պատանուն անխրատ չթողեց, և հետագա իրադարձությունները, որոնց մասին ինքը՝ Եփրեմն է պատմում մեծ վշտով, նրա համար խրատական դաս եղան Աստծո նախախնամության մասին և նախապատրաստեցին նրա անցումը նոր ապրելակերպի: Մի անգամ՝ ծնողների հրահանգով քաղաքից դուրս ուղևորվելիս, Եփրեմն ուշացավ և անտառում մնաց հովվի հետ գիշերելու: Գիշերով գայլերն հարձակվեցին հոտի վրա և ոչխարներին պատառոտեցին: Երբ հովիվը հոտի տերերին հայտնեց այդ մասին, նրանք չհավատացին և Եփրեմին մեղադրեցին, թե իբր նա գողերի է բերել, որոնք էլ հենց հափշտակել են ոչխարները: Եփրեմը կանգնեց դատավորի առաջ. «Ես արդարանում էի, – ասում է նա՝ պատմելով, թե ինչ է կատարվել: Ինձանից հետո բերեցին ևս մեկին, ով բռնվել էր մի կնոջ հետ շնանալիս, իսկ վերջինս փա-

խել ու թաքնվել էր: Դատավորը, ընդհատելով գործի քննությունը, երկուսիս միասին բանտ ուղարկեց: Բանտարկության մեջ մենք գտանք մի հողագործի, որ կալանատուն էր բերվել սպանության համար: Բայց ինձ հետ բերվածը շնացող չէր, և հողագործն էլ՝ մարդասպան, ինչպես ես՝ ոչխարների հափշտակիչ: Մինչդեռ մշակի գործով պահպանության տակ էր առնված մեռածի մարմինը, իմ գործով՝ հովիվը, իսկ շնացողի գործով՝ մեղավոր կնոջ ամուսինը. այդ պատճառով նրանց պահում էին մեկ այլ տան մեջ:

Այնտեղ յոթ օր անցկացնելուց հետո՝ ութերորդ օրը, երազում տեսա, որ ինչ-որ մեկն ինձ ասում է. «Բարեպա՛շտ եղիր և կհասկանաս Նախախնամությունը. մի՛տք արա, թե ինչի՞ մասին էիր դու մտածում և ի՞նչ էիր անում և քո օրինակով կհասկանաս, որ այդ մարդիկ տառապում են ոչ անարդարացիորեն, բայց պատժից չեն խուսափի նաև մեղավորները»: Այդպես, արթնանալով ես սկսեցի մտորել տեսիլքի մասին, և, փնտրելով իմ զանցանքը՝ հիշեցի, որ մի անգամ, լինելով այդ գյուղի դաշտում, գիշերվա կեսին չար մտադրություններ էս դուրս քշեցի փարախից

մի աղքատ օտարականի կովը: Կովը ցրտից և հանգիստ չգտնելուց ուժասպառ էր եղել, այդտեղ գազանը վրա էր հասել և քրքրել էր նրան: Հենց որ ինձ հետ կալանավորվածներին պատմեցի այդ երազը և իմ մեղքը, նրանք, հետևելով իմ օրինակին, սկսեցին պատմել իրենց հետ կատարվածը, շինականը, որ տեսել էր գետում խեղդվող մի մարդու, և կարող էր նրան օգնել, սակայն չէր օգնել, իսկ քաղաքաբնակը՝ այն մասին, որ միացել էր մի կնոջ մեղադրողներին, ում զրպարտել էին անհավատարմության մեջ. «Այդ կինը, – ասում էր նա, – այրի էր, եղբայրները, նրա վրա այդ մեղքը բարդելով, նրան զրկեցին հայրական ժառանգությունից՝ ըստ պայմանավորվածություն դրա մի մասը տալով ինձ»: Այդ պատմությունների ընթացքում ես տրտմության մեջ ընկա, քանզի դրանում ինչ-որ ակնհայտ հատուցում կար: Եվ եթե այդ ամենը պատահեր միայն ինձ հետ, կարելի էր ասել, որ այդ ամենը ինձ հետ պատահել էր մարդկային պատճառներով: Բայց մեզ երեքիս էլ բաժին էր ընկել միևնույն ճակատագիրը: Եվ ուրեմն, կա ոմն չորրորդը՝ վրիժառուն, ով ազգակից չէ զուր անարգանք կրողներին և

ծանոթ չէ մեզ, որովհետև ո՛չ ես, ո՛չ նրանք երբեք չէինք տեսել նրան, քանի որ կալանավորվածներին նկարագրել էի երազիս մեջ ինձ հայտնվածի արտաքինը:

Մի ուրիշ անգամ քնեցի և տեսա, որ նույն մարդը ասում է ինձ. «Վաղը կտեսնեք նրանց, ում պատճառով անարգանք եք կրում, և կազատվեք ձեզ վրա բարդված զրպարտանքից»:

Հաջորդ օրն իրոք Եփրեմի և մյուս բանտակիցների հետ քաղաքապետին ներկայացվեցին զանազան ոճիրներում մեղադրվող ևս հինգ հոգի: Դրանցից երկուսը զրպարտյալ այրիի եղբայրներն էին, որ զնդան էին նետվել իրենց գործած այլ ոճիրների համար, իսկ մնացյալ երեքը մեղավոր չէին այն բանի համար, ինչի համար զնդան էին նետվել, բայց, ինչպես իրենք խոստովանեցին Եփրեմին, մեղավոր էին սուտ վկայություն տալու համար: Այդ բոլոր գործերի քննությունը չէր կարող շուտ ավարտվել: Եվ այդ ժամանակ մի այլ դատավոր նշանակվեց: Նոր դատավորը ծանոթ էր Եփրեմի ծնողներին և իրեն, բայց Եփրեմը նրան ճանաչեց ոչ միանգամից: Այն օրվա նախօրեին, երբ բոլոր կալանավորները պետք է դատի կանգնեին նրա առջև, Եփրեմը

դարձյալ տեսավ երազի մեջ խոսողին. «Հաջորդ օրը դու կազատվես, իսկ մյուսներն արդարացի դատաստանի կարժանան, ուրեմն հավատացյա՛լ եղիր և ավետի՛ր Աստծո նախախնամովթյունը»։ Իսկապես, հաջորդ օրը դատավորը քննեց մեղադրյալների գործերը, սխալմամբ կամ չարամտովթյամբ զնդան նետվածներին անմեղ ճանաչեց, իսկ հանցանքի մեջ բռնվածներին կամ չարագործովթյունը խոստովանողներին տվեց գազաններին կեր։

«Դատավորը, – ասում է Եփրեմը, – հրամայեց ինձ էլ մեջտեղ բերել։ Չնայած նրան ինձ հետ կապում էր ազգակցովթյունը, սակայն նա սկսեց տեղեկանալ գործին ըստ կարգի և փորձում էր ինձնից իմանալ, թե ինչպես էր եղել ոչխարների հետ կապված պատմովթյունը։ Ես ճշմարտովթյունն ասացի, ինչպես որ եղել էր։ Ճանաչելով ինձ ձայնից և անունից՝ նա հրամայեց ծեծ տալ հովվին՝ ճշմարտովթյունն իմանալու և չասելու համար, իսկ ինձ ազատեց մեղադրանքից յոթանասուն օր անց։ Իսկ դատավորի հետ ծանոթովթյունը նրանից էր, որ ծնողներս ապրում էին քաղաքից դուրս, այդ մարդուն դաստիարակողների հետ, և ես էլ էի ժամանակ առ ժա-

մանակ մնում նրա մոտ... Դրանից հետո՝ հենց նույն գիշերը, տեսնում եմ նույն այրին, և նա ինձ ասում է. «Դարձի՛ր քո տեղը և ապաշխարի՛ր խաբեովթյան համար՝ համոզվելով, որ կա ամենայն ինչ հսկող Աչք»։ Եվ ինձ խիստ սպառնալիքներ տալով՝ նա հեռացավ. այդ ժամանակվանից ցայսօր նրան չեմ տեսել»։

Եփրեմը հավատարիմ մնաց երազի մեջ հայտնվածի խրատին։ Դեռևս զնդանում երգվելով իր ողջ կյանքը նվիրել ապաշխարանքին՝ նա շուտով թողեց աշխարհիկ կյանքն ու հեռացավ մերձակա լեռները՝ ճգնակյացների մոտ։ Ի դեպ, հասուն տարիքում էլ նա չէր դադարում ապաշխարել պատանովթյան տարիներին գործած մեղքերի համար և ուրիշներին էլ խնդրում էր աղոթել Աստծուն՝ ներման համար։

Ճգնակեցական կյանքը վաղ տարածում գտավ մծբինեցի քրիստոնյաների շրջանում։ Մերձակա սարերում (Սինջար) ճգնավորների համար կացարան էին ծառայում այրերը, հողում ազատ աճող բույսերն ու պտուղները նրանց կերակուր էին դառնում, նրանց մշտական զբաղմունքը աղոթքներն էին և Աստված-իմացովթյան ճգնովթյունները, որոնք չէին

ընդհատվում աշխարհիկ աղմուկով և ունայն գործերով: Երանելի Անտոնիոս Առնի աշակերտը կամ Եվգենիոսը Եգիպտոսի անապատներից ճգնակեցական կյանքի առաջին օրինակը բերեց Հռոմեական կայսրության ծայրագույն արևելք և շուտով այստեղ գտավ շատ ու շատ հետևորդների: Դրանց թվին էր պատկանում և Սուրբ Հակոբը՝ Մծբինի եպիսկոպոսը, ով նույնքան հայտնի էր իր ճգնակեցական սխրանքներով և հրաշքներով, որքան և քրիստոնեական ճշմարիտ հավատի տարածման եռանդով: Պարսկաստանում քրիստոնեությունից տարածման համար նա ուղևորվում է այդ երկիր, որը սահմանակից էր Մծբինին, իսկ ուղղափառներին արիոսականների դիվային ուսմունքից պաշտպանելու համար գրում է հերքումներ, որոնց հղումներ է անում սուրբ Աթանաս Ալեքսանդրացին: Արդարակյաց Եփրեմը շուտով դառնում է սուրբ Հակոբի աշակերտը և անապատական կյանքի կանոնների խիստ իրագործողը, որոնք սրբազանը սրբորեն էր պահպանում նաև աղմկոտ մեծ քաղաքում:

Զնդանում կալանավերու դժբախտ պատահարը մեծ փոփոխություն կատարեց Եփրեմի

կյանքում: Զերմեռանդ, բայց զայրացկոտ, հետաքրքրասեր, բայց կասկածներից տարուբերվող պատանու փոխարեն Եփրեմը դառնում է խոնարհ և մորմոքուն անապատական, որ օրնիբուն ողբում է իր մեղքերը և երկյուղածությամբ ուսանում Տիրոջ օրենքը: Սուրբ Հակոբի օրինակը լրացրեց նրա արժանի աշակերտի հոգևոր կրթության պակասը: Եվ արդեն այդ ժամանակ մենք Եփրեմի մեջ տեսնում ենք կատարյալ հնազանդությունը նախախնամության ուղիներին և ճշմարիտ ճգնակեցական հաստատականությունը գայթակղությունները հաղթահարելիս:

Մծբինի եկեղեցու կղերականների մեջ կար Եփրեմ անունով ևս մի մարդ: Երկյուղելով Մծբինի երևելի քաղաքացիներից մեկի աղճկա հետ իր հանցավոր կապի մերկացումից՝ նա սովորեցրեց իր մեղսակցուհուն, որ երբ հանցանքի հետքերը ակնառու դառնան, նա մեղքը բարդի եպիսկոպոսի աշակերտ Եփրեմի վրա, ով իր բարեպաշտության համար արդեն վաստակել էր շատերի սերն ու հարգանքը: Աղջիկն այդպես էլ վարվեց: Երբ արդեն անկարելի էր թաքցնել պատվազրկությունը, նա որպես իր խայտառակության մեղավորի, իր

ծնողներին մատնացուցյց արեց արդարակյաց Եփրեմին: Շուտով այդ լուրը տարածվեց քաղաքով մեկ, և աղջկա ծնողները շատ ուրիշների հետ դիմեցին եպիսկոպոսին՝ մեղադրելով նրա աշակերտին: Սուրբ ծերունին, չկասկածելով աշակերտի անկեղծ բարեպաշտությանը, չցանկացավ մեղադրանքին հավատալ առանց Եփրեմի խոստովանանքի: Եփրեմը, որ արդեն անձնական փորձով սովորել էր չընդդիմանալ գայթակղություններ հարուցող Նախախնամության սահմանած ճակատագրին, ընկավ եպիսկոպոսի ոտքերի առաջ և մորմոքուն ձայնով ասաց. «Իսկապես, հա՛յր իմ, ես մեղք եմ գործել»: Դրանից անմիջապես հետո աղջկա հայրը եպիսկոպոսի մոտ բերեց մանկանը և կղերականների ողջ ժողովի ներկայությամբ մանկանը հանձնեց Եփրեմին՝ ասելով. «Ահա՛ քո որդին, դաստիարակի՛ր նրան»: Ասես իրոք մեղավոր լինեք, նա դառն արցունքներով վերցրեց մանկանն ու ամենքի ներկայությամբ ասաց. «Հայրե՛ր իմ, ես իրոք որ մեղք եմ գործել»: Սակայն Աստված, փորձելով Եփրեմի հնազանդությունն ու հաստատակամությունը գայթակղությունները հաղթահարելիս, նրան միաժամանակ նաև միջոց-

ներ ընձեռեց՝ գայթակղությունից նրա հնազանդությունն արժանի փառքով դուրս գալու համար: Նա անտրտունջ տառապյալին ներչնչեց, որ իր առաքինությունը մարդկանց աչքերում չպետք է մնա մեղքի անարգանքով մթագնած, և հենց ինքը նպաստեց մեղավորի մերկացմանը: Մի անգամ, երբ ժողովուրդը խմբվել էր տաճարում ժամերգություն համար, եկավ և Եփրեմը մանկան հետ և եպիսկոպոսից բեմ բարձրանալու իրավունք ստանալով՝ մանկանը վեր բարձրացրեց և նրան ասաց. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով երգվեցնում եմ քեզ, հայտնի՛ր ճշմարտությունը, ասա՛՜ ո՞վ է քո հայրը»: Մանուկը պատասխանեց. «Եփրեմը՝ եկեղեցու տնտեսը»: Երիցս այդ ասելով՝ մանուկը մահացավ: Այդժամ արցունքն աչքերին արդարակյաց Եփրեմից ներողություն էին խնդրում բոլոր նրան մեղադրողները, և այդ ժամանակվանից նրա սրբակյացության փառքն ավելի տարածվեց:

Սուրբ Հակոբը, ով ամենից լավ գիտեր իր աշակերտի մեծ արժանիքների մասին, նրան իր հետ տարավ Նիկիա՝ Առաջին տիեզերական ժողովին մասնակցելու համար (325թ.), որի հավատո հանգանակի աստվածիմաստուն շա-

րադրանքը վիճակվեց պաշտպանել Եփրեմին՝ ընդդեմ սուտ ուսուցիչների: Մոտ տասներկու թե տասներեք տարի նա շարունակ օգտվում էր իր եպիսկոպոսի խրատներից: Նրա ղեկավարությամբ վարժվելով վանականի վարքին և սխրանքներին, խստապահանջ պահքով և աղոթքներով մաքրելով իր հոգին՝ նա միաժամանակ ջանադրորեն ուսումնասիրում էր Աստծո խոսքը: Թե նա որքան խորն էր գիտակցում քրիստոնեական կյանքի և Աստծո խոսքի իմացություն միջև եղած կապը, ցույց է տալիս նրա խրատներից մեկը. «Բնությունը, – ասում է նա, – հողն է, որը մշակում ենք, արտադրանքը երկրագործն է, իսկ Աստվածային գրքերը՝ խորհրդատուները և ուսուցիչներն են, որոնք մեր երկրագործին ուսուցանում են, թե ո՛ր արատավոր ունակություններն արմատախիլ անի և ո՛ր առաքինություններն աճեցնի: Որքան էլ մեր երկրագործը սթափ և ջերմեռանդ լինի, միևնույն է, առանց Աստվածային Գրքերի ուսմունքի նա ո՛չ ուժեղ կլինի, ո՛չ էլ բանիմաց, քանզի Սուրբ Գրքի օրինադրությունը նրան ուժ և ըմբռնողություն է պարգևում, իր սեփական ճյուղերից տալով նաև պտղաբեր առաքի-

նություններ, որպեսզի դրանք պատվաստի բնություն ծառին. հավատը՝ անհավատությունը, հույսը՝ անհուսությունը, սերը՝ ատելությունը, գիտելիքը՝ անգիտությունը, ջանասիրությունը՝ անփութաջանությունը, փառքն ու գովաբանությունը՝ անփառունակությունը, անմահությունը՝ մահացությունը, Աստվածությունը՝ մարդկությունը»:

Սրբակյաց Եփրեմն իր ուսուցչից հեռացավ միայն այն ժամանակ, երբ նա լքեց աշխարհը: Մծբինի հոգևոր հովվի վերջին բարեգործությունն իր քաղաքին, որը կատարվեց պարսից Շապուհ Երկրորդ արքայի արշավանքի ժամանակ, ժողովրդի հիշողության մեջ նույնպես վերագրվում է Եփրեմին՝ սուրբ Հակոբի աշակերտին: Պարսից արքան, լսելով Կոստանդին կայսեր վախճանի մասին (337 թ.) և ենթադրելով, որ նրա ժառանգորդները թուլացել են, մտադրվեց գրավել սահմանային Մծբին ամրոց-քաղաքը: Մոտ երկու ամիս տևեց պաշարումը. բնակիչներն սկսեցին քաղաքը պաշտպանելու հույսը կորցնել: Սուրբ Հակոբն իր աղոթքներով և կարգադրություններով ոգևորում էր ամենքին: Իսկ նրա աշակերտ Եփրեմը, ստանալով եպիսկո-

պոսի օրհնանքը, ելավ քաղաքի պարսպի վրա և իր աղոթքով պարսից բանակի վրա բազում միջատներ բերեց: Պարսից ճամբարում ամեն բան իրար խառնվեց: Ե՛վ կենդանիները, և՛ մարդիկ չգիտեին, թե ինչպես պաշտպանվեին բազում թշնամիների հարձակումներից: Շապուհն ստիպված եղավ անմիջապես վերացնել պաշարումը և առանց հաջողության վերադառնալ իր երկիրը:

Սուրբ Հակոբի մահվանից հետո (338 թ.) Եփրեմն այցելեց իր մոր հայրենիքը՝ Ամիգ քաղաքը, որը նույնպես Միջագետքում էր գտնվում, և այնտեղ կարճատև հանգրվանելուց հետո ճամփորդություն ձեռնարկեց դեպի Եդեսիա: «Նրան այնտեղ ձգում էր, – ասում է սուրբ Գրիգոր Նյուսացին, – այնտեղի սրբությունը ծնրադրելու ցանկությունը, իսկ ամենից առաջ՝ ցանկությունը գտնելու մի գիտուն այրի, ումից նա կարող էր ստանալ, կամ ում կարող էր հաղորդել իմացություն պտուղը»:

Եդեսիան քրիստոնեության տարեգրություններում փառաբանված էր հրեաներից հալածյալ մեր Տեր Հիսուս Քրիստոսին այնտեղ ընդունելու՝ այդ քաղաքի իշխան Աբգա-

րի ջանադրություն: Այնտեղից հայտնի դարձավ Քրիստոսի անձեռակերտ պատկերը: Այնտեղ էր թաղված հենց ինքը՝ ավետաբեր Թադեոս առաքյալը, ով հավատով լուսավորեց Աբգարին: Քրիստոնեական հավատն այստեղ առավել շատ հետևորդներ ունեւր, քան Հռոմեական կայսրության շատ այլ քաղաքներում, և Դիոկղետիանոսի օրոք՝ քրիստոնյաների վերջին հալածանքների ժամանակ, նրանք ապաստան էին փնտրում Եդեսիայում, քանի որ կայսրության մնացյալ երկրամասերում նրանց հալածում էին: Եդեսիայի բարեպաշտության փառքն էր վկայում նաև այն, որ այդ քաղաքի մերձակայքում ծաղկում էր վանական կյանքը:

Եդեսիան Միջագետքի քաղաքների մեջ հռչակված էր նաև իր լուսավորություն: Չգիտենք, թե հատկապես ո՞ր գիտուն մարդուն էր ուզում այնտեղ տեսնել սուրբ Եփրեմը և արդյո՞ք գտավ նրան, բայց նա կարող էր այնտեղ հանդիպել մարդկանց, ովքեր ծանոթ էին և՛ Սուրբ Գրքին, և՛ զանազան գիտությունների: Նրա՝ Եդեսիա ժամանելուց ոչ շատ առաջ այնտեղից հեռացել էր ոմն Եվսեբիոս, ով հռչակված էր իր կրթվածությամբ և

Հետագայում ղեկավարում էր Եղեսիայի ամբիոնը:

Եվսեբիոսը սերում էր Եղեսիայի մի ազնվական ընտանիքից: Երիտասարդ տարիներին, ըստ հայրենական ավանդույթի, ինչպես գրում է Սոգոմենոսը, նա ուսումնասիրում էր Սուրբ Գրքը, իսկ դրանից հետո այցելելով տեղի ուսուցիչներին՝ նաև այն գիտությունները, որոնք դասավանդվում էին հելլենացիների մոտ: Արդարակյաց Եփրեմը ցանկություն չունեի ծանոթանալու հելլենական, հեթանոսական իմաստությունը. նրա մշտական հոգևոր պարապմունքների նպատակը Սուրբ Գրքի ուսումնասիրությունն էր:

Մոտենալով քաղաքին՝ Եփրեմն Աստուծոց խնդրեց, որ Նա իրեն հանդիպեցնի մի մարդու, ում հետ իր հոգու օգտավետության համար կարողանա զրուցել Սուրբ Գրքի թեմաներով: Սակայն քաղաքի դարպասների մոտ նա հանդիպեց մի կնոջ, ում արտաքինը մատնում էր նրա չարակամ կյանքն ու ամոթալի վարքը:

Այդ հանդիպումից շփոթահար եղած՝ Եփրեմը մտածեց, որ Աստված չանսաց իր աղոթքներին: Այդ միջոցին նրան ընդառաջ ե-

կող կինը կանգնեց և սևեռուն նայեց նրան: Դա Եփրեմին ստիպեց դիմել նրան այսպիսի կշտամբիչ խոսքերով. «Ինչո՞ւ դու, ամոթը մոռացած, գլուխդ չես կախում և գետնին չես նայում, ինչպես վայել է ամոթխած կնոջը»: Կինը պատասխանեց, որ ինքը պետք է նայի նրան, քանի որ կինը տղամարդուց է վերցված, իսկ նա պետք է ոչ թե իրեն նայի, այլ գետնին, քանզի նա՝ որպես այր, հողից է վերցված: Եփրեմը զարմացավ կնոջ պատասխանի վրա և փառաբանեց Աստուծուն, որ մեղավոր կնոջ շուրթերով իրեն խրատեց և ուսուցանեց, որ պետք է քամահրել նաև մեղավորներին:

Եփրեմը բնակություն հաստատեց քաղաքում: Խեղճ ճամփորդը շուտով պիտի կրեր իր վիճակի բոլոր անհարմարությունները խառնիճաղանջ ամբոխի մեջ, սակայն նա կարողանում էր ամեն ինչից իր համար օգուտ քաղել և ամեն ինչ ծառայեցնել ի բարօրություն ուրիշների: Ստիպված լինելով սեփական ձեռքերով իր հացը վաստակել՝ նա նվաստացուցիչ չհամարեց աշխատանքի անցնել բաղնիքի տիրոջ մոտ: Այն տան հարևանությունը, որտեղ նա բնակվում էր, մի անբարո կին էր

ապրում, ով մի անգամ Եփրեմի հետ անվայել խոսակցություն մեջ մտավ՝ կամենալով նրան մեղքի մեջ գցել: Կնոջ առաջին հանցափորձից հետո Եփրեմի խիստ խոսքերը միայն ուժգնացրին այդ կնոջ անամոթությունը: Բայց Եփրեմը, առաջարկելով մեղք գործել քաղաքի մեջտեղում՝ բոլորի աչքի առաջ, այդ կնոջը հենց դրանով հմտորեն ստիպեց ասել, որ նա մարդկանցից ամաչում է, և օգտվեց նրա պատասխանից, որպեսզի նրան դարձի բերի դեպի առաքինություն ուղին, և խիստ խոսքերով կարողացավ նրա սրտում արթնացնել ամոթը և Աստծո երկյուղը: «Եթե մենք, – ասաց նա, – ամաչում ենք մարդկանցից, ապա մի՞թե առավել ևս չպետք է ամաչենք և երկյուղենք Աստծուց, Ում հայտնի են նաև մարդկանց թաքուն մտքերը, և Ով իր ժամանակին կգա դատելու ամենքին և ըստ արժանվույն հատուցելու բոլորին»: Այդ խոսքերից ազդված՝ կինը արդարակյացին խնդրեց իրեն դարձի բերել դեպի առաքինություն ուղին և Եփրեմի խորհրդով հեռացավ մոտակա վանքերից մեկը: Եփրեմն այդպես էր ազդում նաև ուրիշների վրա:

Քաղաքում դեռևս կային հեթանոսներ: Ա-

ղոթքից և պարապմունքներից հետո ողջ ազատ ժամանակը նա տրամադրում էր հեթանոսների հետ զրուցելուն՝ հոգ տանելով դեպի փրկություն ճանապարհը նրանց դարձի բերելու մասին:

Այդպիսի աշխատանքներից մեկի ժամանակ Եփրեմին մի բարեպաշտ ծեր վանական պատահեց քաղաքի մոտակա վանքից: Լսելով նրա զրույցը հեթանոսների հետ՝ վանականը զարմացավ՝ այդպիսի վայրում և այդպիսի մարդկանց մեջ գտնելով մի ճշմարիտ քրիստոնյա իմաստունի, և որոշ դառնություն հարցրեց Եփրեմին. «Որտեղի՞ց ես դու, որդյա՛կ»՝ ասես ցույց տալով, որ նա այդ մեղավոր և անհավատ ամբոխի մեջ չպետք է լինի: Եփրեմը նրան պատմեց իր կյանքի պատմությունը: «Ուրեմն ինչո՞ւ, – ասաց նրան վանականը, – քրիստոնյա լինելով՝ մնում ես հեթանոսների ամբոխի մեջ, թե՞ մտադիր ես աշխարհիկ կյանքով ապրել»: Եփրեմը բացասաբար պատասխանեց, և վանականը նրան խորհուրդ տվեց մտնել Եդեսիայի մոտակա վանքերից մեկը, որը գործում էր մի որևէ իմաստուն վանականի առաջնորդությամբ: Եփրեմը հայտարարեց, որ վանական կյանքն իր

միակ ցանկությունն է, և հետևեց վանակա-  
նին ու սարերը բարձրացավ, որտեղ վանա-  
կաններ էին բնակվում:

Եդեսիան, ինչպես և Մծբինը, ուներ իր մեծ  
ճգնավորները, որոնց գլխավոր զբաղմունքը  
աղոթքն էր, սաղմոսերգությունը և Աստծուն  
փառաբանելը, ովքեր, բացի քարանձավնե-  
րից, այլ կացարան չունեին, սովորական կե-  
րակուր էլ չէին օգտագործում, այլ սնվում  
էին միայն բույսերով: Անապատասեր Եփրե-  
մի հոգին շատ շուտով մտերմացավ այդպիսի  
մարդկանց հետ: Նա ճգնակյացների մեջ  
գտավ մի ընկեր՝ Հուլիանոսին. երկուսի խցե-  
րը իրար մոտ էին, բայց նրանք ավելի շատ  
մոտ էին հոգով. երկուսն էլ մորմոքուն,  
երկուսն էլ սխրանքների մեջ աննկուն: Գորո-  
վաշարժ էր այն ակնածալի մորմոքը, որով  
կործանման ուղուց Աստծո վերին օգնու-  
թյամբ դարձի եկած այդ ծեր վանականը կար-  
գում էր Աստվածաշունչը: «Մի անգամ, – ա-  
սում է երանելի Եփրեմը, – մտնելով Հուլիա-  
նոսի խուցը՝ տեսա, որ նրա գրքերը ոչ միայն  
թաց են, այլև այնտեղ, որտեղ պատահում են  
Աստված, Տեր, Հիսուս Քրիստոս և Փրկիչ բա-  
ռերը, տառերը համարյա ջնջված են: Ես

հարցրի նրան. «Ո՞վ է այսպես փչացրել գրքե-  
րը»: «Քեզանից ոչինչ չեմ թաքցնի, – պա-  
տասխանեց Հուլիանոսը:– Երբ մեղավոր կի-  
նը մոտեցավ Փրկչին, նա արցունքներով  
լվաց Նրա ոտքերը և իր գլխի վարսերով  
սրբեց դրանք, այդպես էլ ես, որտեղ գտնում  
եմ գրված իմ Աստծու անունը՝ ուռգում եմ  
արցունքներով, որպեսզի Նրանից ստանամ  
իմ մեղքերի ներումը»: «Աստված բարեգութ  
և ողորմած է, – ասացի ես նրան, – նա կըն-  
դունի քո վայելուչ բարեհաճությունը, բայց,  
– ընկերաբար հավելեցի ես, – խնդրում եմ  
պահպանել գրքերը»:

Եփրեմն ինքն էլ այրի մենության մեջ չէր  
դադարում Աստծո խոսքն ուսանելուց՝ իմաս-  
տություն և գթասրտություն քաղելով դրա-  
նից: Սակայն Եփրեմի իմացության գանձերը  
նրա խոնարհության պատճառով մեծ մա-  
սամբ ուրիշներից ծածուկ էին մնում: Շուտով  
հենց նույն խորաթափանց ծեր վանականը, ով  
Եփրեմին բերել էր եղեսացի վանականների  
մոտ, հանձին նրա բացահայտեց աստվածա-  
ռաք ուսուցչի: Ծերունին միաբանությանը  
հայտնեց, որ մի անգամ՝ գիշերն իր այրից  
դուրս գալով, նա տեսավ երկնային լույսով

չողարձակող հրեշտակների դասը: Նրանցից մեկը ձեռքին բռնել էր մի մեծ գիրք կամ թղթագլան՝ դրսից և ներսից գրված, և, դիմելով մյուս հրեշտակներին՝ ասաց. «Ի՞նչ եք կարծում, ես ո՞ւմ կտամ այս գիրքը»: Եվ երբ հրեշտակներից շատերը մատնացույց արեցին Հուլիանոսին՝ հավանաբար այն միջագետքի ճգնավորին, ով արիոսականների տիրապետության օրոք Անտիոքի ուղղափառների նեցուկն էր, իսկ մյուսները՝ ուրիշների, հրեշտակն ասաց. «Այժմ ոչ ոք այնքան արժանի չէ այս գրքին, որքան Եփրեմ Ասորին» և մեկեն նրա շուրթերին դրեց այդ խորհրդավոր գիրքը: Գուցե հենց այդ տեսիլքն էլ, որը որոշ կողմերով հիշեցնում է Եգեկիելին հայտնված տեսիլքը (Եգեկ. 2, 9-3, 2), Եփրեմին պարգևեց Ասորացի մարգարե անունը: Այն Եփրեմին կոչեց կատարելու բազում հանրօգուտ աշխատանքներ:

Եփրեմն սկսեց գրել Մովսեսի Հնգամատյանի մեկնությունը: Արդեն գրված էր Ծննդոց գրքի մեկնությունը, երբ նրան այցելեց նույն ծերունին: Կարգալով գրվածը և Եփրեմի ստեղծագործության մեջ տեսնելով Աստծո շնորհի առատությունը, որն իջել էր

նրա վրա, ծերունին զարմանք կտրեց և ավելի խորը համոզվեց, որ նրա մասին իրեն հայտնված տեսիլքը ճշմարիտ էր: Եփրեմից վերցնելով ձեռագիրը՝ ծեր վանականը այն ցույց տվեց Եդեսիայի կղերականներին և քաղաքի ուսյալ անձանց: Բոլորը ծերունու հետ մեկտեղ զարմացած էին գրողի իմաստության վրա և, այդ աշխատություն «մեղավորը» հենց իրեն՝ ծերունուն համարելով, շնորհակալություն հայտնեցին նրան: Ծեր վանականը ստիպված էր հայտնել իրական գրողի անունը և, կամենալով ամենքին հավատացնել, որ իր խոսքերը ճշմարտացի են, պատմեց, թե ինքը ինչ տեսիլք է տեսել Եփրեմի մասին: Դա ընդհանուր ուշադրություն գրավեց, մինչ այդ անհայտ վանականին սկսեցին մարդիկ այցելել:

Հեղաբարո վանականի համար փառքը ծանր էր. մենություն սերը չէր համակերպվում այցելուների բազմամարդուության հետ, և Եփրեմը որոշեց թողնել իր այրն ու թաքնվել ոչ հեռու գտնվող լեռան վրա՝ խիտ անտառում: Բայց Աստծուն հաճո չէր նրա փախուստը ժողովրդից, որին նա պետք էր: Ճանապարհին նրան հայտնվեց հրեշտակը և ա-

սաց. «Տես, որ քո նկատմամբ կիրառելի չլինի Սուրբ Գրքում ասվածը. Եփրեմը մարգված երից է, որ սիրում է հակառակությունը (Օս. 10, 11): Եվ ճրագը վառելով կաթսայի տակ չեմ դնում, այլ՝ աշտանակի վրա (Մատթ. 5, 15)»: Աստծո կամքին հլու՝ Եփրեմը ոչ միայն վերադարձավ իր տեղը, այլև սկսեց այցելել քաղաք: Նրա հոգևոր փորձառությունն ու բարեպաշտ փոլթաջանությունը նրան դարձրին վանականների դաստիարակը, իսկ Եկեղեցու կարիքները՝ եզեսացի քահանաների օգնականը, հատկապես հերետիկոսների դեմ մղվող պայքարում:

«Հավատը բարի միտք է ծնում, իսկ բարի միտքը կենդանի ջրի գետ է: Ով ձեռք է բերում այն՝ կլցվի նրա ջրերով»: Երանելի Եփրեմի այս խոսքերը արդարացիորեն կարող են վերաբերել հենց իրեն: Աստծո խոսքի կենդանի ջրով լցված նրա հոգին զեղվում էր գորովագուլ խրատների անկասելի հոսքով: Զերմացած լինելով կենդանի զգացողություններ և բխելով Աստծո բարեգլխություններ լուսավորված սրտի լիությունից՝ նրա խոսքերը լեցուն էին հոգևոր օժություններ: Նրա շուրթերին զարմանալիորեն պտղաբերում էին ամենահամոզիչ խրատները, հենց իր և ուրիշների հուզիչ

մերկացումները, իմաստուն կանոններն ու խորհուրդները, և նրա ակնածալի միտքը հաճախ հանկարծ անսպասելի թուխքով համբառնում էր դեպի հավերժ բարեգուլ Աստված, որպեսզի խոստովանի նրա անսահման սիրո փառքը կամ նրանից մեղքերի թողություն հայցի: Աստվածաշնչական օրինակներն ու խոսքերը, վանականի կյանքի և փորձի օրինակները, բնություն թագավորություններից քաղված առականներն ու համեմատությունները՝ ամեն բան պատրաստ էր և ինքնաբերաբար էր հայտնվում նրա պարզ, անպաճույճ զրույցներում:

Վանականների շրջանում Եփրեմը ամենից հաճախ զրուցում էր վանականների պարտականությունների մասին: Ոմանց համար հատուկ խրատներ էր գրում, պատասխաններ էր տալիս հարցումներին, նրանից դասեր էին առնում և՛ նորընծա վանականները, և՛ ավագերեցները: Նկատելով վանական կյանքի խիստ կանոնների թուլացումը՝ նա ջանում էր վերականգնել դրանց վաղեմի մաքրությունը: Հասած լինելով հոգևոր կատարելության բարձունքին՝ նա կամենում էր ամենքին հասցնել այնտեղ: Օրինակ՝ մի զրույցում, որը

նա, հավանաբար, անցկացրել էր եղեսացի վանականների մեջ հայտնվելու իր առաջին տարիներին, հիշեցնելով երկրին հասած պատուհասների՝ երկրաշարժերի և պարսիկների գործած ավերածությունների մասին՝ նա իր ունկնդիրներին կոչ էր անում վերադաստիարակվել և վկայաբերում էր վաղնջական վսեմ օրինակները: «Մեր հայրերը, – սրտացավով թյամբ ասում էր նա, – որպես լուսատուներ լուսավորում էին ողջ երկիրը, նրանց վսեմ ու մաքուր վարքի պատճառով անգամ թշնամիները դառնում էին նրանց հետևորդները... Իսկ մեր ուսմունքը, թողնելով ճշմարիտ ուղին, գնում է զառիթափերով և անհարթ տեղերով: Քանզի չկա մեկը, ով հանուն Աստծո թողնի իր ինչքը և հավերժական կյանքի համար հրաժարվի աշխարհից: Չկան ո՛չ խոնարհները, ո՛չ հեզերը, ո՛չ էլ խոհեմները: Ոչ ոք անտարբեր չի մնում վիրավորանքի նկատմամբ, ոչ ոք չի հանդուրժում չարախոսությունը... Երկիրը, հաճախ երկյուղելով Աստծո առաջ, տարուբերվում է մեր ոտքերի տակ՝ մեզ ահաբեկելու համար, սակայն մենք դրանից էլ չվախեցանք: Քաղաքներ են կործանվել և գյուղեր են դատարկվել Աստծո ցա-

սումից, բայց մենք դրանից էլ չերկյուղեցինք: Պարսիկներն ու բարբարոսները պատերազմներ հարուցեցին մեր դեմ և ավերեցին մեր երկիրը, որպեսզի մենք Աստծուց երկյուղելով՝ ապաշխարենք, սակայն դա էլ մեզ չփոխեց...»: Այդ նույն նպատակով, որպեսզի նախանձախնդրություն արթնացնի ընդօրինակելու առաջին անապատականներին, նա իր զրույցներում բազմիցս նկարագրում էր «վախճանված հայրերի» կանոններն ու վարքը:

Եփրեմին պակաս չէր հուզում նաև ուղղափառություն ճակատագրերը Եղեսիայի եկեղեցում, որը այդ քաղաքի և ամբիոնի նշանակությունը կարող էր ազդեցություն ունենալ նաև ողջ Միջագետքի վրա: Մինչ ուրիշ երկրներում տապալվել կամ թուլացել էին գնոստիկական (հեթանոսությունն ու քրիստոնեությունը հաշտեցնող) ուսմունքները, որոնք եկեղեցու մեջ խռովություններ էին հարուցում երկրորդ հարյուրամյակում, Եղեսիայում դեռևս մնում էր Բարդեժանի աղանդը, ով Վալենտինի և Մարկիոնի հետևորդն էր, բացի դրանից՝ կար նաև Մանիի կեղծ ուսմունքը, որը տարածվել էր Պարսկաստանից և իր հետքերն էր թողել Միջագետքում: Չոր-

րորդ դարում նրան սպառնում էր ժամանակի համընդհանուր հիվանդությունը՝ արիանոսականության վարակը, բայց արդեն հենց Միջագետքում ծնվել էին և այլ երկրներում տարածվել Առդիոսի և մեսալացիների մոլորությունները:

Բարդեծանը՝ եղեսացի գիտնականը, ով ապրում էր Օսրոյենեի իշխան Աբգարի՝ Մահանի որդու (152-187 թթ.) արքունիքում, հայտնի է մարդկանց բարոյական վիճակը մոլորակների ներգործությամբ բացատրող աստղագետների, նույնիսկ Մարկիոնի դեմ իր պայքարով, բայց դրա հետ մեկտեղ ինքն էլ քարոզում էր իր ուսմունքը երկու սկիզբների՝ Անհասանելի Աստծո և հավերժական նյութի մասին, Աստծուց բխած էոնների և դրանց համադրությունների մասին, դրանցով կառուցված աշխարհի և մարդու մասին, մարդու փրկության համար եկած էոններից մեկի՝ Քրիստոսի մասին՝ որպես տեսանելի, բայց ոչ նյութական, այլ երկնային մարմնի և այլն: Ժողովրդին իր կողմը գրավելու համար Բարդեծանը իր ուսմունքը շարադրում էր բանաստեղծական ձևով՝ գրավիչ լեզվով, սակայն իր հորինած չափով. ուստի նրա, ինչ-

պես նաև Աթենքում կրթություն ստացած նրա որդու՝ Հարմոնիայի երգերն այդ ուսմունքը տարածում էին նույնիսկ Միջագետքի սահնաններից դուրս և երկար ժամանակ արմատավորեցին նրա մոլորությունները:

Մոլորությունը ցրելու համար բավական էր դրան հակադրել ճշմարտությունը: Սակայն մոլորյալներին դեպի ճշմարտությունը դարձի բերելու համար Եփրեմն անհրաժեշտ էր համարում դրանք ներկայացնել այն նույն հաճելի ձևերով, որոնցով քողարկվում էր մոլորությունը: Ծճմարտության ջատագովի համար դժվար չէր յուրացնել Բարդեծանի ոտանավորի հասարակ տաղաչափությունը: Եփրեմի բնատուր հարուստ շնորհները և ոգու անսպառ խանդավառությունը, հորդ զգացմունքները, իր միտքը պայծառ և արտահայտիչ պատկերներով ներկայացնելու վարպետությունը, նույն մաքուր լեզուն, որով գրում էր Բարդեծանը, այդ ամենը ձեռնարկմանը հաջողություն էր խոստանում: Մնացյալը կլրացնեին ճշմարտությունը և բարեշնորհության ոգին, որը հորդում էր սուրբ բանաստեղծի բոլոր գրվածքներից:

Խստամբեր վանականի սուրբ զգացողու-

Թյան համար որքան էլ ծանր և վիրավորական էր ծանոթանալ կեղծ ուսուցչի պարսավական կարծիքներին և նրա երգերում կարողալ վավաշոտ երևակայության գոեհիկ արտահայտությունները, սակայն Եփրեմը չհրատարվեց դառն աշխատանքից, որպեսզի ավելի դիպուկ հարվածի իր ախոյանին: «Ես գտա, – ասում էր նա իր երգասացություններից մեկում, – Բարդեժանի գիրքը և միառժամանակ տրտմությամբ շվարել էի, քանզի այն իմ լսելիքն ու սիրտը պղծում էր իր լուտանքների գարշահոտությամբ: Ես նրա երգերում լուտանքներ էի լսում և իր ընթերցվածներում՝ չարախոսություններ... Ականջներիս մեջ աղմկող մոլորությունների խավարը ցրելու համար ես դիմեցի Սուրբ Գրքին»: Բարդեժանը չէր ժխտում Աստվածաշնչի՝ ո՛չ Հին Կտակարանի, ո՛չ էլ Նոր Կտակարանի գրքերը, այդ պատճառով Եփրեմը բավական էր համարում իր օրհներգություններում շարադրել Աստծո մասին և մեր նկատմամբ Նրա վերաբերմունքի մասին Աստծո խոսքի մաքուր ուսմունքը, որպեսզի մերկացնի հերետիկոսի ունայնամտությունը և կեղծ մեկնությունները:

Ճշմարտության հանդեպ իր փութեռանդությամբ ոգևորված՝ նա համարձակորեն անարգանքի և անեծքի է մատնում Բարդեժանի կարծեցյալ իմաստության գաղտնիքները և կոչ է անում դուրս գալ հերետիկոսական խառնամբոխից և գնալ դեպի մաքուր ուսմունքի պահապանի՝ Եկեղեցու գիրկը: «Մենք մեր հույսը չենք դնում յոթ մոլորակների վրա, որոնց հավատում է Բարդեժանը, – ասում է Եփրեմը իր երգասացություններից մեկում, – Թող անիծյալ լինի նա, ով, Բարդեժանին հետևելով, կասի, թե դրանցից են ծագում անձրևներն ու ցողը, ձյունն ու քաղցը, սերմերն ու պտուղները, որ դրանցից են սովն ու լիությունը, ամառն ու ձմեռը: Թող բանադրվի նա, ով չի կամենում ապավինել Աստծուն, ով ընդունում է յոթ մոլորակների ուսմունքը և դրանց վրա է իր հույսը դնում: Անիծյալ լինի Սուրբ Գիրքի դեմ հակաճառողը, առաքյալների ուսմունքին ընդդիմացողը: Երանյալ ես դու, ուղղամիտների՝ եկեղեցի, քանզի Արքայից Արքան է հաստատել քո մեջ իր կացարանը: Քո հիմքերը երբեք չեն խախտվի, քանզի Աստված քո պահապանն է, և դժոխքի դարպասները չեն հաղթի

քեզ, և գիշատիչ գայլերը չեն կարողանա կործանել կամ թուլացնել քո ամրոցը: Օ՛հ, ինչ մեծ ես դու, Աստծո՛ւ տուն: Ի՛նչ հիասքանչ ես դու: Ի՛նչ մեծասքանչ ես դու, դո՛ւստրդ ժողովուրդների»:

Քանի որ Բարդեժանի կեղծ ուսմունքը որոշ կետերում համընկնում էր Մարկիոնի և Մանիի կարծիքների հետ, ուստի Եփրեմը հաճախ ժխտելով մեկին, նկատի ուներ և մյուսներին. օրինակ, երբ խոսում էր նյութի հավերժական կյանքի, նյութի մեջ չարի պատճառի, Աստվածությունը էոնների տարրաբաժանելու դեմ:

Գնոստիկական հերձվածների դեմ Եփրեմի ընտրած զենքը ճիշտ դուրս եկավ: Ժողովուրդն ազահոլթյամբ ունկնդրում էր սուրբ ճգնակյացի ժամերգությունները և մոռանում էր Բարդեժանի երգասացությունները: Այդ պատճառով Եփրեմը նույն զենքն օգտագործեց նաև նոր կեղծ ուսմունքների դեմ, որոնք տարածվել էին չորրորդ դարում:

Եփրեմը հատկապես ընդվզում էր անընդգրկելին ընդգրկելու ունայնատություն անպատկառ հանցափորձերի դեմ:

Աստվածություն անպարագրելիությունը և մարդկային մտքի սահմանափակվածությունը, հոգևոր աշխարհի և տեսանելի բնության գաղտնիքները, Աստծո խոսքի վկայությունը և յուրաքանչյուրի սեփական գիտակցության ճայնը նա ծառայեցնում էր բոլոր նրանց անմտությունը ցույց տալու համար, ովքեր իրենց են վերագրում կամ երազում են ձեռք բերել Աստծո թաքուցյալ էություն գիտությունը: «Հարցրո՛ւ իմաստուններին և ուշադի՛ր կշռիր նրանց խոսքը. մարդը մեկ ուրիշ հոգի ունի՝ հավատը (և ոչ թե գիտելիքը): Մարմինը հոգով է կենդանանում, իսկ հոգին՝ հավատով, առանց հավատի նա դիակ է»:

Չբավարարվելով դրանով՝ Եփրեմն իր հոգևոր երգերի մեջ մտցրեց նաև Հիսուս Քրիստոսի Աստվածայնության դեմ արիոսականների սովորական առարկությունների լուծումը: «Իմաստուն հետազոտողը, — մի տեղ ասում է նա, — կարողանում է հաստատել Սուրբ Գրքի այն տեղերի միջև գոյություն ունեցող համաձայնությունը, որոնք ամիտ մարդկանց հակասական են թվում, կապակցում է դրանք՝ իր բանիմացությամբ համաձայնեցնելով թվացյալ անհամաձայնու-

թյունները, և խաղաղությունն է հաստատում բորբոքված ունկնդիրների միջև»: Եվ ինքն էլ կատարում էր այդ պարտքը:

Իր բանավիճական–դավանաբանական գործերում Եփրեմը ճշմարտության պաշտպանն էր ընդդեմ իր ժամանակի կեղծ ուսուցիչների, որոնք խռովություններ էին հարուցում Եդեսիայի եկեղեցում: Նրա դավանաբանական ստեղծագործությունները կասկածի կամ վերամեկնության ենթարկվող ճշմարտությունների մասին գրված են ավելի շատ ակնածալի խորհրդածությունների, քան դավանաբանական հետազոտությունների ձևով: Նա մանրամասն չի քննում այն հիմքերը, որոնց վրա հաստատված է ճշմարտությունը, այլ առավելապես միայն մատնանշում է դրանք կամ պարզապես շարադրում է ճշմարտությունն այնպես, ինչպես այն դավանում է եկեղեցին և ինչպես պետք է դավանի Եկեղեցուն հավատարիմ որդին: Երբեմն դիմում է նաև այն հիմքերի քննմանը, որոնց վրա խարսխվում էին կեղծ ուսմունքները, սակայն ավելի շատ մերկացնում է, քան հերքում: Բանավեճի տվյալ բնույթը, անկասկած, կախված էր այն ձևից, որն ընտրել էր եդեսացի ուսու-

ցիչն իր հերքումների համար՝ բանաստեղծական ձևից: Իսկ ձևի ընտրությունը, ինչպես տեսանք, շատ հաճախ պայմանավորված էր մասամբ հանգամանքներով, մասամբ էլ այն բանով, որ դրանք նախատեսված էին հասարակ ժողովրդի կողմից ընկալվելու համար: Երանելի Եփրեմը իր երգասացություն–ոտանավորներում գրում էր հերետիկոսական մոլորությունների հերքումը, քանզի հերետիկոսներն իրենց կեղծ ուսմունքը ոտանավորներով էին շարադրում:

Եդեսիայի հասարակ բնակիչները, որոնք տարվում էին վնասակար ոտանավորների արտաքին ձևի հաճելիությամբ, զգում էին ոչ այնքան մոլորությունների գիտուն հերքման և ուղղափառության ապացույցների լիակատար զարգացման կարիքը, որքան ճշմարտության ընդհանրական, բոլորին հասկանալի, կենդանի, զգացմունքների և երևակայության վրա ազդող շարադրանքի, ինչպես որ այն դավանում էր Եկեղեցին:

Ե՛վ բարոյախրատական, և՛ բանավիճական–դավանաբանական ստեղծագործություններում երանելի Եփրեմը հաճախ մարդկանց հետ զրույցներից անցնում է Աստծո

Հետ քաղցրալի երկխոսության կամ աղոթքի:  
Սակայն, բացի դրանից, նա Եկեղեցուն թողել  
է նաև բազում գործաշարժ աղոթքներ և ա-  
ղոթական երգասացություններ: Դրանք մեզ  
հասել են մասամբ հունարեն, բայց ավելի  
չատ` ասորերեն: Ասորերեն մեզ հասածների  
մեջ կարևոր տեղ են գրավում Քրիստոսի  
Սուրբ ծնունդին նվիրված երգասացություն-  
ները:

Հունարեն հայտնի են Երանելի Եփրեմի`  
Սուրբ Երրորդությանը, Աստծո Որդուն և  
Սուրբ Աստվածածնին նվիրված աղոթքները:  
Դրանց մի մասը քաղված է նրա զրույցնե-  
րից:



ԽՐԱՏՆԵՐ

Խոսք առաքինությունների  
և արատների մասին

**Բ**արեբանում եմ ձեր կյանքը, քրիստոսասերներ, քանզի այն լեցուն է բարի անվեհերությամբ, սակայն նզովյալ է սեփական կյանքն իմ, որովհետև ոչ մի բանի պիտանի չէ:

Բարեբանում եմ ձեզ, սիրեցյալներս, ձեր արդար վարքով դուք սիրելի դարձաք Աստծուն և հրեշտակներին:

Բայց ո՞վ կողբա ինձ, որ բարկացրի Աստծուն իմ ունայն գործերով: Երանյալ եք դուք, որ ձեր առաքինի վարքի և անսահման սիրո համար դարձել եք դրախտի ժառանգորդներ:

Հիանում եմ ձեզանով, որ հոգևոր օգուտի համար չծուլացաք այդպիսի երկար ուղի կտրել: Եվ առավել զարմանալի է ինձ համար, որ եկել եք անարժան և մեղքերի համար դատապարտված մի մարդու մոտ և նրանից օգտավետ խոսք եք պահանջում:

Հիրավի զարմանալի բան. հագեցածներն եկել են քաղցից հյուծվածի մոտ, Հոգու ցողով լիացածներն եկել են ծարավից պապա-

կածի մոտ. առաքինութեան քաղցրութիւնները կրողները՝ արատավոր դառնութեամբ լեցունի, հարուստները՝ աղքատի, իմաստունները՝ խղճով տկարացածի, Աստծուն հաճո դարձածները՝ Նրան զայրացնողի, ազատները՝ գերու, ժրաջանները՝ անփութաջանի մոտ:

Դուք զարմանքի եք արժանի ձեր առաքինութիւններով, իսկ ես՝ անխոհեմս, կարոտ եմ դրանց:

Դուք, ժուժկալութեամբ զարդարվելով, հաճո եք Աստծուն, իսկ ես՝ անհոգս, պարսավանքի եմ ենթակա:

Դուք ձեր բարի գործերով և գովելի առաքինութեամբ դարձաք Քրիստոսի բուրմուռը (Բ Կորնթ. 2, 15), իսկ ես իմ փափկասունութեամբ և ծուլութեամբ լիովին գարշահոտութիւն դարձա: Եւ այսպես, հիրավի զարմանալի է, որ այդչափ առավելութիւններ ունենալով՝ եկել եք ինձ մոտ, մի մարդու, ով ինքն իրեն չի կարող օգտակար լինել:

Եվ դուք՝ քրիստոսասերներդ, խոհեմ վարվեցիք՝ մտադրվելով նեցուկ դառնալ իմ փափկասունութեանը, փութեռանդ դարձնել իմ ծուլ հոգին, որպես ապավեն և զորավիգ

ուժ ծառայել իմ անփութաջանութեանը, քանզի դուք ինքներդ՝ որպես կատարյալներ, ոչ մի բանում թերութիւն չունեք:

Քանի որ առաջնորդվելով հեզամտութեամբ՝ օգտավետ խոսք եք պահանջում ինձնից՝ անարժան մարդուց, և կամենալով մերկացնել կյանքն իմ՝ հրամայում եք, որ դա ես ինքս անեմ, այն է՝ բերեմ խոնարհութեան պտուղը, ուստի ես խոսքս կասեմ, բայց կասեմ ամոթահար: Որովհետեւ եթե սկսեմ մերկացնել ուրիշների, ապա ինքս ինձ կմեղադրեմ: Այդժամ իրավամբ ինձ կասվի Փրկչի խոսքը. Բժիշկ, բժշկի՛ր ինքք քեզ (Ղուկ. 4, 23):

Բայց քանզի Տերը և բոլորի Փրկիչն ինքն է ասում. ամեն՝ ինչ որ նրանք ձեզ ասեմ, արե՛ք և պահեցե՛ք, բայց մի՛ արեք ըստ նրանց գործերի (Մատթ. 23, 3), ուստի, թեկուզ և անմաքուր եմ ես, սակայն կարողանում եմ ձիշտ խորհուրդ տալ, դրա համար էլ, հայացք նետելով այս հրեշտակային վարքին, ես բարեբանեցի նրա յուրաքանչյուր առավելութիւնը: Արդար ու բարեպաշտ կյանքով ապրողին, առաքինի վարքով փայլողին արդյոք ո՞վ չի բարեբանի նրան սպասող անպարագրելի ու անսահման բարիքների համար: Եվ ո՞վ չի արտասովի այն

մարդու համար, ով անփույթ է ապրում և իր խղճուկ գործերի համար գտնվում է երկնային արքայությունից դուրս և իր անհաջողութայն համար վտարվել է հարսանեկան սրահից (Մատթ. 25, 11):

### Աստծո երկյուղի մասին

Երանելի է այն մարդը, ով իր մեջ ունի Աստծո երկյուղը: Սուրբ Հոգին էլ է բարեբանում նրան: Երանի այն մարդուն, որ վախենում է Տիրոջից (Սաղմ. 111, 1):

Ով երկնչում է Տիրոջից, նա հիրավի պաշտպանված է բոլոր թշնամական հնարքներից և խույս է տալիս ոսոխի բոլոր դավերից:

Ով իր մեջ ունի Աստծո երկյուղը, նա բարեհաջողությամբ փրկվում է չարանենգ թշնամու դիտավորություններից:

Թշնամին ոչ մի բանում չի որսում նրան, քանզի երկյուղելով՝ նա իրենից վանում է մարմնական հաճույքները:

Երկյուղ ունեցողը մտքով այս ու այն կողմ չի թռչում, քանզի սպասում է իր Տիրոջը, որ հանկարծ չգա այն օրը, երբ չէր սպասում, և քնած գտնի

իրեն և կեղծավորների վախճանին արժանացնի (Մարկ. 13, 36: Մատթ. 24, 51):

Ով իր մեջ ունի Աստծո երկյուղը, նա անհոգ չի լինում, քանզի մշտապես զգաստանում է:

Ով երկյուղում է, նա չափից ավելի քնով չի տարվում, քանզի արթուն է մնում և սպասում է իր Տիրոջ գալստյանը:

Ով երկյուղում է, նա անհոգ չի մնում, որպեսզի չբարկացնի իր Տիրոջը: Ով երկյուղում է, նա չի ծուլանում, քանզի միշտ հոգում է ստացվածքի մասին, զգուշանալով դատապարտանքի ենթարկվելուց:

Ով երկյուղում է, նա միշտ գերադասում է այն, ինչը հաճո է Աստծուն և նախապատրաստվում է դրան, որպեսզի երբ Տերը գա՝ նրան գովաբանի բազում բաների համար:

Աստծո երկյուղն այդպես շատ բարիքների աղբյուր է դառնում բոլոր նրանց համար, ովքեր ապրում են նրա մեջ:

### Անվեհերության մասին

Ով իր մեջ չունի Աստծո երկյուղը, նա պաշտպանված չէ սատանայական հարձակումներից:

Ով իր մեջ չունի Աստծո երկյուղը, նա մտքով դեգերում է և անհոգ է բարու հանդեպ, քնում է չափից ավելի և չի հոգում իր գործերի մասին: Նա վավաշոտության անոթ է, զվարճանում է այն ամենով, ինչն իրեն հաճելի է, քանզի չի վախենում Տիրոջ գալուստից. նա պարծենում է կրքերով, սիրում է հանգիստը, փախչում է չարչարանքներից, խորշում է խոնարհությունից, գովաբանում է ամբարտավանությունը:

Ի վերջո գալիս է նրա Տերը և նրան գտնում է Իր համար անհաճո զբաղմունքներում և նրան կպատժի ամենայն խստությունով, և կմատնի հավերժական խավարին: Այդպիսի մարդուն ո՞վ նզովյալ չի համարի:

### Միրո մասին

Երանյալ է այն մարդը, ում մեջ կա Աստծո սերը, քանզի իր մեջ նա Աստծուն է կրում: Աստված սեր է. և ով սիրո մեջ է ապրում, բնակվում է Աստծո մեջ, և Աստված բնակվում է նրա մեջ (Ա, Հովհ. 4, 16):

Ում մեջ սեր կա, նա Աստծու հետ ամեն ինչից գերիվեր է: Ում մեջ սեր կա, նա չի խոր-

շում ոչ մի բանից՝ փոքրից և մեծից, փառավորից և անփառունակից, աղքատից և հարուստից. ընդհակառակը՝ ինքն է բոլորի առջև խոնարհ լինում, մշտապես հույս է տածում... ամեն բանի դիմանում է. (Ա, Կորնթ. 13, 7):

Ում մեջ սեր կա, նա իրեն ոչ մեկից գերիվեր չի համարում, ոչ մեկի առջև իրեն չի փառաբանում, և ինքը ոչ մեկին չի զրպարտում և զրպարտողներից լսելիքը հեռացնում է:

Ում մեջ սեր կա, նա կեղծավոր և ոլորմուրը ուղիով չի քայլում, ինքը չի գայթում և թույլ չի տալիս, որ եղբայրը գայթի:

Ում մեջ սեր կա, նա չի մրցակցում, չի նախանձում, չի նայում ատելի աչքով, չի ուրախանում ուրիշների անկումով, չի զրպարտում ընկածին, այլ կարեկցում է նրան և հոգ է տանում նրա մասին, եղբորը զրկանքի մեջ չի արհամարհում, այլ պաշտպանում է և պատրաստ է մեռնելու նրա համար:

Ում մեջ սեր կա, նա Աստծո կամքն է կատարում, նա Աստծո աշակերտն է: Քանզի մեր բարեգույթ Տերն ինքն է ասում. Սիրեցե՛ք միմյանց (Հովհ. 13, 35-34):

Ում մեջ սեր կա, նա ոչ մի բան երբեք չի սեփականում, ոչ մի բանի մասին չի ասում՝

սա իմն է, բայց իր ունեցած ամեն ինչը առաջարկում է բոլորին՝ ընդհանուր օգտագործման համար:

Ում մեջ սեր կա, նա ոչ մեկին իրեն օտար չի համարում, այլ ամենքն իր համար յուրային են:

Ում մեջ սեր կա, նա բարկություն չի գրգռվում, չի գոռոզանում, գայրույթով չի բռնկվում, անիրավության համար չի ուրախանում, չար բան չի խորհում, ոչ մեկին չի համարում իր թշնամին՝ բացի սատանայից:

Ում մեջ սեր կա, նա ամեն ինչում համբերատար է... բարեգութ է... երկայնամիտ է (Ա Կորնթ. 13, 4-7):

Ուստի երանյալ է նա, ով սեր է ձեռք բերել և նրանով վերաբնակվել Աստծո մեջ, քանզի Աստված գիտե յուրայիններին և կընդունի նրանց իր գիրկը:

Սեր սերմանողը կլինի հրեշտակների կենակիցը և կթագավորի Քրիստոսի հետ:

Բանն Աստված սիրո՞վ երկիր իջավ:

Մեզ համար դրախտը սիրո՞վ է բացված, և ամենքին ցույց է տրված երկնքի դուռը:

Մենք սիրո՞վ ենք հաշտվել Աստծու հետ, որ նրա թշնամիներն էինք:

Ուստի ճշմարիտ ենք ասում, որ Աստված սեր է. և ով սիրո մեջ է ապրում, բնակվում է Աստծո մեջ:

## Միրագուրկների մասին

Դժբախտ և խղճալի է նա, ով հեռու է սիրուց: Նա իր օրերն անցկացնում է նիրհուն զառանցանքում: Եվ ո՞վ չի լա այն մարդու համար, ով հեռու է Աստծուց, զուրկ է լույսից և ապրում է խավարի մեջ: Ուստի ասում եմ ձեզ, եղբայրներ՝, ում մեջ Քրիստոսի սերը չկա, նա Քրիստոսի թշնամին է:

Ճշմարիտ է ասում Առաքյալը, թե ով ատում է եղբորը, մարդասպան է (Ա Հովհ. 3, 15), և խավարի մեջ է շրջում (Ա Հովհ. 2, 11) և հոժարակամ դառնում է ամենայն մեղքի որսը:

Ում մեջ սեր չկա, նա շուտ է բորբոքվում, շուտ է գայրանում, շուտ է ատելությամբ լցվում:

Ում մեջ սեր չկա, նա ուրախանում է ուրիշների մասին անիրավություն լսելով, չի կարեկցում անկյալին, ձեռք չի մեկնում ընկածին, խորհուրդ չի տալիս տապալվածին, չի սատարում տատանվողին:

Ում մեջ սեր չկա, նա մտքով կուրացած է, սատանայի ընկերն է, նա ամենայն նենգության գյուտարար է, նա վեճեր սկսող է, նա չարաբանների ընկերն է, զրպարտիչների զրուցակիցը, վիրավորողների խորհրդատուն, նախանձողների ուսուցիչը, գոռոզության սպասավորը, նա մեծամտության անոթ է:

Մի խոսքով, ով սեր ձեռք չի բերել, նա հակառակորդի զենքն է, դեգերում է դես-դեն ընկնելով և չգիտե, որ խավարում է քայլում:

### Երկայնամտության մասին

Հիրավի երանյալ է նա, ով երկայնամտություն է վաստակել, քանզի Սուրբ Գիրքն էլ է գովաբանում նրան՝ ասելով. Համբերատար սարդն օժտված է մեծ խոհեմությամբ (Առակ. 14, 29): Եվ ի՞նչն է դրանից գերադասելի:

Երկայնամիտը մշտապես ուրախություն, զվարթության, հափշտակության մեջ է, քանզի ապավինում է Աստծուն: Երկայնամիտը հեռու է զայրույթից, քանզի ամեն ինչի դիմանում է:

Երկայնամիտը շուտ չի բորբոքվում, շուտ չի զայրանում, չի դիմում վիրավորանքների,

հեշտ չի տրվում պարապ զրույցների, եթե վիրավորված է, չի վշտանում, դիմադրողներին չի հակառակվում, բոլոր գործերում ամուր է, շուտ չի տրվում խաբեություն, հակված չէ բորբոքվելու, վշտերի մեջ բերկրում է, ամեն բարի գործի վարժվում է, ամեն ինչից դժգոհ մարդկանց ամեն ինչում գոհացնում է, երբ հրամայում են, չի հակաճառում, երբ դիտողություն են անում, չի մուսլվում, բոլոր դեպքերում իր համար բուժում է գտնում երկայնամտության մեջ:

### Երկայնամտություն չունեցողների մասին

Ում մեջ երկայնամտություն չկա, նա հեռու է նաև համբերությունից, քանզի երկայնամտությունից զուրկը հեշտությամբ շեղվում է ուղուց, պատրաստ է բորբոքվելու, շուտ է բռնկվում և վեճ սկսում, եթե վիրավորված է, ինքն էլ է վիրավորում, եթե նեղացած է, ինքն էլ է նեղացնում, վիճում է ոչ մի գործի չծառայող բաների շուրջ, նրա գործերը և աշխատությունները ցիրուցան են լինում, ինչպես տերևները քամուց, նրա խոսքը

հաստատունն չէ, արագորեն մի բանից դեպի մյուսն է թռչում:

Ում մեջ երկայնամտություն չկա, նա հեռու է հաստատունությունից, քանզի շատ շուտով փոփոխվում է: Նա խելամտություն ձեռք չի բերում, ընկերանում է անբարոյականի հետ, ժամանակ անցկացնում չարախոսի հետ, օգնում է վիրավորողին, գաղտնիք չի պահում, պատրաստ է ամեն մի խոսք հայտնել ի լուր ամենքի: Եվ ի՞նչ կա դրանից ավելի չարաբաստիկ:

### Համբերության մասին

Եղբայրներ՛ր, երանյալ է նա, ով համբերության տեր է լինում, քանզի համբերության մեջ հույս կա, իսկ հույսը երբեք չի ամաչեցնում (Հոմ. 5, 5): Հիրավի երանյալ և երիցս երանյալ է նա, ով համբերություն ունի. ով միգչև վերջ համբերի, Աստուծոյ պիտի կփրկվի (Մատթ. 10, 22): Եվ ի՞նչն է ավելի լավ այդ ավետիսից: Բարեհաճ է Տերը Արամց Ակատմամբ, ովքեր ապավինում են Արամ (Նատւմ 1, 7):

Եղբայրներ՛ր, արդյոք գիտե՞ք, թե որքան է գնահատվում համբերությունը: Թե՞ այդ առ-

թիվ էլ հարկ է, որ խոսքեր փնտրեմ ձեզ վկայելու համար: Համբերությունն առանձին չի լինում. նրա պահանջը կա բազում առաքիլություններում: Համբերողը հասնում է ամենայն առաքիլության: Վշտերի մեջ նա բերկրում է, կարիքների մեջ իրեն բարեվայելուչ է պահում, գայթակղությունների մեջ սքանչանում է: Նա պատրաստ է հնազանդության, զարգարված է երկայնամտությամբ, լցված է սիրով:

Վիրավորանքների համար նա օրհնում է, վեճերի մեջ խաղաղ է լինում, մնջանքի մեջ արի է, սաղմոսերգության մեջ ծույլ չէ, պահքերին պատրաստ է, աղոթքներում համբերատար է, գործերի մեջ անխտոր է, պատասխանների մեջ ուղղամիտ է, հանձնարարությունը կատարելիս բարեհնազանդ է, կյանքում փութաջան է, ծառայություններ մատուցելիս սիրալիր է, վարվեցողության մեջ առիթնող է, միաբանական համակեցության մեջ հաճելի է, խորհրդակցելիս քաղցրաբարո է, հսկումների մեջ մուսյլ չէ, թափառականներին խնամելիս ջանադիր է, անկյալներին խնամելու մեջ պատրաստակամ է, դժվար կացության մեջ առաջին օգնականն

է, միտքը սթափ է, ամենայն բանում բարի է:  
Համբերութիւնն ձեռք բերողը հույս է ձեռք բերում: Քանզի նա զարդարված է ամենայն բարի գործով: Այդ պատճառով էլ համարձակորեն ձայնում է Աստուծոն՝ ասելով. համբերությամբ սպասեցի Տիրոջը, և նա նայեց ինձ և լսեց իմ աղոթքը (Սաղմ. 39, 2):

### Համբերություն չունեցողների մասին

Ձախավեր և խղճուկ է նա, ով համբերութեան տեր չի լինում: Այդպիսիներին Սուրբ Գիրքը սպառնում է վշտով: Վա՛յ, ձեզ, – ասում է, – որ կորցրել եք համբերությունը (Սիրաք 2, 16): Եվ հիրավի վա՛յ նրան, ով համբերութիւնն չունի: Նա այս ու այն կողմ է թռչում քամուց քշված տերևի պես և վիրավորանքները չի տանում, վշտերի մեջ անհոգութեան է մատնվում: Նրան հեշտ է ներքաշել վեճերի մեջ:

Որտեղ հարկ է համբերել, այնտեղ տրտնջում է:

Որտեղ հնազանդութիւնն է պետք, այնտեղ հակաճառում է:

Աղոթքների մեջ ծուլ է, հսկումներում տկար է, պահքերում մուայլ է, ժուժկալութեան մեջ անփութաջան է, պատասխանների մեջ դանդաղկոտ է, գործերի մեջ անճշտապահ է, խորամանկութեան մեջ անկոտրում է, զբաղմունքների մեջ՝ ինքնակամ, վիճելիս արի է, մնջանքի մեջ՝ անուժ:

Խրախուսանքի արժանի մարդկանց նա հակառակորդ է և առաջադիմողներին՝ մրցակից:

Համբերութիւնն չունեցողը բազում զրկանքների է ենթարկվում և ի գորու չէ առաքինի դառնալու: Քանզի համբերատարությամբ ընթանալով դեպի մրցասպարեզ, որ բացված է մեր առաջ (Եբր. 12, 1):

Համբերութիւնն չունեցողը զուրկ է ամենայն հույսից: Ուստի և ամեն ոք, ով ինձ նման անհամբեր է, պաղատում եմ, որ համբերութեան տեր լինի, որպեսզի փրկվի:

### Անգայրացկոտության մասին

Երանի՛ նրան, ով հեշտ չի զայրանում կամ բորբոքվում: Նա մշտապես խաղաղ է: Վանելով իրենից բորբոքվածութեան և բարկացկո-

տուլթյան ոգին՝ նա հեռու է պատերազմից և խռովութիւններից, մշտապես հոգով հանգիստ է և դեմքով՝ բերկրուն:

Ով հեշտ չի բարկանում և պարապ խոսքերից չի հուզվում, նա իրավացիութեան և ճշմարտացիութեան գործիչ է: Նա առանց ճիգի զսպում է շատախոսութեամբ տառապողներին և համբերատար է նրանց հանդեպ: Նա չի վիրավորում, նրա հետ վատ բաներ չեն պատահում, նա վեճերից չի ուրախանում, քանզի բոլորի հանդեպ սեր է տածում:

Անզայրացկոտը վեճեր չի սիրում, այլ մշտապես ողջախոհ է, սիրում է խաղաղութիւնը և համբարետարութեան մեջ է մնում: Ով իր մեջ հեշտ չի ընդունում դյուրագրգռութեան ոգին, նա Սուրբ Հոգու կացարան է դառնում: Դյուրագրգռութիւն չունեցողը չի վշտացնում Սուրբ Հոգուն: Նա կարող է և՛ հեզաբարո լինել, ունենալ և՛ սեր, և՛ համբերութիւն, և՛ խոնարհութիւն:

Բարկութեան մեջ չընկնողը զարդարվում է ամենայն բարի գործով և սիրելի է Քրիստոսին: Այդ պատճառով նա է հիրավի երիցս երանելի, ով մշտապես վանում է իրենից զայրացկոտութեան և դյուրաբորբոքութեան ո-

գին, քանզի նրա թե՛ մարմինը, թե՛ հոգին, և թե՛ միտքն առողջ են:

### Դյուրագրգռութեան մասին

Իսկ ով միշտ դյուրագրգռութեան մեջ է, հաճախ և շուտ է բարկանում նույնիսկ չնչին բաներից, թող լսի, թե ինչ է ասում առաքյալը. սարդու բարկութիւնը Աստծո արդարութիւնը չի կատարում (Հակ. 1, 20): Եվ հիրավի, ճախավեր և խղճուկ է նա, ով պարտվում է այդ կրքերից:

Քանզի զայրացկոտը, ինչպես ասում են, սպանում է իր հոգին: Եվ իրոք, բարկացկոտը սպանում և կործանում է իր հոգին, քանզի իր ողջ կյանքն անցկացնում է խռովութեան մեջ և հեռու է հանգստութիւններից:

Նա օտար է խաղաղութեանը, հեռու է նաև առողջութիւններից, քանզի և՛ մարմինն է անընդհատ հյուծվում, և՛ հոգին է տրտմում, և՛ մարմինն է թոշնում, և՛ դեմքն է դժգունանում, և՛ միտքն է հարափոփոխ դառնում, և՛ գիտակցութիւնն է ուժասպառվում, և՛ խորհուրդներն են ջրի պես հոսում կորչում, բոլորի համար նա ատելի է:

Այդպիսի մարդը հեռու է երկայնամտութիւններից և սիրուց, հեշտութեամբ խռովքի մեջ

է ընկնում պարապ խոսքերից, դատարկ բանից վեճ է սարքում, որտեղ իր կարիքը չկա, այնտեղ խառնվում է գործին, և իր վրա ավելի ու ավելի մեծ ատելություն է բարդում:

Այդպիսի մարդը սիրում է շատախոսությունը և պարծենում է անօգուտ բաներով: Նրան հաճելի է չարախոսությունը, հեզության կարողությունն չունի, իսկ խորամանկության մեջ արի է: Եվ ո՞վ չի արտասվի նրա համար: Նա նողկալի է Աստծո և մարդկանց առջև:

Քանզի դյուրագրգիռը ամեն ինչում անտանելի է: Ուստի զգուշացե՛ք դյուրագրգրուությունից:

### Հեզության մասին

Հիրավի երանի՛ և երիցս երանի՛ նրան, ով իր մեջ հեզություն ունի: Նրա մասին մեր Տեր Սուրբ Փրկիչը, հաստատելով այդ, ասում է. Երանի՛ հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն (Մատթ. 5, 5): Եվ ի՞նչն է ավելի երանելի այդ երանությունից, ի՞նչն է վեր այդ ավետիսից, ի՞նչն է պայծառ այդ բերկրանքից՝ դրախտի երկիրը ժառանգելուց:

Ուստի և, եղբայրնե՛ր, լսելով, թե որքան մեծ գանձեր է խոստանում այդ ավետիսը, նախանձախնդի՛ր եղեք վաստակի համար:

Փութացե՛ք մտնել այդ առաքինության պայծառության մեջ. խանդավառվեցե՛ք սրտով՝ լսելով այդ, և որքան ուժ ունեք, ջանացե՛ք, որ ձեզանից ոչ ոք այդ երկրի ժառանգությունից արտաքսված չլինի, որպեսզի հետո չարտասվեք դառնաղի, անմիտ զղջումով:

Փութացե՛ք հեզություն ձեռք բերել՝ լսելով, թե այդ մասին ինչպես է Սուրբ Հոգով խոսում անսուտ Եսային: Ու ես ո՞ւմ եմ նայելու, – ասում է Տերը, – եթե ոչ հեզերին և խոնարհներին և նրանց, ովքեր դողում են իմ խոսքից (Եսայի 66, 2): Կարելի՞ է արդյոք չսքանչանալ այս ավետիսով: Քանզի ի՞նչն է փառավոր այսպիսի պատվից: Ուրեմն նայե՛ք, եղբայրնե՛ր, որ որևէ մեկդ չկորցնի այդ երանությունը, այդ բերկրանքն ու զվարճությունը:

Այդ պատճառով փութացե՛ք, խնդրում եմ ձեզ, փութացե՛ք հեզություն ձեռք բերել, քանզի հեզը զարդարված է ամենայն բարի գործով:

Հեզը, եթե նույնիսկ նեղացած է, բերկրում է, եթե նույնիսկ վշտացած է, շնորհակալ է, զայրացկոտներին խաղաղեցնում է սիրով, հարվածներն իր վրա վերցնելով՝ մնում է անսասան, վիճաբանելիս հանգիստ է, ենթարկվելիս զվարճանում է, ուրիշի գոռոզամտությունը չի խոցում նրան, նվաստացումների մեջ բերկրում է, արժանիքներից չի մեծամտանում, չի պարծենում, բոլորի հետ ապրում է խաղաղության մեջ, ամենայն իշխանությունը խոնարհ է, ամեն գործի պատրաստ է, ամեն ինչում գրվատանքի է արժանի, բոլորը նրան գովում են:

Նա հեռու է խորամանկությունից, ինչպես և երեսպաշտությունից:

Նա չի ծառայում խորամանկությանը, չի ենթարկվում նախանձին, խորշում է չարախոսությունից, տանել չի կարողանում քսությունը, ատում է գուշակներին, նողկում է բամբասկոտներից: Օ՛հ, երանելի հարստություն՝ հեզություն: Ամենքն են նրան փառաբանում:

## Խորամանկության մասին

Եվ այսպես, եղբայրներ, պետք է արտասովել և արցունք թափել նրանց համար, ովքեր հեզություն չունեն իրենց մեջ, այլ դաշինք են կնքում խորամանկության հետ, որովհետև նրանք արժանի են ծանրագույն դատավճռի. Չարագործները շուտով կվերանան (Սաղմ. 36, 9):

Մեր Սուրբ Աստված նվաստացնում է խորամանկներին՝ ասելով. Չար մարդն իր սրտի չար գամձերից հանում է չար բաներ (Մատթ. 12, 35: Ղուկ 6, 45): **Նաև մարգարեն է ասում.** Թշնամիներս չարությամբ հարձակվել եմ վրաս: Ականջս կլսի նրանց (Սաղմ. 91, 12):

Քանզի սարսափելի է նենգության դեը, ուստի և զգուշացե՛ք, որպեսզի ձեզանից որևէ մեկը, նրա մեջ ընկնելով, չնախատի ինքն իրեն:

Քանզի նենգամիտը երբեք խաղաղության մեջ չի ապրում, այլ մշտապես խռովահույզ է և միշտ դյուրագրգռության, խարդավանքի ու զայրույթի մեջ է, միշտ հետամտում է իր մերձավորին, միշտ զազրախոսում է, նախանձում, մրցակցում, միշտ անողոք է. հրաման

ստանալիս՝ հակաճառում է, կարգադրու-  
թյուն լսելիս խեղաթյուրում է այն. բարի  
խորհրդից հետո չարն է գործում, պայման  
կնքելիս խախտում է այն. իրեն սիրողին ծաղ-  
րում է, ով հավանություն է արժանի, նրանից  
գարչում է, ով հաջողություններ է ցուցաբե-  
րում, նրանից դժգոհ է, խրատները բանի տեղ  
չի դնում, միաբաններին այլասերում է, միա-  
միտներին նեղում է, հեզերին իրենից հեռաց-  
նում է, մեծահոգիներին ծաղրում է, կողմնա-  
կի անձանց առջև կեղծավորություն է անում,  
մեկին մյուսից բամբասում է, ամենքին դեմ է  
դնում, մասնակցում է վեճերին, մարդուն  
հասցնում է դյուրագրգռության, օգնում է  
վրեժխնդիր լինելիս, պատրաստ է չարախո-  
սություն, ուրիշների մասին հաճույքով է  
վատ խոսում, պատրաստ է վիրավորելու, շա-  
տախոսության մեջ զորեղ է, ջանադիր է ու-  
րիշներին հարվածելիս, խռովություն կազմա-  
կերպելիս առաջին օգնականն է, իսկ սաղմո-  
սերգություն մեջ տկար է, պահքի մեջ՝ անուժ,  
ոչ մի բարի գործի համար ո՛չ ուժ ունի, ո՛չ էլ  
ըմբռնողություն, հոգևոր զրույցների ունակ  
չէ. ուստի թող բոլոր աճօրենները փակեն բերաններն  
իրենց (Սաղմ. 106, 42):

Այսպիսով՝ այդ մարդը շատ արցունքների  
է արժանի և դրա համար աղերսում եմ ձեզ,  
եղբայրներ, զգուշացե՛ք նենգադավություն-  
նից:

### Ճշմարտության մասին

Երանի՛ նրան, ով իր կյանքը համապա-  
տասխանեցրել է ճշմարտությանը, այլ ոչ թե  
ամենայն ստի որս է դառնում:

Երանի՛ և երիցս երանի՛ նրան, ով ճշմար-  
տության գործիչ է դարձել, քանզի Աստված  
ճշմարիտ է (Հովհ. 3, 33) և Նրա մեջ սուտ չկա: Եվ  
ո՞վ չի բարեբանի ճշմարտությունը պահպա-  
նողին, քանզի նա հետևում է Աստծուն:

Ով ճշմարտության մեջ է բնակվում, նա  
արդարև հաճո է Աստծուն, բոլոր մարդկանց  
համար օգտակար է և ամենայն գործի մեջ՝  
չիտակ:

Ճշմարիտ մարդը չի հաճոյանում ուրիշնե-  
րին, արդարադատ է, արժանիքներ և փառք  
ու պատիվ չի յուրացնում, չի քամահրում  
տնանկին և չքավորին, պատասխանների մեջ  
չողոքորթ չէ, դատողության մեջ ճշմարիտ է,  
գործի մեջ՝ ջանադիր, միաբանության մեջ

միշտ բարեզարդ է, նենգութիւնն չի ճանաչում, կեղծավորութիւնն չի սիրում, զարդարված է բարի գործերով և ղեկավարվում է միայն առաքինութեամբ: Այսպիսով, երանի՛ նրան, ով միշտ ծառայում է ճշմարտութեանը:

### Ստի մասին

Սակայն չարաբախտ և խղճուկ է նա, ով ապրում է ամենայն ստի մեջ, քանի որ սատանան սուտ է (Հովհ. 8, 44): Ով ապրում է ստի մեջ, նա չունի անվեհերութիւն, քանզի ատելի է և՛ Աստծուն, և՛ մարդկանց: Եվ ո՞վ չի արտասովի կյանքը ստի մեջ անցկացնող մարդու համար:

Այդպիսի մարդը ոչ մի գործում խրախուսանքի արժանի չէ և նրա բոլոր պատասխանները կասկածելի են: Վանքում նա զայրույթ ու վեճեր է ծնում, և միաբանութեան մեջ էլ նույնն է, ինչ ժանգը՝ երկաթի մեջ: Նա լպիրշ սիրտ ունի և չի թաքցնում դա, նա հոժարութեամբ գաղտնիքներ է լսում և հեշտութեամբ տարածում դրանք, նա կարողանում է իր լեզվով վայր բերել նույնիսկ նրանց, ովքեր կայուն են բարութեան մեջ:

Ինքն է սկսում գործը, բայց ցույց չի տալիս, որ ինքն է այդ գործի պատճառը: Ոչինչ չի ասում առանց երդման և մտածում է համոզել շատախոսութեամբ: Խաբեբան բազմահար է և ճարտարամիտ: Չկա դրանից ավելի մեծ խոց, չկա դրանից վատթար անպատվութիւն: Խաբեբան ամենքի համար զազրելի է և ծիծաղելի: Դրա համար, եղբայրներ՛ր, ուշադիր՝ եղեք ինքներդ ձեր հանդեպ, կապանքների մեջ մի՛ մնացեք:

### Խոնարհութեան մասին

Երանի՛ նրան, ով ճշմարիտ և անկեղծ խոնարհութիւն է ձեռք բերել, քանզի այդպիսի մարդը մեր բարեգութ Ուսուցչի հետևորդն է, Ով խոնարհ եղավ միգչե մահ (Փիլիպ. 2, 8): Այսպիսով՝ արդարև երանի՛ նրան, ում մեջ խոնարհութիւն կա, քանզի Աստծո հետևորդը լինելով՝ դառնում է նրա համաժառանգորդը:

Ում մեջ խոնարհութիւն կա, նա ամենքի հետ սիրով է միաբանված:

Ում մեջ խոնարհութիւն կա, նա մեծ ստացվածք, մեծ հարստութիւն է ձեռք բերում: Խոնարհն ամենքի համար ցանկալի է,

բորորը նրան գովում և փառաբանում են: Խոնարհը շուտ է վեր բարձրանում, շուտ է հաջողությունների հասնում: Խոնարհին հրամայում են, և նա չի հակաճառում:

Նա պատրաստ է ցանկացած բարի գործի: Նա շուտ չի բռնկվում: Եթե կշտամբանք է լսում, չի շփոթվում, վիրավորանքներից չի բորբոքվում, վշտերի մեջ բերկրում է, տրամոլթյան մեջ շնորհակալ է լինում:

Նա տեղից տեղ չի փոխադրվում, կացարանից կացարան չի անցնում: Դիտողությունները նրան չեն վախեցնում, մնում է այնտեղ, որտեղ կանչված է, և վհատություն մեջ չի ընկնում: Հորը չի նվաստացնում և եղբորը չի անարգում, վանքում մնալուց չի խուսափում:

Ձի սիրում հանգստի տրվել, չի հմայվում այլևայլ վայրերի գեղեցկությամբ, տարվա եղանակներից վայելք չի քաղում, այլ, ըստ սուրբ առաքյալի խոսքի, յուրաքանչյուր ոք, ինչ կոչման մեջ որ էր, թող նրանում էլ մնա (Ա Կորնթ. 7, 20): Այսպիսով՝ հիրավի բազում են խոնարհության պտուղները, ուրեմն երանելի է նա, ով ձեռք է բերել այն:

## Անհնազանդության և տրոնջանքի մասին

Անեծքի արժանի և խղճուկ է նա, ով խոնարհություն ձեռք է բերել, այլ անձնատուր է լինում տրտնջանքի: Քանզի տրտունջը վանքում՝ մեծ խոց է, գայթակղություն՝ հանրության համար, այն արմատախիլ է անում սերը, կազմալուծում է միաբանությունը, խռովում խաղաղությունը:

Երբ տրտնջացողին հրաման են տալիս, հակաճառում է, գործի պիտանի չէ, այդպիսի մարդու մեջ նույնիսկ բարի տրամադրվածություն չկա, քանզի նա ծուլ է, իսկ ծուլությունը տրտունջից անբաժան է: Ուստի ծուլ մարդը, ով խուսափում է ուսումից, պիտի ընկնի չարիքի մեջ, – ասում է Սուրբ Գիրքը (Առակ. 17, 16):

Երբ ծուլ մարդուն մի տեղ են ուղարկում, նա պատճառ է բռնում. Ըստ փիլիսոփայության, փողոցների մատուցներում՝ մարդասպաններ (Առակ. 22, 13):

Տրտնջացողը միշտ մի պատրվակ կգտնի գործից խուսափելու: Եթե նրան հրամայված է գործ անել, նա տրտնջում է, իսկ շուտով այլասերում է նաև ուրիշների. «Եվ սա ինչի՞»

Համար է, – ասում է, և օգուտ չկա այս գործից»։ Երբ նրան ինչ-որ տեղ են ուղարկում, պատկերացնում է, թե այդ ճամփորդություններից իրեն մեծ վնաս կգա։

Երբ արթնացնում են նրան սաղմոսերգությունների համար, դժգոհում է։ Եթե արթնացնում են հսկումի համար, փորագավի կամ գլխացավի պատրվակով հրաժարվում է։ Եթե նրան խրատում են, պատասխանում է. «Ինքդ քեզ ուսուցանի՛ր, իսկ իմ մասին մի՛ դատիր, թե ինչպես է Աստծուն Հաճո»։ Եթե նրան ինչ-որ բան ես սովորեցնում, ասում է. «Լավ կլինե՞ր դու դա այնպես իմանայիր, ինչպես ես գիտեմ»։ Նա երբեք որևէ գործ մեծակ չի անի, մինչև որ մեկ ուրիշին էլ մասնակից չդարձնի։

Տրտնջացողի ոչ մի գործ խրախուսանքի արժանի չէ. քանզի, և՛ անպիտո է, և՛ հեռու ամենայն առաքինությունից։

Տրտնջացողը ուրախ է հանգստի համար, իսկ անհանգստությունը նրան դուր չի գալիս։

Տրտնջացողը միշտ սիրում է սեղան նստել և նողկում է պահքից։

Տրտնջացողը նաև ծուլ է, նա կարողանում է խոսք բամբասել, գիտե՛ ինչպես սուտ լուրեր հերյուրել, նա ճարտարամիտ է և բազմահնար, և շատախոսություն մեջ նրան ոչ ոք չի գերազանցի, նա միշտ զրպարտում է մեկին մյուսի մոտ։

Տրտնջացողը բարեգործությունների մեջ ծուլ է, անընդունակ է օտարականների ընդունելու, սիրո մեջ շողոքորթ է, ատելության մեջ՝ արի։

Այդ պատճառով, եղբայրե՛ր, չտրտնջանք մեզ տրվող հրամաններից, չհակաճառենք կամ մեր իրավունքները առաջ չքաշենք որպես առավել բանիմացներ։

### Նախանձ և մրցակցություն չունենալու մասին

Երանի՛ նրան, ով նախանձի և մրցակցություն ենթակա չէ, քանզի մրցակցությունն ու նախանձը միմյանցով են ապրում, և ում մեջ այս արատներից մեկը կա, ուրեմն երկուսն էլ կան։

Այդ պատճառով, արգարև, երանի՛ նրա՛ն, ով չի ընկել այդ արատների մեջ և դրանցից

ոչ մեկով չի վարակվել: Քանզի իր եղբոր հետ անարդարացիորեն մրցակցողը դատապարտվում է սատանայի հետ:

Ով մրցակցում է, նա պարտված է, նրա մեջ նաև թշնամություն կա, նրան տանջում է ուրիշների հաջողությունը: Իսկ նախանձ և մրցակցությունն չունեցողին ուրիշների հաջողությունը չի տխրեցնում:

Երբ ուրիշին պատվի են արժանացնում, նա խռովքի մեջ չի ընկնում: Երբ ուրիշը մեծարվում է, նա չի անհանգստանում, քանի որ բոլորին առավելություն է տալիս, բոլորին իրենից գերադասում է, ինքն իրեն համարում է բոլորից անարժանն ու հետինը և բոլորին իրենից ավելի վեր է դասում, իրենից ավելի լավն է համարում:

Նախանձ չունեցողը պատվի չի ձգտում, ուրախացողների հետ ուրախանում է, իրեն փառավոր գործեր չի վերագրում, հաջողակներին օգնում է, հաճույքով է նայում բարի ուղիով ընթացողներին, գովաբանում է բոլոր նրանց, ովքեր ապրում են ինչպես հարկն է:

Եթե տեսնում է, որ եղբայրը լավ է անում իր գործը, չի խոչընդոտում նրան, այլ խրախուսում է իր խորհուրդներով:

Եթե տեսնում է մեկին, որ հանգստություն է տրվել, նրան չի մեղադրում, այլ սատար է կանգնում:

Եթե տեսնում է եղբոր զանցանքը, նրան չի վարկաբեկում, այլ օգտակար խորհուրդ է տալիս:

Եթե տեսնում է զայրացածի, նրան է՛լ ավելի չի բորբոքում, այլ սիրով հանգստացնում է՝ հորդորելով խաղաղվել:

Եթե վշտացյալի է տեսնում, չի քամահարում նրան, այլ վշտակցում է և սփոփում հոգեպարար խոսքով:

Եթե անուսի և տգետի է տեսնում, եռանդով ջանում է ուսուցանել նրան և ճիշտ ուղու վրա դնել:

Եթե անգիտակի է տեսնում, առանց նախանձի ցույց է տալիս լավի ճանապարհը:

Եթե տեսնում է, որ մեկը քնած է սաղմոսերգության ժամանակ, ջանադրաբար արթնացնում է նրան:

Կարճ ասած՝ իր մեջ նախանձ և մրցակցությունն չունեցողը ոչ մի գործում մերձավորին չի ծանակում, ընդհակառակը, աննախանձն ուրախանում է ընկերոջ բոլոր հաջողությունների և անձնվեր գործերի համար:

## Նախանձի և մրցակցութեան մասին

Իսկ ով վարակվում է նախանձով և մրցակցութեամբ, նա խղճուկ է, քանզի բանասեր-կուրի գործակիցն է, ում Աստուծոյ մահը աշխարհ եկավ (Իս. Սող. 2, 24):

Ում մեջ նախանձ և մրցակցութիւնն կա, նա բոլորի հակառակորդն է, քանզի չի ուզում, որ մեկ ուրիշը գերադասելի լինի իրենից: Նա նվաստացնում է խրախուսանքի արժանիներին, բարի ուղիով քայլողի ճանապարհին գայթակղութիւններ է հարուցում, բարեպաշտ կյանքով ապրողին կշտամբում է, երկյուղածներին՝ քամահարում, ծոմապահներին՝ սնափառ է անվանում, սաղմոսերգութեան մեջ ջանադիրին՝ ցուցամուր, ծառայութիւններ մատուցելու պատրաստ մարդուն՝ ագահ, գործերի մեջ ճարտարին՝ փառասեր, գրքերով ջանասիրաբար զբաղվողին՝ դատարկապորտ, պատասխանների մեջ հմուտին՝ որկրամուր:

Նախանձ մարդը երբեք չի ուրախանում ուրիշի հաջողութեան համար:

Եթե գործի մեջ ծուլացողի է տեսնում, բարի գործի չի առաջնորդի, այլ ավելի շուտ ի չարը կխոտորի:

Երբ տեսնում է, որ մեկն աղոթքի ժամին քնել է, չի արթնացնի, այլ ավելի շուտ հոգ կտանի, որ լուռթյուն պահպանվի:

Եթե տեսնի, որ եղբայրը հանգստի է մատնվել, կմեղադրի նրան: Եթե տեսնի եղբորը, որ ժամանակին ընկած է եղել, բոլորի առջև կվարկաբեկի:

Վա՛յ նախանձին, քանզի նրա սիրտը տկարանում է տրտմութիւնից, մարմինը՝ դժգունանում, և նրա ուժերը սպառվում են: Նա բոլորի համար անտանելի է, բոլորին թշնամի է, բոլորին ատում է, բոլորին շողոքորթում է, բոլորի դեմ դավեր է նյութում, ամենքի առջև դիմակ է կրում, այսօր մեկի հետ է ընկերանում, վաղը՝ մյուսի, և վերաբերմունքն ամեն ինչի նկատմամբ փոխվում է, յուրաքանչյուրի կամքին հարմարվում է և որոշ ժամանակ անց բոլորին պարսավում է, մեկին մյուսի մոտ անվանարկում է և բոլորի մեջ խռովութիւն է գցում:

Այսպիսով՝ սարսափելի թուլն են նախանձն ու մրցակցութիւնը, դրանցից են

ծնվում գրպարտանքները, ատելութունն ու սպանությունները: Այդ պատճառով, դուք՝ երկնային քաղաքացիության մարտիկներդ, որքան հնարավոր է հեռո՛ւ փախեք նախանձից, որքան հնարավոր է ձեզանից հեռո՛ւ վանեք մրցակցությունն ու նախանձը, որպեսզի սատանայի հետ մեկտեղ չդատապարտվեք:

### Չարախոս չլինելու մասին

Երանի՛ր և երիցս երանի՛ր նրան, ով իր լեզուն չի պղծում ուրիշներին չարախոսելով, ով լեզվով չի ապականում սիրտը, այլ հասկանում է, որ մենք բոլորս պատժի ենք ենթակա, և չի ուրախանում, երբ ուրիշները չարախոսում են, այլ ընդվզում է այդ կրքի դեմ:

Քանզի ուրիշին չչարախոսողը անբասիր է մնում:

Նա խոչընդոտի չի հանդիպում, և նրա խիղճը պղծված չէ: Ով փախչում է չարախոս ոգուց, նա իրեն հեռու է պահում չար մարդկանցից և հաղթում է դեերի բանակներին:

Ով չարախոս լեզու ձեռք չի բերում, նա ձեռք է բերում անանց գանձը:

Ով միտում չունի ուրիշներին չարախոսելու, նա խուսափում է եղբայրասպանությունից, և ուրիշներն էլ նրան չեն չարախոսի:

Ով չի գայթակղվել չարախոսության ոգով, նա ճշմարտապես ըմբռնել է, որ ինքը մարմնավոր է և իրեն չի արատավորել:

Ով չի համագործակցում չարախոսների հետ, նա հրեշտակների հետ է բնակվում:

Ով իր լեզուն և ականջները չի թունավորում չարախոսությամբ, նա լեցուն է սիրո բուժիչ գորություններով:

Ով իր շուրթերը չի պղծում չարախոսությամբ, նրա շուրթերը Սուրբ Հոգու պտուղների անուշահոտություն են բուրում:

Այդ պատճառով հիրավի երանելի է նա, ով զերծ է մնացել չարախոսությունից:

### Չարախոսության և չարախոսների մասին

Ով ուրախանում է ուրիշների չարախոսությունը լսելիս, նա ակնհայտորեն ցույց է տալիս, որ զբաղված է այն բանով, ինչի համար որ ինքն է չարախոսում ուրիշներին: Քանզի ուրիշներին չարախոսողը ինքն իրեն

է դատապարտում: Նա աշխարհի ցանցերում խճճված մարմնավոր մարդ է:

Չարախոսի մեջ ամեն բան կա՝ և՛ զրպարտություն, և՛ ատելություն, և՛ բամբասանք, ուստի նա եղբայրասպան, անխիղճ, անբարեգուլ մարդ է:

Իսկ ով իր մեջ միշտ Աստծո երկյուղն ունի, ում սիրտը մաքուր է, նա չի սիրում ուրիշներին չարախոսել, չի ուրախանում ուրիշների գաղտնիքներն իմանալիս, սիրտին չի փնտրում ուրիշների անկման մեջ:

Այդ պատճառով արդարև լացի ու արցունքների է արժանի նա, ով իրեն չարախոսության է վարժեցրել: Եվ ի՞նչն է դրանից ավելի ատելի: Այդ պատճառով սուրբ առաքյալը, արգելելով արատավոր գործերը, չարախոսին էլ է դասում այդ մեղքերը գործողների թվին. ո՛չ բամբասողներ, ո՛չ էլ հափշտակողներ Աստծո արքայությունը չպիտի ժառանգեն (Ա. Կորնթ. 6, 10):

### Ժուժկալության մասին

Երանի՛ և երիցս երանի նրան, ով ժուժկալ է, քանզի ժուժկալությունն էսպես մեծ առաքինություն է: Սակայն լսեք, թե այն ինչի

վրա է տարածվում, ինչի մեջ է գնահատվում, ինչի մեջ է պահանջվում:

Այսպես՝ կա լեզվի ժուժկալություն. այսինքն՝ շատ չխոսել և դատարկ բաներ չխոսել, տիրապետել լեզվին, խոսքով չվիրավորել, չերգվել, չդատարկաբանել ինչի մասին որ հարկ չէ, միմյանց չզրպարտել, չբամբասել եղբորը, գաղտնիքներ չբանալ, չզբաղվել այն բանով, ինչը մերը չէ:

Կա նաև լսողություն ժուժկալություն, այն է՝ տիրապետել լսողությանը և դատարկ ասելոսներին ուշք չդարձնել:

Կա տեսողության ժուժկալություն, այսինքն՝ տիրապետել տեսողությանը, հայացքը չուղղել կամ ուշադիր չնայել բոլոր հաճելի բաներին կամ որևէ անպարկեշտ բանի:

Կա դյուրագրգռության ժուժկալություն, այն է՝ տիրապետել բարկությունը և ակնթարթորեն չբորբոքվել:

Կա փառքի ժուժկալություն՝ տիրապետել սեփական ոգուն, չտենչալ փառաբանություն, փառք չփնտրել, չմեծամտանալ, պատվավոր կոչումներ չփնտրել, չգոռոզամտել, չերազել գովեստների մասին:

Կախորհուրդների ժողովալուծյունն՝ դրանք արմատախիլ անել Աստծո երկյուղով, չտարվել գայթակղուծյուն և հրայրք հարուցող խորհրդով և հաճույք չստանալ դրանից:

Կա ուտելու ժողովալուծյունն՝ տիրապետել ինքն իրեն և չփնտրել առատորեն մատուցվող կերակուրներ կամ թանկ ուտելիքներ, չուտել անժամանակ կամ որ ժամին պատահի, չտարվել որկրամոլության ոգով, ազահորեն չտարվել ուտելիքների համ ու հոտով և չկամենալ մեկ այս, մեկ այն ուտելիքը:

Կա խմելու ժողովալուծյունն՝ տիրապետել ինքն իրեն և չգնալ խնջույքների, հաճույք չստանալ գինիների հաճելի համից:

Առանց կարիքի գինի չխմել, չփնտրել գանազան ըմպելիքներ, հաճույքների հետևից չընկնել, այսինքն՝ չխմել հմտորեն պատրաստված խառնուրդներ, չափից ավելի չօգտագործել ոչ միայն գինին, այլև ջուրը:

Կա ժողովալուծյունն արատավոր հեշտասիրության մեջ՝ տիրապետել զգացմունքներին, չտրվել պատահաբար բռնկվող ցանկություններին, զոհ չգնալ հեշտասիրություն բորբոքող խորհուրդներին:

Հաճույք չստանալ այն բաներից, որոնք հետո ատելություն են ծնում իրենց հանդեպ, չկատարել մարմնի կամքը, այլ կրքերը սանձել Աստծո երկյուղով:

Քանզի նա է իսկապես ժողովալ, ով անմահ բարիքներ է փափագում և միտքը հառելով դրանց, նողկում է մարմնական ցանկությունից, զագրում է հեշտասիրությունից, մարդու վրա ստվեր գցող արատից, չի սիրում նայել կանանց դեմքերին, չի գերվում մարմնի արտաքին տեսքով, չի հրապուրվում գեղեցկություններով, հաճույք չի ստանում հոտոտելիքի համար ախորժելի բաներից, չի հրապուրվում գովասանքի խոսքերով, կանանց մոտ երկար չի մնում, հատկապես անհամեստների, նրանց հետ երկար զրույցի չի բռնվում:

Ով ճշմարտապես արի ու ժողովալ է և իրեն պահպանում է անպարագրելի երանության համար, նա ժողովալ է իր բոլոր խորհուրդների մեջ, և հաղթահարում է ամենայն ցանկություն՝ ավելի լավը փափագելով և գալիքի երկյուղով:

## Անժողովալուրթյան մասին

Ով ժողովակալ չէ և ում մեջ չկա ժողովակալություն, նա դառնում է ամենայն անպարկեշտություն որսը:

Անժողովակալը նաև հեշտասեր է:

Անժողովակալը հաճույք է ստանում շատախոսությունից և դատարկաբանությունից: Նրան դուր է գալիս դատարկախոսությունն ու սրախոսությունը, նրան հաճելի է ուտելիքների քաղցրությունը, նա իր խիզախությունը ցուցաբերում է շատակերության և շատ խմելու մեջ, հրապուրվում է ունայն հաճույքներով, հակվում է դեպի անմաքուր խորհուրդները, հաճույքներ սիրելու պատճառով անխոհեմություն է տրվում, փառքի հետևից է ընկնում, երազում է մեծարանքի մասին որպես մի բանի, որն արդեն իր ձեռքում է:

Կանանց հանդիպելիս զվարճանում է, տարվում է նրանց գեղեցկությամբ:

Մարմնի գույնի պայծառությունը ճոխությունը նրան խելքահաս է անում, դեմքի բարետեսությունը հիացնում է, մարմնի վալելչակազմությունը հմայում է նրան, կա-

նանց և ծաղրաբանների հետ զրուցելիս հաճույքից հավրում է:

Տեսածը վերհիշելիս երազում է, նրա մեջ հուշերը գերակայում են, նա մտքում հստակ պատկերացնում է կանանց դեմքերը, ձեռքերի շփումը, մարմինների գրկախառնումները, անդամների հպումները, կրքոտ արտահայտությունները, դյուլթիչ ժպիտները, աչքերի խաղը, հագուստների շքեղությունը, մարմնի գեղեցիկ գույնը, շողոմ խոսքերը, շուրթերի սեղմումը, մարմնի հաճելիությունը, շարժումների արտահայտչականությունը, հանդիպումների ժամանակն ու տեղը և այն ամենը, ինչը ծառայում է հաճույքներին: Ահա թե ինչ է տուփասերն ու անժողովակալը վառ գույներով պատկերացնում իր մտքում՝ հակվելով դեպի այդ խորհուրդները:

Երբ այդպիսի մարդը տեսնում է, որ ողջախոհության մասին գիրք են կարդում, մոռյվում է, երբ տեսնում է, որ հայրերը հավաքված խորհրդածում են օգտավետ բաների մասին, խուսանավում է և հավանության չի արժանացնում, հայրերի խստակրոն վարքը տեսնելիս վրդովվում է, երբ պահքի մասին խոսք է լսում, ըմբոստանում է:

Միաբանների հավաքները նրան դուր չեն գալիս, իսկ երբ տեսնում է կանանց, պայծառանում է, հետ ու առաջ է վազում, որպեսզի իր ծառայությունները մատուցի, այդժամ նա երգելու ձայն էլ ունի, ունի նաև սուր խոսք ասելու և զվարճանալու ընդունակություն, որպեսզի հաճույք պատճառի և՛ ինքն իրեն, և՛ ներկա գտնվող կանանց, և՛ հաճելի ու հետաքրքիր կողմերով երևա:

Մնջանքի մեջ նա տաղտկալի է և տկար: Այդ պատճառով դժբախտ և խղճուկ է նա, ով չունի ամենայն ժուժկալություն և ժուժկալություն՝ ամեն ինչում:

Այդ պատճառով, եղբայրներ՛ր, լսելով, թե ինչպիսին են ժուժկալության պտուղները և թե ինչպիսին է անժուժկալության հունձքը, հեռո՛ւ մնանք վերջինից և փարվենք ժուժկալությանը:

Քանզի մեծ է ժուժկալության վարձքը, և չիք սահման նրա մեծությունը: Այդ պատճառով երանի՛ նրան, ով իսկապես ժուժկալություն է ձեռք բերել: Երանի՛ նրան, ով հաստատվել է ամենայն առաքինության մեջ և ջանացել է փայլել բարի գործերով: Երանի՛ նրան, ով Աստծուն թաքուն անհաճո բաներ

չի արել, այլ ծառայել է նրան ամենայն ճշմարտությամբ:

Երանի՛ նրան, ով չի տարվում ունայն խորհուրդներով:

Իսկ ի՞նչ անեմ ես, եթե գովաբանում եմ բոլոր առաքինությունները, սակայն դրանցից ոչ մեկի մեջ չեմ առաջադիմել, այլ տարիներս անցկացրել եմ բազմաթիվ արատավոր գործերում: Եվ իմ օրինակով էլ է կատարվում ասվածը. Վա՛յ ձեզ ևս, օրեմագետներ, որ մարդկանց դժվարակիր բեռներ եք բարձուս, բայց դուք ինքներդ մեկ մատով իսկ բեռներին չեք դիպչում (Ղուկ. 11, 46): Այդ պատճառով հայցում եմ ձեր համընդհանուր սերը, Քրիստոսո՛վ օրհնվածներ, դրախտի՛ մասնակիցներ, ամենքդ ջանացե՛ք հաճո լինել մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Ով իր գորքի մեջ է անդամագրել ձեզ, որպեսզի ձեզանից ոչ մեկը չմերժվի անփութության և անհոգության համար: Դուք բոլորդ, որ Քրիստոսի վերին շնորհով լծի տակ եք մտել, զգուշացե՛ք մարմնի կամակատարները լինելուց, որպեսզի անպատասխան չմնանք Ահեղ ատյանի առաջ, որտեղ բոլորին հատուցում կլինի թե՛ բարի, թե՛ չար գործերի համար (Բ Կորնթ. 5, 10): Բայց վա՛յ ինձ այդ ժամին, որովհետև

պիտի ներկայանամ առանց սխրագործության: Եվ ի՞նչ անեմ ես այդ անխուսափելի հատուցման ժամին:

Երանի՜ նրանց, ովքեր համարձակ կկանգնեն Դատավորի առջև, ովքեր Աստծո ձեռքից կընդունեն սրբազան պարգևը:

Բայց վա՛յ նրանց, ովքեր ամոթահար կլինեն ատելի և անարժեք գործերի համար:

Օրինակ՝ ի՞նչ արդարացում կարող է ունենալ փառասիրության, գոռոզամտության, անհնազանդության, անհաշտության, որովայնամոլության, թեթևամտության, շատախոսության, գոռոզամտության, ինքնագլխության, մեծամտության, նախանձի, թշնամության, դյուրագրգռության, չարախոսության, բանսարկության մեջ մեղադրվողը:

Ի՞նչ արդարացում կգտնի նա, ով կմեղադրվի այդ քստմենելի արատներում:

Ի՞նչ օգուտ կամ ի՞նչ հաճույք ենք ստանում դրանցից: Բայց և ի՞նչ դժվար է դրանցից ազատվելը:

Այդ պատճառով պաղատում եմ ձեզ, եղբայրներ՛ր, ջանացե՛ք, որ ձեզանից ոչ մեկը չմեղադրվի այդ մեղքերից որևէ մեկի մեջ:

Քանզի երբ մարդ գիտակցում է իր ծանր մեղքերը (դա շատ լավ գիտեմ), դրանով իշխանություն է ունենում ինքն իր վրա: Իսկ այդ մեղքերն ամենքն արհամարհում են որպես ոչինչ չնշանակող բաներ, ամեն ոք քամահրում է՝ մտածելով, որ դրանց մասին չեն էլ հարցնի:

Բայց հենց այդ արատներով է մեզ որսում սատանան, քանզի այնպես է անում, որ մեզանից յուրաքանչյուրը անտեսում է դրանք, որպես ոչինչ չնշանակող բաներ:

Ուրեմն ջանացե՛ք, որպեսզի այդ մեղքերի պատճառով որս չդառնաք, այլ ընդհակառակը, ամենայն զգուշությամբ հետևե՛ք ինքներդ ձեզ, որպեսզի փառավորվեք Քրիստոսի հետ. նրան փա՛ռք հավիտյանս հավիտենից: Ամեն:

## Ինքնամերկացում և խոստովանանք

Եղբայրներ՛ր, ձեր սրտացավությանը կարեկի՛ց եղեք ինձ: Քանզի զուր չէ Սուրբ Գրքում ասված. Եղբորից օգնություն ստացած եղբայրը անան է ամուր քաղաքի. նա հզոր ու բարձր է ինչպես հաստատուն թագավորությունը (Առակ. 18, 19): Եվ կրկին

ասում է. Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցե՛ք և միմյանց համար աղոթք արեք, որպեսզի բժշկվեք (Հակ. 5, 16):

Այսպիսով՝ Աստծո՛ւ ընտրյալներ, ընդառա՛ջ ելեք մարդու կոչմանը, ով խոստացել էր հաճո լինել Աստծուն, բայց խաբեց իր Արարչին: Ընդառա՛ջ ելեք, որ ձեր աղոթքներով ես ազատվեմ ինձ պաշարած մեղքերից, և ապաքինվելով՝ հառնեմ մահացու մեղքի մահճից, քանզի դեռևս մանկուց դարձել եմ անպիտան և անազնիվ անոթ:

Եվ այժմ, երբ լսում եմ Դատաստանի մասին, դրան ուշք չեմ դարձնում, ասես անկումներից և մեղադրանքներից վեր եմ կանգնած: Ուրիշներին հորդորում եմ հեռու մնալ վնասակար բաներից, իսկ ինքս կրկնակի եմ այդ անում:

Վա՛յ ինձ, ինչպիսի՛ դատապարտության արժանացա:

Վա՛յ ինձ, ինչ ամոթի մեջ եմ: Վա՛յ ինձ: Իմ մեջ թաքնվածն այնպիսին չէ, ինչպիսին տեսանելին է: Ուստի եթե շուտով ինձ համար չչողա Աստծո առատաշնորհությունը, ապա ես գործերով փրկվելու ոչ մի հույս չեմ ունենա: Քանզի մաքրություն եմ քարոզում,

բայց մտածում եմ անառակության մասին, խոսք եմ ասում առաքինության մասին, բայց զօր ու գիշեր մտքումս անազնիվ կրքերն են: Եվ ի՞նչ արդարացում պիտի ունենամ:

Վա՛յ ինձ, ի՛նչ չարչարանք է ինձ սպասում: Արդարև, իմ մեջ սոսկ առաքինության պատկերն է, բայց ոչ նրա զորությունը: Ի՞նչ երեսով պիտի կանգնեմ Տեր Աստծո առաջ: Ո՞վ գիտե սրտիս ծածուկները: Այդպիսի աղտեղի գործերի համար պատասխանատվության տակ լինելով, երբ աղոթքի եմ կանգնում, վախենում եմ, որ երկնքից հուրը կիջնի և կոչնչացնի ինձ: Քանզի եթե անապատում Տիրոջից բխած կրակը այրեց ամառուր կրակ բերողներին (Ղևտ. 10, 1-2 ), ապա ի՞նչ պիտի սպասեմ ինքս ինձ համար, որ այդչափ մեղքերի բեռան տակ եմ:

Ուրեմն ի՞նչ: Կորցնե՞մ իմ փրկության հույսը: Ամենևին: Քանզի հենց դրան է սպասում հակառակորդը: Ինչքան շուտ է նա որևէ մեկին հասցնում հուսահատության, այնքան արագ է տապալում նրան: Իսկ ես չեմ հուսահատվում, այլ հաստատակամորեն հույսս դնում եմ Աստծո առատաշնորհության և ձեր աղոթքների վրա: Այդ պատճառ

ուով մի՛ դադարեք հայցել Աստծո մարդասիր-  
ությունը, որպեսզի սիրտս ազատագրվի ա-  
նազնիվ կրքերի ստրկությունից:

Կարծրացել է սիրտն իմ, փոխվել է բանա-  
կանությունն իմ, մթագնել է միտքն իմ.  
ինչպես շունը՝ վերադառնում եմ իմ փսխածին  
(Բ Պետ. 2, 22): Չկա իմ մեջ մաքուր ապաշխա-  
րանք, չկան իմ մեջ արցունքներ աղոթքի ժա-  
մին, չնայած ես հառաչում եմ, խոժոռում եմ  
իմ ամոթահար դեմքը, կուրծքս ծեծում, որ  
կրքերի կացարան է դարձել:

Փա՛ռք Քեզ, Ներողամի՛տ:

Փա՛ռք Քեզ, Երկայնամի՛տ:

Փա՛ռք Քեզ, Անհիշաչա՛ր:

Փա՛ռք Քեզ, Բարերա՛ր:

Փա՛ռք Քեզ, միա՛կ Գերիմաստուն:

Փա՛ռք Քեզ, հոգիների և մարմինների՛  
Բարերա՛ր:

Փա՛ռք Քեզ, Ով իր արեգակը ծագեցնում է չա-  
րերի և բարիների վրա և անձրև է թափում արդարների և  
սեղավորների վրա (Մատթ. 5, 45):

Փա՛ռք Քեզ, որ սնում ես բոլոր ժողո-  
վուրդներին և ողջ մարդկային ցեղը, որպես  
մեկ մարդու:

Փա՛ռք Քեզ, որ սնում ես և՛ երկնքի

թռչուններին, և՛ գազաններին, և՛ սողուննե-  
րին, և՛ ջրի մեջ ապրող կենդանիներին, ան-  
գամ աննշան ճնճողակին, Բոլորը Քեզ եմ ապաստւմ,  
որ Արանց ուսելիքը ժամանակին տաս (Սաղմ. 103, 27):  
Մեծ է Քո իշխանությունը և առատաշնորհու-  
թյունը Քո բոլոր գործերում, Տե՛ր (Սաղմ. 144, 9): Դրա  
համար աղաչում եմ Քեզ, Տե՛ր, մի՛ մերժիր  
ինձ նրանց հետ, ովքեր ասում են Քեզ՝ Տե՛ր,  
Տե՛ր և չեն կատարում Քո կամքը (Մատթ. 7, 21):

Աղաչում եմ Քեզ բոլոր նրանց աղոթքնե-  
րով, ովքեր հաճո են Քո առաջ, քանզի Քեզ  
հայտնի է իմ մեջ թաքնված կիրքը, Դու գի-  
տես արատներն իմ հոգու: Բժշկի՛ր ինձ, Տե՛ր, և  
ես բուժված կլինեմ (Երեմ. 17, 14):

Եղբայրներ, ինձ հետ ջանադիր եղե՛ք ա-  
ղոթքներում: Ծնորհներ խնդրեք Նրա բարե-  
գթությունից: Քաղցրացրե՛ք հոգիս, որին  
մեղքերը դառնացրել են: Դո՛ւք, որ արժանի  
եք դարձել Նրա ծառաները լինելու, որպես  
խաղողի ճյճարիտ որթատունկի ճյուղեր, ծա-  
րավյալին խմեցրե՛ք կյանքի Աղբյուրից:  
Դուք, որ դարձել եք լույսի որդիներ, լուսա-  
վորե՛ք սիրտն իմ: Դեպի կյանքի ուղին ա-  
ռաջնորդե՛ք ինձ՝ մոլորյալիս, դուք, որ միշտ  
այդ ճանապարհին եք: Դուք, որ դարձել եք

ժառանգորդներն արքայության, նե՛րս մտցրեք ինձ արքայական դարպասներով, ինչպես տանտերն է նե՛րս առնում իր ծառային, որովհետև սիրտս այնտեղ է ձգտում: Թող ձեր խնդրանքով ինձ բաժին ընկնեն Աստծո շնորհները, քանի դեռ չեմ խառնվել անօրինություն գործողներին:

Այնտեղ հայտնի կդառնան և՛ խավարի մեջ, և՛ բացեիբաց արված գործերը: Ինչպիսի՛ ամոթ կհամակի ինձ, երբ նրանք, որ այժմ ինձ անարատ են ասում, դատապարտված կտեսնեն ինձ: Թողնելով հոգևոր գործերս՝ ենթարկվեցի կրքերին:

Սովորել չեմ կամենում, բայց ուրախությամբ սովորեցնում եմ:

Ենթարկվել չեմ սիրում, սակայն սիրում եմ, որ ինձ ենթարկվեն:

Աշխատել չեմ սիրում, բայց սիրում եմ հետևել ուրիշների գործերին:

Չեմ սիրում պատվի արժանացնել, բայց սիրում եմ, երբ ինձ են պատիվ տալիս:

Չեմ սիրում, երբ ինձ նախատում են, բայց սիրում եմ նախատել ուրիշներին:

Չեմ ուզում, որ հպարտանան, բայց սիրում եմ հպարտանալ:

Չեմ ուզում, որ ինձ մերկացնեն, բայց սիրում եմ մերկացնել ուրիշներին:

Չեմ ուզում ներում շնորհել, բայց ներում եմ փնտրում:

Չեմ ուզում դիտողություններ լսել, բայց սիրում եմ դիտողություններ անել:

Չեմ սիրում, որ ինձ նեղացնում են, բայց սիրում եմ նեղացնել:

Չեմ ուզում, որ ինձ վնաս հասցնեն, բայց ջանում եմ ինքս վնասել:

Չեմ ուզում, որ բամբասեն ինձ, բայց սիրում եմ բամբասել:

Չեմ ուզում լսել, բայց ջանում եմ, որ ինձ լսեն:

Չեմ ուզում, որ ինձ իշխեն, բայց սիրում եմ ինքս իշխել:

Իմաստուն եմ խորհուրդներ տալու, այլ ոչ դրանք կատարելու գործում:

Ասում եմ, թե ինչ է պետք անել, բայց հակառակն եմ անում:

Ո՞վ չի արտասվի ինձ համար:

Լացե՛ք, սուրբե՛ր և արդարակյացնե՛ր, լացե՛ք ինձ համար՝ խավարի, այլ ոչ թե լույսի գործերը սիրողիս համար:

Լացե՛ք, բարեխնամներ՛ր, լացե՛ք անպիտանիս համար:

Լացե՛ք, ներողամիտներ՛ր և զգայուններ՛ր, ներվածիս և վշտացնողիս համար: Դուք, որ վեր եք կանգնած ամենայն պարսավանքից, լացե՛ք ինձ համար, որ թաղվել եմ անօրինուլթյունների մեջ:

Լացե՛ք, բարեսերներ՛ր և բանսարկուլթյունը ատողներ՛ր, լացե՛ք ինձ համար, որ սիրում եմ նենգապատիր բաներն ու ատում եմ բարին:

Դուք, որ անձնուրաց կյանք եք ձեռք բերել, լացե՛ք ինձ համար, ով միայն երևութապես է լքել աշխարհիկ կյանքը:

Աստծուն հաճո դարձածներ՛ր, լացե՛ք մարդահաճոյիս համար:

Դուք, որ կատարյալ սեր եք ձեռք բերել, լացե՛ք ինձ համար, ով միայն խոսքով է սիրում մերձավորին, իսկ իրականում ատում է:

Ինքներդ ձեր մասին հոգացողներ՛ր, լացե՛ք ինձ համար, ով զբաղվում է ուրիշների գործերով:

Համբերուլթյուն ձեռք բերածներ՛ր և Աստծուն պտուղներ մատուցողներ՛ր, լացե՛ք անհամբերիս և անպտուղիս համար:

Դուք, որ սիրում եք խրատը և ուսումը, լացե՛ք անուս և անպետք մարդուս համար:

Դուք, որ բաց ճակատով եք կանգնում Աստծո առաջ, լացե՛ք ինձ համար, որ արժանի չեմ հայացքս վեր բարձրացնելու և տեսնելու երկնային բարձունքը:

Դուք, որ ձեռք եք բերել Մովսեսի հեգուլթյունը, լացե՛ք ինձ համար, որ կամովին կորցրեցի այն:

Դուք, որ ձեռք եք բերել Հոբի համբերուլթյունը, լացե՛ք ինձ համար, մի մարդու, որին խորթ է համբերուլթյունը:

Դուք, որ առաքելական անընչասիրուլթյուն ձեռք բերեցիք, լացե՛ք ինձ համար, որ հեռու եմ դրանից:

Լացե՛ք, հավատարիմներ՛ր և մնայուններ՛ր, ձեր սրտում՝ Աստծո առջև, լացե՛ք երկերեսանիիս, երկչոտիս և ամեն ինչի մեջ անպիտանիս համար:

Լացե՛ք, լա՛ցը սիրողներ և ծիծաղը ատողներ, լացե՛ք ինձ՝ ծիծաղը սիրողիս և լացն ատողիս համար:

Դուք, որ անապական պահեցիք Աստծո տաճարը, լացե՛ք ինձ համար, ով պղծեց և անմաքուր դարձրեց այն:

Դուք, որ հիշում եք բաժանման և անխուսափելի ուղու մասին, լացե՛ք անհուշ մարդու և այդ ճանապարհորդությանը անպատրաստ լինելու համար:

Դուք, որ չեք մոռանում մահվանից հետո Դատաստանի մասին, լացե՛ք ինձ համար, ով պնդում է, թե հիշում է այդ մասին, սակայն դրան հակառակն է անում:

Լացե՛ք, Երկնային Արքայուհի՛ն ժառանգորդներ, լացե՛ք ինձ համար, որ արժանի եմ դժոխքի կրակներին:

Վա՛յ ինձ, որովհետև մեղքն իմ ոչ մի անդամն առողջ չի թողել: Վերջը մոտ է, եղբայրներ, և դա ինձ չի անհանգստացնում: Ահա բացեցի ես ձեր դեմ հոգուս վերքերը: Ուրեմն մի՛ արհամարհեք ինձ՝ ամոթապարտիս, այլ պաղատեցեք Բժշկին հիվանդի համար, Հովվին՝ դառնուկի, Արքային՝ գերեվարվածի, Կյանքին՝ մեռյալի համար: Պաղատեցե՛ք, որպեսզի իմ բազում մեղքերի թողութունն ստանամ մեր Տեր Հիսուս Քրիստոսով, և որպեսզի Նա առաքի իր բարիքը և ամրապնդի սասանվող հոգիս: Քանզի պատրաստվում եմ կրքերի դեմ պայքարի, բայց դրանց դեմ տակավին պայքարի մեջ չմտած՝ օձի չա-

րանենգությունը թուլացնում է հոգուս ամրությունը հեշտասիրությամբ, և ես դառնում եմ կրքերի գերի: Ջանում եմ կրակից հանել նրանում այրվողին, սակայն երիտասարդ լինելուս պատճառով կրակի հոտը հրապուրում է ինձ: Մինչ ձգտում եմ փրկել խեղդվողին, նրա հետ խեղդվում եմ անփորձության պատճառով: Կամենալով դառնալ կրքերի բժիշկ՝ ինքս եմ մնում դրանց իշխանության ներքո և բժշկելու փոխարեն տառապյալին վերքեր եմ հասցնում: Ինքս կույր եմ, մինչդեռ հանդգնում եմ կույրերին ուղեկցել: Այդ պատճառով ինձ համար աղոթքների հույժ կարիք ունեմ, որպեսզի ինքս չափն իմ ճանաչեմ, և որպեսզի Աստծո երանությունը համակի ինձ և լուսավորի խավարյալ սիրտն իմ, և իմ մեջ անգիտության փոխարեն ներդնի Աստծո իմացությունը. որովհետև Աստծո համար անկարելի բան չկա (Ղուկ. 1, 37):

Նա անանցանելի ծովն իր ժողովրդի համար անցանելի դարձրեց: Ե՛վ անձրևի տեղ մանանա տեղացրեց նրանց վրա, և՛ ծովի ավազի պես՝ թեւավոր թռչուններ (Սաղմ. 77, 13, 24, 27): Նա ժայռից ջուր հանեց և պարզեց ծարավյալներին:

Նա՝ Միակը, իր ողորմածությամբ փրկեց ավազակների ձեռքն ընկածին: Թող Նրա բարեգլխությունը տարածվի մեղքերի մեջ ընկածիս և անմտություն կապանքներով կապվածիս վրա: Իմ մեջ արիությունն չկա սրտերը և ծածուկները Քրիստոսի առջև: Ոչ ոք չի կարող բռնկել իմ հիվանդությունը՝ բացի Նրանից, Ով գիտե սրտի ծածուկները:

Քանի՜ անգամ եմ ես ինձ սահմաններ կարգել և որմեր կառուցել իմ և անօրեն մեղքի ու այն հակառակորդների միջև, որոնք իմ դեմ մարտի էին դուրս գալիս: Միտքս անցնում էր սահմանները և քանդում էր որմերը, քանզի սահմանները ապահովված չէին Ամենակատարյալի երկյուղով և որմերը հիմնված չէին անկեղծ ապաշխարության վրա:

Այդ պատճառով այժմ էլ բախում եմ դուռը, որպեսզի բացվի ինձ համար: Ձեմ դադարում խնդրելուց, որ ստանամ խնդրվածը, անամոթի պես ներման եմ ձգտում:

Փրկի՛չ, Դու ինձ բարիքներ ես շնորհում: Բայց ես խորամանկությամբ եմ փոխհատուցում: Համբերատար եղի՛ր անառակացածիս հանդեպ: Պարապ խոսքերս ներելու համար չեմ պաղատում Քո բարեգլխությունը, այլ նե-

րողամտությունն եմ հայցում՝ անմաքուր գործերիս համար:

Տե՛ր, քանի դեռ իմ համար վերջը վրա չի հասել, ազատի՛ր ինձ ամենայն նենգապատիր բաներից, որպեսզի Քո առջև բարիք ձեռք բերեմ մահվան ժամին. Քանզի չկա մեկը, որ դժոխքում գոհանա քեզանից (Սաղմ. 6, 6):

Տե՛ր, փրկի՛ր հոգիս գալիք վախից և քո առատաձեռնությամբ ու ողորմածությամբ մաքրի՛ր իմ ապականված շուրջառը, որպեսզի ես՝ անարժանս, պայծառ պատմուճանով հանդերձավորված՝ արժանանամ Երկնային Արքայությանը և հասնելով չակնկալվող բերկրանքին՝ ասեմ. «Փա՛ռք առյուծի երախից մորմոքուն հոգուն Ազատողին և նրան երանավետ դրախտում Դնողին»:

Քանզի Քեզ՝ Ամենասուրբ Աստծուն, վայել է փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:



## Արդարակյաց կյանքի մասին

1. Արդարակյաց կյանքի<sup>օ</sup> ես ձգտում: Վարժեցրո՛ւ քեզ խոնարհամտության, քանզի առանց դրա արդարակյաց կյանքն անհնար է:

2. Ճամփորդը, սկզբում ճանապարհը կորցնելով, դեգերում է օտար վայրերում, այդպես էլ խոնարհների ուղուց շեղվողը իր հյուղակը չի հիմնադրի արդարակյացների շենքերում:

3. Բոլոր գործերդ խոնարհամտությա՛մբ կատարիր հանուն մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի, և դրանով քո պտուղը երկինք կառաքվի: Իսկ գոռոզամտությունը նման է շատ բարձր, բայց փտած ծառի, որի բոլոր ճյուղերը կոտրտուն են, և եթե մեկը բարձրանա նրա վրա, իսկույնեթ բարձունքից կընկնի:

4. Մարդու նահանջի սկիզբը խոնարհամտությունից հեռանալն է, իսկ Աստծուց լքվածին, ինչպես Սավուղին, Աեդում է չար ոգիս (ԱԹագ. 16, 14):

5. Մեղքի կապանքները համարիր ծանր ճնշում, դրանք քեզ մեղքի ալիքների մեջ կթաղեն մինչև մահ:

6. Եթե ուշադիր զննես, կտեսնես, որ թշնամու ցանցը մեղրով և քաղցրավենիքով է լցված, և ճաշակել ցանկացողը կընկնի դրա մեջ:

7. Մի՛ փափագիր այդպիսի մեղր և ցանցը չես ընկնի. այդ մեղրը սիրողների քաղցրությունը հետագայում մաղձով և դառնությունամբ է լցվում:

8. Սիրի՛ր խոնարհամտությունը և երբեք չես ընկնի սատանայական ցանցը, քանզի ճախրելով արագահաս թևերով՝ միշտ վեր կլինես թշնամիների ցանցից:

9. Գրավիչ, գեղեցիկ հագնված և ծառաների խմբով շրջապատված ամբարտավան մարդու տեսնելիս մի՛ նախանձիր և մի՛ շփոթվիր, այլ մտքով ժուժկա՛լ եղիր և որոշ ժամանակ անց նրան կտեսնես թոշնած, քանզի ծաղկում և շողում են միայն նրանք, ովքեր ապրում են ըստ Աստծո կամքի:

10. Աստծուն հաճո դարձած և փութաջան մարդիկ ուշք չեն դարձնում կյանքում գրավիչ բաներին՝ լավ իմանալով, որ այդ ամենը, ինչպես խոտի գույն, շուտով կթոշնի: Իսկ մենք՝ ոչ փութեռանդներս, մարմնի պարարտություն, երեսի կարմրություն տեսնելիս այդպիսի մարդուն երանելի ենք համարում, չնայած նա շատ մեղսավոր կյանքով է ապրում: Մենք մեզանից հեռու ենք վանել տքնալից կյանքը՝ չիմանալով, թե ինչ արժանապատվություն կա ճգնավորների կյանքում, քանզի ատում ենք առաքինությունը և դարչում ենք սրբություններից:

11. Եղբայրներ, ուշք չդարձնե՛նք մանկական խաղալիքներն, այլ հավերժ ընտրենք կատարյալ կյանքը, որպեսզի չզրկվենք ճգնակյացների բերկրանքից և մեզ չմատնենք հավերժական չարչարանքների:

12. Երանի բարի հույսերով արգասավորվածին և բարի խորհուրդներով լուսավորվածին, նրա փառքը մեծ և անվերջանալի է:

13. Զգտենք մնջանքի, որպեսզի, տեսնելով մեր մեղքերը, մշտապես խոնարհ լինենք և թունավոր անասունների նման մեր մեջ

չդաստիարակենք նենգության և ինքնահավանության խորհուրդներ:

14. Սիրենք մնջանքը, որպեսզի մաքուր սիրտ ունենանք և որպեսզի մեզ վստահված տաճարը մեղքերով չպղծվի և անապական մնա:

15. Հիասքանչ է հոգոցներով լի և արտասովից աղոթքը, հատկապես եթե լուռ ենք արտասվում: Ամենքին լսելի լինելու համար ճշալը մարդկանց հաճո լինելու նշան է, իսկ ով աղոթում է տնօրինաբար և հավատով, նա իր առջև տեսնում է Աստծուն. «Բա՛նի որ Արամով ապրում եմք և շարժվում եմք և կանք (Գործք 17, 28):

16. Եթե սիրտդ կարծրացել է, արտասվի՛ր Աստծո առաջ, որպեսզի քեզ վրա իջնի Նրա իմացության պայծառությունը, և մի՛ քմծիծաղիր նրանց վրա, ովքեր Աստված են կանչում ջերմեռանդ սրտով:

17. Մշակների վրա ծիծաղողը չարանենգների գերին է դառնում՝ կատարելով նրանց զազրելի ցանկությունները: Այդպիսի մարդը չի գտնի Տիրոջ ծառաների համար պահված բերկրանքը:

18. Իսկ դո՛ւ, ճգնակյա՛ց, քո գործերը միշտ իմացուծյա՛մբ կատարի, որ վերացնես պատճառ փնտրողների պատճառաբանությունները (Բ Կորնթ. 11, 12):

19. Վա՛յ անողորմին: Վա՛յ խաբեբային: Վա՛յ հեշտասերին: Նրանց ընդառաջ կգա դառը դժոխքը: Նրանք որովայնամոլությամբ ստրկության են մատնվում, և այս ունայն կյանքում իշխանություն և պաշտոններ ստանալու համար անարգում են Աստծուն: Սակայն հանկարծ վրա հասավ մահը, ցամաքեցրեց կոկորդը, որով հաճախ թանկարժեք ուտեստներ էին վայելում, խլեց իշխանությունը, որի համար նրանք անարգում էին իրենց Արարչին: Եվ, ի վերջո, դժբախտների մարմինները՝ որպես ապականություն, նետված են հողին, իսկ նրանց հոգիները դրվում են իրենց տեղը:

20. Տեսնելով կյանքի հաճույքները՝ զգուշացի՛ր, որ դրանք քեզ չգրավեն: Քանզի դրանց մեջ է թաքնված մահացու ցանցը: Քանզի ձկնորսը կարթը դատարկ տեղը չի նետում:

21. Բոլոր հոգիներին իր իշխանության տակ պահելու համար պիղծ թշնամին խայծ է դարձնում ցանկությունները:

22. Թշնամու կամքով առաջինն ինքը՝ որսված հոգին, ցանց է դառնում նաև այլ հոգիների համար՝ հաճո լինելով դեռևս օձի դառնությունները չճաշակածներն: Բռնված աքարը այդպես խայծ է դառնում դեռևս ծողակը չընկածների համար: Քանզի թռչնորսը այդ խայծով որսում է ազատության մեջ ճախրող թռչուններին:

23. Վարժվի՛ր առաքինությանը՝ չտրտմելով գործերից, որովհետև առանց գործերի առաքինությունը չի ճանաչվում:

24. Տքնության ժամանակ հոգևոր աչքդ հառի՛ր վշտին և տեսնելով այդ բերկրանքը, գործերից չես հրաժարվի:

25. Անդադար տրվի՛ր գործերին, որպեսզի խոսափես հոգնեցուցիչ, ունայն զբաղումներից, քանզի առաքինիների գործերը աճեցնում են կենաց պտուղը, իսկ մեղավորների գործերը լի են կործանումով:

26. Հանուն Աստծո տա՛ր այս կյանքի վշտերը և ճշմարիտ ուղու վրա կլինես սրբերի ապավինություն, իսկ թշնամու լուծը իր հետ տրամուլթյուն է բերում, որից ծնվում է մահը:

27. Ունայն կյանքի համար աշխատողները ջանում են մոլորեցնել բանիմաց տքնողներին, որպեսզի նրանց կողքին իրենք մերկ չերևան: Բայց երբ նրանք հարձակվում են բարեպաշտ սխրագործների վրա, դա ճգնակյացների մեջ ի հայտ է բերում պսակի արժանի մարդկանց:

28. Վարժվի՛ր խոնարհամտություն, որպեսզի չկորցնես բարի գործերի պտուղները: Իսկ եթե հեղուլթյունդ կորցնես, ապա ինքդ կդասվես ունայն բաների համար աշխատողների շարքին:

29. Կամենում ե՞ս դառնալ հոգու կառավար: Բոլոր կողմերից քեզ պաշտպանի՛ր վտանգներից որպես ողջախոհ մարդ, որպեսզի չապականվես հեշտասեր խորհուրդներով և չխորտակվես նավահանգստում:

30. Եթե ուզում ես, որ նավահանգիստն անվտանգ լինի, շուրջբոլորը պատի՛ր ամուր

պատվարներով, որոնք հանկարծ չտատանվեն կրքերի փոթորկից, այլապես նավահանգիստը խորտակման վայր կդառնա:

31. Մի՛ կապիր խարիսխը խարսխին, քանի դեռ քո մեջ ինչ–որ թեթև բան է մնացել, որպեսզի քեզ կրքերը չգրավեն: Ով ուզում է հանել փոսն ընկածին, նա պիտի գործին ձեռնամուխ լինի անվեհեր ոգով, որպեսզի ընկածի համար իջեցրած խարսխն իրեն էլ չբաշի նույն խորխորատը: Քանզի կրքոտ խոսքերը հենց որ իրենց համար տեղ են բացում, ասես կարթով որսալով՝ ցած են քաշում հոգուն:

32. Միշտ խուսափի՛ր վնասակար հավաքույթներից, և քո հոգին կվայելի լուսնային քաղցրությունը:

33. Ծիծաղի առարկա է լինում այն վանականը, ով հոգևոր ողջախոհությամբ չի կարգավորում իր բոլոր գործերը: Բանականությունը պահանջում է, որ մենք բոլորս մաքուր և իմաստուն լինենք:

34. Եթե տակավին շատ ջերմացած չես Սուրբ Հոգով, ապա մի՛ ցանկացիր լսել, թե ինչ խորհուրդներ ունեն ուրիշները, քանզի

դրանցում քո դեմ կրկնակի լուտանքներ կգտնես: Առաջին հերթին այն պատճառով, որ հոգին, լսածը վերհիշելով, ապականվում է, և երկրորդ՝ այն պատճառով, որ կհանդիպես հավատ ընծայողի դիմադրությունը, եթե արիակամ հոգին խաչակիր ուժով չմարի կրքերը: Եթե այդպիսի մարդն անփութության պատճառով կրկին ընկնի նույն կրքերի գիրկը, իր ընտրած ուսուցչին որպես թշնամու կնայի և եթե վերջինս ողջախոհ լինի, պիտի նկատել տա իրեն հավատ ընծայողին, որ ինքն ամեն բան մոռացել է:

35. Եթե մեկը տանն աղավնի ունի, որը, պատուհանը բաց գտնելով, թռչի տնից, ապա նրան ոչ թե փայտով կամ քարով պետք է հետ բերել, այլ սերմեր շաղ տալով. այդպիսի ողջախոհ միջոցով են ուզում հրապուրել նրան: Անհամեմատ ավելի շատ ողջախոհություն և փորձառություն կարիք ունի նա, ով մտադրվել է մաքրել իր խորհուրդների ապականությունը:

36. Եթե ընթերցանությամբ ես զբաղվում, ապա մի՛ փնտրիր միայն աչքի զարնող ու փքուն բաներ, և քո ուշադրությունը դրանց

վրա մի՛ կենտրոնացրու, այլ պես ինքնահաճություն սատանան կխոցի քո սիրտը: Սակայն ինչպես իմաստուն մեղուն է ծաղիկներից մեղր ժողովում, այդպես էլ դու ընթերցանության միջոցով բժշկություն՝ գտիր հոգուդ համար:

37. Ինչպես փառասեր մարդը, շատ կարողություն չունենալով, եթե նույնիսկ իր վրա թագավորի անուն վերցնի, դեռևս թագավոր չի լինի, այդպես էլ դեռևս ճգնավոր չէ այն վանականը, ով թաքուն ուտում է, իսկ միաբանների ընթրիքի ժամանակ կեղծավորաբար իրեն ծոմապահ և ժուժկալ է ձևացնում: Նա սարդոստայն է հյուսում և քայլում է ոչ թե սրբերի ճշմարիտ ճանապարհով, այլ մարդահաճոնների խոտոր ուղիով:

38. Եթե հրաժարվել ես աշխարհից, ապա հոգ տար քո գործի մասին, որպեսզի ձեռք բերես իսկական մարգարիտը: Քանզի ոմանք, հրաժարվելով աշխարհից, հեռացել են աշխարհիկ կյանքից: Ոմանք թողել են զինվորական ծառայությունը, ոմանք շոյլել են իրենց հարստությունը, բայց այնուհետև սեփական կամքին հլու՝ ընկել են: Ահա՛ այդ-

պես աղետալի է սեփական կամքով կառավարվելը, ոչ թե Աստծո հաճությամբ ապրելը: Նրանք ձևացրել են, թե ամենակարևոր դարպասներով հեռանում են ամենայն աշխարհիկ կենցաղավարությունից, բայց կրկին ղեպի աշխարհիկն են դարձել գաղտնի դռնով:

39. Իսրայելի որդիները երկաթե հնգից (Բ. Օր. 4, 20) հանվելուց և Կարմիր ծովն անցնելուց հետո մեծ շնորհներ էին վայելում, բայց քանի որ ղեկավարվում էին սեփական կամքով, ուստի աղետի ենթարկվեցին ցամաքում, և բազում թվարկվածներից միայն երկուսը փրկվեցին, ովքեր չարհամարհեցին Աստծո խոսքը և սրբորեն կատարեցին Բարձրյալի կամքը:

40. Աշխարհից հրաժարվածները ոչ մի ընդհանուր բան չունեն աշխարհի հետ: Նրանք, եթե անգամ ինչ-որ բանի գլուխ են կարգվում, իրենց չեն պահում իբրև ղեկավարներ, իսկ եթե պաշտոնանկ են արվում, ապա մտափոխ չեն լինում: Իսկ բարեպաշտ խորհուրդներից շեղվողները հակված են ղեպի աշխարհիկ վայելքները և գործում են ոչ թե հանուն առաքինության, այլ վանելով ի-

րենցից այդ բեռը՝ փութով ձեռնամուխ են լինում այն ամենը վերստեղծմանը, ինչը նախկինում իրենք էին հիանալիորեն կործանում: Վերնասենյակից դուրս չեկող ամենաազնիվ կույսն անգամ, եթե ամոթը կորցնի՝ այդպես, առանց կարմրելու, անթույլատրելի գործերի մեջ կիրառվի, ո՛չ Աստուծոց երկնչելով, ո՛չ էլ մարդկանցից ամաչելով: Բայց դրանով Աստծո ձեռքից չի պրծնի: Քանզի յուրաքանչյուրի գործը, ինչպես որ է, կրա՛կը պիտի փորձի (Ա. Կոր. 3, 13):

41. Երանի՛ նրան, ով իր գործերով է առաքինություն քարոզում: Իսկ եթե առաքինությանը բնորոշ բաներ ես ասում, սակայն հակառակն ես անում, ապա դա չի փրկի: Նույնպես և հաղթանակի պարգև չի ստանանա, ով անարդարության մասին է խոսում, բայց չարն է գործում:

42. Մի՛ երկնչիր մտքով, երբ տեսնում ես, որ պազոտ մարդիկ առանց երկնչելու անում են այն, ինչն իրենց հաճո է: Նրանց գույնը ժանտահոտություն է լեցուն, իսկ առաքինասերների գույնը պայծառացած է լույսով և անուշահոտությամբ: Ուստի հավատարիմ ե-

զի՛ր առաքիներու թիւնը, որպէսզի քեզ նայելով զարմանան փափկասուն և անառակ հաճույքներին հավատարիմները: Քանզի եթե նրանք չկամենան դա բացահայտորեն ցույց տալ, ապա իրենք իրենց ներսում հավանութիւն կտան առաքիների ճշմարտութիւնը:

43. Երբ անմաքուր սիրով տարված մարդկանց ես տեսնում, մի՛ զարմացիր նրանց վրա, և թող քեզ չհրապուրի ընտիր մաշկը, որը չուտով փոշի կդառնա, այլ հոգոց հանելով ինքդ քո մեջ՝ երգի՛ր, ասելով՝ Տե՛ր, հիշի՛ր՝ Մարդու օրերը խոտի պէս են. նա ծաղկում է ինչպէս վայրի ծաղիկ: Երբ փչի քամին, նա կանհետանա, և նրա տեղն իսկ չի երևա: Բայց Տիրոջ ողորմութիւնը հավիտյան հավիտեանից իրենից երկուդ կողմերի վրա է: (Սաղմ. 102, 14-17):

44. Ձանադրաբար աղոթի՛ր Տիրոջը, որպէսզի քեզ կատարյալ անարատութեան ոգի պարգևի: Որպէսզի անգամ գիշերվա երազներում փախչես սատանայի խարդավանքներից, ինչպէս փախչում է գազանից հալածվողը, կամ ինչպէս բոցավառ ջահով հետապնդվողն է տնից տուն մտնում կրակից ազատվելու համար:

45. Ինչպէս անկարելի է առանց աշխատելու փողով գրազիտութիւն կամ արվեստ ձեռք բերել, այդպէս էլ անհնար է վանական դառնալ առանց ջանադրութեան և եռանդուն համբերութեան:

46. Քեզ համար գլուխը գերադասելի է մարմնի մյուս բոլոր անդամներից: Եվ երբ քեզ վրա քար, մահակ կամ սուր են բարձրացնում, դու դեմ ես տալիս մարմնի մյուս անդամները, միայն թե հարվածը գլխիցդ հեռու տանես՝ գիտենալով, որ առանց գլխի անհնար է ապրել: Թող ուրեմն ամենագերադասելին լինի հավատն առ Սուրբ և Անքննելի Երրորդութիւնը, քանզի առանց այդ հավատի ոչ ոք չի կարող ապրել ճշմարիտ կյանքով:

47. Ամբողջ սրտով ապավինի՛ր Աստծուն և հեշտ կիսուսափես չարամիտ խարդավանքներից: Աստված անուշադրութեան չի մատնի իրեն հուսացողներին:

48. Եզիպտուհին կամենում էր գայթակղել աստվածասեր Հովսեփին և նրան հարկադրում էր կատարել իր անառակ մտադրութիւնը, սակայն պատանին իր հոգին ցողել էր

Տիրոջ հիշողությամբ, որպեսզի չբռնկվի այն անօրենն հրով և պատնեշել էր զգացմունքները, որպեսզի տեղի չտար խորթ խորհուրդներին և չդառնար անամոթ կնոջ գերին, քանզի նրան միշտ դիտում էր որպես մահվան ցանց: Եվ գայթակղությունը հաղթահարելով՝ փառապսակվեց և դարձավ Եգիպտոսի արքան:

49. Անօրենները Բաբելոնում ուզում էին ապստամբել բարեպաշտ հոգու դեմ, որպեսզի նողկալիորեն արատավորեն նրան, սակայն օգնական ունենալով Ամենաբարձրյալ Աստծուն, նա հեշտորեն տապալեց անօրեններին: Այդ սնամիտները, ինչպես ենթադրում էին, ժողով կազմելով Երանելու դեմ, չգիտեին, որ այդտեղ հենց իրենք կլսեն իրենց մահվան դատավճիռը, քանզի անսինջ Ակը թույլ չի տա հայհոյել իրեն:

50. Գնա՛նք, եղբայրներ՛ր, նեղ և վշտալի ուղիով, որպեսզի փառքի արժանի լինելով՝ մեզ պահապան ունենանք Աստծուն:

51. Մարգարիտները միշտ պահվում են ամենաներքին գանձարաններում, իսկ որն ան-

պիտան է, դեն է նետվում որպես փտած մի բան, նույնիսկ փողոց է չալրտվում:

52. Եթե որևէ մեկը չարախոսելով քեզ պատմի, թե ինչ չար գործեր ես արել, ապա ավելի շատ քե՛զ մեղադրիր, քան ուրիշին: Քանզի եթե դու այնքան ես ամաչում քո գործերից, որ դրանց մասին անգամ մի պատմություն չես կարող լսել, ապա ցասկոտ սպառնալիքներով նրան մի՛ ստիպիր լռել, այլ ինքդ քեզ շտկի՛ր, որպեսզի վատ բաներ չանես: Քանզի ժանտահոտությունը կմատնի, որ դու ինքդ ես չարամտում քո հոգու դեմ:

53. Ապաշխարություն քեզ մաքրի՛ր անթույլատրելի գործերից, և քեզ չարախոսի հանդիմանանքը չի սարսափեցնի:

54. Ընդդիմացի՛ր մեղքին, կյա՛նք արարող, և մի՛ երկնչիր դարանակալ գայթակղությունից, քանզի փորձությունը չի վնասի արիակամ ճգնակյացին:

55. Մենք պետք է հրին դիմակայենք Աստծո հրի օգնությամբ: Աղյուսը, քանի դեռ չի այրվել, անկայուն և փխրուն է, իսկ երբ մնում է կրակի մեջ և թրծվում է, պատնեշ է դառնում կրակի, նաև ջրի դեմ: Ինչպես

ջուրն է մնում կավե ամանի մեջ, այդպես էլ վառարանն է իր մեջ պահում բորբոքուն բոցը, իսկ վառարանն ինքը աղյուսից է պատրաստվում:

56. Դու ինքդ էլ եղի՛ր գայթակղությունների և վշտերի մեջ և դիմակայի՛ր քեզ բորբոքող ցանկասիրությանը, որպեսզի քեզ էլ, որպես չթրծված աղյուս, չփչրեն անձրևի կաթիլները, որպեսզի չպարզվի, թե այն ամբողջյունը չունես, ինչը մտածում ես ունենալ:

57. Բարի համարիր ոչ թե այն, ինչը քո կարծիքով լավ է արված, այլ այն, ինչը վկայում են բարեպաշտ այրերը:

58. Լսի՛ր Աստծո ձայնը, որպեսզի Տերն օգնի քեզ և պատժի քեզ անարգողներին, խոնարհեցնի քո թշնամիներին, և դու չլսես. Բարձիթողի մատնեցի Արամ, որ գնաց իրենց սրտի թելադրանքով, քանզի շարժվեցին իրենց կամքով (Սաղմ. 80, 13):

59. Զանք գործադրի՛ր չստրկանալու սեփական կամքիդ, այլ հնազանդ եղի՛ր Աստծուց երկնչողներին և Աստծու ողորմածությունը կջախջախես օձի գլուխը: Բայց քանի դեռ հեշտությունը տրվում ես քո կամքին,

զիտցի՛ր, որքան հեռու ես կատարելութունից, ճիշտ այդքան էլ ուսման և խրատի կարիք ունես:

60. Վշտե՛ր կրիր հանուն Աստծո, որպեսզի քեզ համակի բերկրանքը: Համբերատա՛ր արա աշխատանքներդ, որպեսզի առատ պարգև ստանաս: Որմնազիրը, որ քար է տաշում, և դարբինը, որ երկաթ է կռում, դրա համար պարգև է ստանում:

61. Մարտադաշտից փախչողը զինվորական ավարի չի արժանանա, իսկ ով փախչում է խրատից, նա բարեպաշտների բախտին չի արժանանա:

62. Ելի՛ր բարձունքը և կտեսնես, որ ամենայն երկրայինը ցածր է և աննշան, իսկ եթե բարձունքից իջնես, ապա փոքրիկ, սպիտակեցրած տնակն անգամ կզարմացնի քեզ:

63. Բարեպաշտություն գործող, հաստատվի՛ր առաքինության մեջ, որը՝ իբրև կառք, քեզ առաջ կթռցնի և կպահպանի բազում խոչընդոտներից, քանզի իր սիրելիին թույլ չի տա որևէ բան ասել կամ անել ի վնաս լսողների:

64. Իմացության անուշահոտութիւնը մարդու մեջ այն է, եթե նա բոլոր դեպքերում մեղադրում է ինքն իրեն, և իրեն մեղադրելով՝ չի դատապարտում նույն մեղքի մեջ ընկածին:

65. Միևնույն հանցանքի համար ձերբակալված երկու մեղավոր ստրուկներին, իհարկե, գիտակից չէ նա, ով կշտամբում է իր ընկերոջը:

66. Մի՛ ծիծաղիր և մի՛ դատապարտիր գայթակղության մեջ ընկածին: Քանզի նա, ում սիրտը խռովված է խորհուրդների փոթորկից և պարտված է կրքերից, նա ո՛չ մարդուց է ամաչում, և ո՛չ էլ Աստծուց է երկնչում: Եթե նա իշխան է, ապա առանց վախենալու չարիք է գործում: Իսկ եթե անկար է ու աղքատ, ապա, տրվելով իր բնավորության կոպտությանը՝ ինքն էլ է անամոթաբար չարը գործում:

67. Մի՛ եղիր անփույթ հեշտասեր, այլ լսի՛ր, թե ինչ կոչ է անում սրբազան երգիչը. Թող ելնի Աստված, արա բոլոր թշնամիները թող ցրվեն, ու արան ասողները փախչեն իր առջևից: Ինչպես ծուխն է ցնդում, այնպես պիտի անհետանան արանք, ինչպես

մոմն է հալվում կրակի դիմաց, այնպես էլ մեղավորները պիտի կորչեն Աստծու երեսից (Սաղմ. 67, 1-4):

68 Վանակա՛ն, քեզ խուց է տրված. հաճա՛խ աղոթիր խոնարհ սրտով, ինչպես երեք մանուկները հրաբոց վառարանում, և մի՛ դարձրու քեզ ավազակաորջ, որպեսզի Դատաստանի օրը չամաչես, երբ կբացվեն մարդկային գաղտնիքները:

69. Ով ջանադիր չէ բերքահավաքի ժամանակ, նրա տունը առատութիւն չի տեսնի: Եվ ով այժմ անփույթ է, նա հատուցման ժամին կմնա առանց բարեպաշտների մխիթարության:

70. Եղբայրնե՛ր, վրա է հասնում ահ ու դողով լի այն ժամը, երբ հայտնի կդառնա, թե ինչ ենք արել թաքուն և խավարում: Եվ վա՛յ այն հոգուն, ով Աստծուն իրեն օգնական չի ունեցել:

71. Եկե՛ք, քրիստոսասե՛ր եղբայրներ, մտածենք յուրաքանչյուրիս վախճանի մասին և թե ինչպես ենք մեզ պահում այս ունայն կյանքում: Քանզի ունայն է նա, ով իր ժամանակն անցկացնում է ունայնության մեջ մնացողների հետ: Սակայն երանի՛ նրանց,

ովքեր այս կյանքում բարի գործերով են զբաղվել:

72. Հարուստ մարդը բարենպաստ քամու ներքո նավարկության դուրս գալու ժամանակ ամենքին վերևից է նայում՝ հաճույքների սպասելով: Նրա առաջ խոհարարները կերակուր են պատրաստում, նրա թիկունքին զորախումբն է: Բայց հանկարծ վրա է հասնում փոթորիկը, ալեկոծում է ծովը, խորտակում է նավը, և ալիքները նրան միայնակ նետում են վայրի գազաններով լեցուն անմարդաբնակ մի կղզի. նա ճչում է և բողոքում, բայց ոչ ոք նրան չի լսում, խփում է դեմքին, դեսուդեն է նետվում և ամեն ժամ իր մահվանն է սպասում: Այդ երբեմնի գոռոզը հալումաչ է լինում քաղցից և ահից, տոչորվում է ծարավից, բայց մխիթարող չկա: Նույնն է պատահում և մեզ՝ անփութաջաններիս հետ երկրի վրա: Երբ ունայն կյանքում տրվում ենք հաճույքներին, հանկարծ վրա է հասնում մահը, առևանգում է անհոգներին և նետում է այն սարսափելի վայրերը, որտեղ պիտի տանջվեն իրնց Տիրոջն ուրացողներն ու մեղավորները:

73. Քանի դեռ անվտանգության մեջ ենք, խորհենք, թե ինչպիսի սարսափի մեջ կլինի անբնակ կղզի նետվածը՝ ոչ մի օգնություն չստանալով որևէ մեկից. խորհրդածենք նաև, թե ինչ ահի մեջ կլինի տանջանքի վայրը նետված մեղավորը:

74. Սիրտս հոգոց է հանում, և աչքերս արցունքներ են փափագում, սակայն իմ մեղքը գերության մեջ է պահում միտքս, որպեսզի ես չմորմոքվեմ և չսկսեմ դառն արցունքներով Աստծուն պաղատել, որ ինձ չնետի ականակուր խավարը:

75. Դու, որ Քո ժողովրդին փարավոնի ձեռքից և երկաթե ճնշից ազատեցիր (Բ Օր. 4, 20) և Կարմիր ծովով փրկեցիր նրան, մեզ էլ ազատիր մեր անօրենություններից, որպեսզի Քո առջև երանություն գտնենք, երբ դատես ողջերին և մեռածներին:

76. Քանի դեռ ուժ ունենք, ուղիղ սրտով ծառայենք Աստծուն, որպեսզի Նա մեզ օգնական լինի վշտի ժամին և մեզ փրկի մեծ փորձանքներից:

77. Նա անճառելի փառքով կփառավորի

մաքուր սրտով իրեն ծառայողներին, քանզի սրբերի փառքը վերջ չունի:

78. Աստծո հրամանով կետը կուլ տվեց Հովնան մարգարեին, և նա կետի որովայնում պահպանվում էր ասես զանձարանում: Խորունկ անդունդների պաշարեցի՞ն նրան, գլուխը մտավ լեռների փապարների մեջ, իջավ մի երկիր, որի գիգերը փակ են հավիտյամ: Եվ այնտեղ նա աղաղակում էր աղոթքով՝ այսպես ասելով. Ես կփրկվեմ ապականությունից... Քե՛զ դիմեցի, Տե՛ր իմ Աստված (Հովնան 2, 6-7): Աղոթքն այս անցավ վիհերի միջով, պատռեց օդը, հասավ մինչև երկինք՝ Աստծո լսելիքին: Ավելի ճիշտ կլինի ասել՝ Աստված Ինքը, որ լցնում է տիեզերքը, հեռու չէր Իր ճշմարիտ ծառայից:

79. Աստված հրամայեց կետին, և նա մարգարեին հետ տվեց: Եվ ասես նավից իջնելով՝ մարգարեն գնաց քարոզի:

80. Մեղավորներն ատամներն են կրճտացնում բարեպաշտների վրա: Գայթակղություններն անցնում են, արդարները փառավորվում են, իսկ անառակները, ովքեր մտադրվում են Աստծո սրբերի դեմ չարիք գործել, կանարգվեն:

81. Եղիան մի ժամանակ վտարված էր նենգադավ կնոջից: Բայց Աստված թռչունին հրամայեց կերակրել մարգարեին, իսկ մեղավորներին վրա հասավ սարսափելի սովը:

82. Եղիա մարգարեն հափշտակվեց հրեղեն կառքով, իսկ անօրեն Հեզաբելը իր տան բարձունքից տապալվեց և լափվեց քաղաքի փողոցներում:

83. Անօրենները, չկամենալով լսել բարեպաշտության խոսքը, Երեմիա մարգարեին տղմուտ գուբը նետեցին: Լսելով նրանց հանդգնություն մասին՝ Աբդիմեկեք Եթովպացին, քանզի հոգով սպիտակ էր և շողարձակում էր հավատով, ուստի մերկացրեց արքայի անօրենությունը. թուլտվություն ստանալով՝ ազատեց մարգարեին, և օրհնություն արժանացավ (Երեմիա, 38, 28):

84. Հալածիչները ապստամբեցին Աստծո մարգարեներին հալածողների դեմ, և հրեա ժողովուրդը մատնվեց թշնամու ձեռքը: Բայց թշնամիները տեսան Աստծո մարգարեին և նրան փրկեցին կապանքներից՝ նրան ընծաներ բերելով, որովհետև տեսան նրա մեծ բարեպաշտությունը: Ինչպես ձեռքին ջահ

պահողը լուսավորում է իր հետ եղողներին, այդպես լույս է տալիս նաև առաքինությունը, որը միշտ փառքի մեջ է քայլում:

85. Սրբապիղծները Դանիել մարգարեին աստվածապաշտության համար նետեցին փոսը՝ առյուծների մոտ, որպեսզի այդ գազանները խժռեն նրան: Եվ չգիտեին անօրենները, որ այդ ամենն անում են իրենք իրենց անարգելու համար: Սակայն Աստված Ամբակուսի ձեռքով և հրեշտակի միջոցով կերակուր ուղարկեց իր հավատարիմ ծառային: Իսկ վայրի գազանները, մարգարեին տեսնելով իրենց մեջ, հեզորեն խոնարհվեցին նրա առաջ, որովհետև երկնային ուժը փակել էր առյուծների երախները, և նրանք չզիպան մարգարեին:

86. Դուրս բերեցին մարգարեին գազանների միջից, և մասամբ մերկացվեց նրանց անօրենությունը, երբ տեսան, որ նա փոսից դուրս է գալիս, ինչպես փեսան ապարանքից՝ ճաճանչափայլ դեմքով և փառքով լուսավորված:

87. Բաբելոնացիները, ոչ առանց պատճառի, դարձյալ կասկածեցին, թե վայրի գազան-

ները գուցե հիվանդացել են և այդ պատճառով մարդկային միս չեն ուտում: Քանզի Աստծո ընտրյալը վեց օր անցկացրեց յոթ առյուծների մեջ, և ոչ մի վնասվածք չեղավ: Իսկ յոթերորդ օրը արքան եկավ սգալու սրբակյացին, բայց, փոսի հատակը դիտելով, տեսավ, որ նա նստած է առյուծների մեջ, ինչպես հովվապետը՝ ոչխարների հետ: Ուստի և անհավատները, ոչ առանց պատճառի, կասկածեցին, թե արդյո՞ք նա փրկվել է: Բայց երբ փոսը նետվեցին արդարակյացի թշնամիները, անհավատները, տեսնելով, որ նրանք պատառ-պատառ են արված և ոսկորները՝ ջախջախված, մեծ զարմանքի մեջ հայտնվեցին և բարձրաձայն գոչեցին. մեծ ես, Դաանիելի Տե՛ր Աստված (Դաանիել, 14, 40):

88. Երեք մանուկները, ոսկե արձանին չերկրպագող Ագարիայի հետ պինդ կապկպված, նետվեցին բոցավառ կրակի մեջ: Բայց կրակը չհամարձակվեց այրել նրանց մի մազն անգամ. իսկ վառարանից ելնող բոցը այրեց անհավատներին, ովքեր բորբոքել էին կրակը:

89. Ո՛վ իմ անկեղծ ունկնդիրներ, խորհրդածելով այս ամենի մասին, թող անբարեգորդ

չգտնվենք գայթակղությունների ժամանակ, քանզի գայթակղությունների մեջ համբերությունն է վսեմացնում աստվածասերներին:

90. Քանի դեռ ուժ ունենք, Աստծուն ծառայե՛նք երկյուղով, ուղիղ սրտով և բարի կամքով, որպեսզի գայթակղության ժամին, մեր անկարողությանը օգնության հասնելով և մեզ թագակիր անելով՝ Նա մեզ մտցնի իր արքայությունը: Ամեն:



## Ապաշխարության մասին

Մենք՝ մեղավորներս, ջանանք իմանալ, թե ի՞նչ է գթությունը: Ընչաքա՛ղց, ուսանի՛ր ինչպես բարեգութ լինել: Եղբայրնե՛ր, աշխարհում միմյանց կարեկից լինենք ճշմարիտ կարեկցությամբ, լի ամենայն մարդասիրությամբ, քանի դեռ նենգադավը այնքան ուժ չունի, որ առևանգի մեր հոգիները: Ինչը որ հայտնի է դարձել ինձ Սուրբ Հոգով, հարկ է որ ամենքն իմանան: Եթե ես անխոհեմ եմ և չեմ պահպանել իմ ուսանածը, թող մեկ ուրիշը ուսանելով պահպանի: Եթե խոսքը մեռած է ինձանում, ապա թող մեռած և անպտուղ չլինի ձեզանում: Չթաքցնե՛նք տաղանդն Արքայի, կյանքով լեցուն սերմե՛ր գնենք դրանով: Ուշք մի՛ դարձրու ինձ վրա, աշակե՛րտ, եթե շեղվում եմ ուղուց: Եվ եթե ինձ անկյալ ես տեսնում, իմ հետևից մի՛ քայլիր: Աչքիդ առջև ունեցի՛ր Աստծուն և Սուրբ Գիրքը, թող նրա՛նք լինեն քո սնունդը: Ինչպես որ ուսուցանում են նրանք, այդպես էլ ջանա պահպանել պատվիրանները, ինչպես որ սովորել ես, այնպես էլ արա՛: Սիրում եմ

ուսմունքը, սակայն չսիրեցի ես պատիժը, վախենում եմ, քանզի միշտ քայլում եմ վատթար ճանապարհներով և լեցուն եմ անօրենուկթյամբ: Ինքս ինձ բժշկելիս իմ վերքերը չեմ կապում, չեմ ջանում արմատախիլ անել մեջս աճած մոլախոտը, սակայն ապրում եմ այդ հույսով և սպասում եմ:

Մի՛ տրտմիր, աշակե՛րտ, քեզ հետ միասին պատիժ է կրում և քո ուսուցիչը: Ինչի՞դ է պետք, որդյա՛կս, անօգուտ տրտմուկթյամբ տառապելը: Ինչո՞ւ լալ մի լացով, որից օգուտ չկա: Նենգադավը միշտ բորբոքում է քո միտքը, որպեսզի դու նրա ժառանգուկթյան մասնիկը դառնաս: Սատանան չարամտորեն ջանում է վշտացնել շատերին, որպեսզի առևանգի և հուսաբեկուկթյան միջոցով նրանց գեհենը նետի: Առևանգվա՞ծ է քո գանձը: Բայց քո առջև դեռևս բաց է հիասքանչ գանձը գնելու ուղին, դեռևս ժամանակ կա գանձը ժողովելու, միայն թե հույսդ մի՛ կորցրու, այլ աշխատի՛ր հավաքել այն: Թեպետ վիրավորել է քեզ նետը, սակայն լիովին մի՛ տապալվիր: Նույնիսկ մինչև մահ դիմացի՛ր, հարվածից մի՛ վախեցիր, քո սխրագործուկթյունը ցույց տուր՝ անգամ հարվածի

տակ լինելով, որպեսզի քո պսակը հյուսվի պայծառ և փառավոր կտորից: Եթե ավագակը քեզանից հագուստդ խլի, մի՛ ծուլացիր շարունակելու ճանապարհը: Մարտի ժամանակ պատահում է և՛ հարվածել, և՛ հարվածներ ստանալ: Եթե ցուրտը տարել է քո արտը, աճապարիւր սերմ ցանել երկրորդ, երրորդ անգամ, համառորեն, անխոնջ, առանց հապաղելու. անկասկած ամպերը կգան, և երկինքն անձրև կպարգևի: Չարագործը քեզ ուղուց չի շեղել: Մի՛ վախեցիր բեռից, որ վերցրել ես վրադ, դնա՛ միշտ արքայական ճանապարհով: Այն նույն մարտում, որտեղ դու վիրավորվել ես, կարող ես հաղթանակել: Իսկ այն նույն վայրում, որտեղ նախկինում կողոպտվել է քո գանձը, կարող ես նորեն ժողովել այն: Այնտեղ, որտեղ արքա Աքաբը թափեց Նաբովթի արյունը, այնտեղ շները լիզեցին անառակ Աքաբի արյունը, ինչպես Սուրբ Գրքում է ասված: Աքաբը Նաբովթին քչեց նրա սեփական այգուց, իսկ քեզ մեզքն ուզում է հեռացնել Քրիստոսից: Աքաբը դարձավ սատանայի կերպարը, իսկ Հեզաբելը՝ անառակուկթյան պատկերը: Սատանան և անառակուկթյունը տենչում են քո արյունը, ինչպես անօրեն Ա-

քաբն էր տենչում Նաբովթի արյունը: Ինչպես նա խարդավանքով սպանեց արդարին, այնպես էլ ընդունեց Արդարի դատը, փութաց խարդավանքով կործանել անմեղին, որպեսզի շուտով նրա համար վրիժխնդիր լինի Աստված: Եւ այժմ մեզանում անտեսանելի պատերազմ է մղվում, ինչպես Սուրբ Գիրքն է ասում. Մեր պատերազմը արյան և մարմնի հետ չէ, այլ իշխանությունների և պետությունների հետ, այս խավար աշխարհի տիրակալների հետ և երկնքի տակ եղող չար ոգիների հետ (Եփես. 6, 12): Սատանան մարդկանց դեմ մարտնչում է գաղտնի, դավադրաբար, իսկ Քրիստոս բացահայտ ձախողում է նրա բոլոր դավերը և մեզ ուժ է պարգևում ոտնատակ տալու նրան: Քո պատերազմը, եղբա՛յր, մի սովորական, ծիծաղի արժանի բան չէ, ընդհակառակը, բոլոր հրեշտակները և նրանց Տիրակալը նայում են քո այդ պատերազմին, որը վարում ես թշնամու դեմ: Այսպիսով, երբ դու հաղթես թշնամուդ, Աստված և հրեշտակները կծափահարեն քեզ, իսկ հրեշտակները բերկրելով կփառաբանեն Աստծուն, որ նենգադավին հաղթելու ուժ պարգևեց քեզ: Այդ պատճառով մարտն ափելի ու ափելի է կթեժանա, որպեսզի դու բա-

րեհնար դառնաս, Աստված փառաբանվի և մարդիկ հետևեն քեզ:

Ուստի և, ինչպես վերն ասացինք, եթե նենգադավ թշնամու նետը խոցի քեզ, ամենևին մի՛ հուսահատվիր: Ընդհակառակը, քանի անգամ էլ որ հաղթվես, պարտված մի՛ մնա, այլ իսկույն ոտքի ե՛լ և մարտնչի՛ր թշնամու դեմ, քանզի Սխրագործության Հիմնադիրը միշտ պատրաստ է Իր աջը մեկնելու քեզ և ընկածդ տեղից բարձրացնելու: Հենց որ առաջինը Նրան երկարես քո աջը, այնժամ Նա էլ քեզ կմեկնի Իր աջը, որպեսզի քեզ ոտքի կանգնեցնի: Իսկ անպիտան թշնամու միակ ջանքն այն է, որ հենց ընկնես, քեզ անհուսովյան մեջ նետի: Այսպիսով, սիրասո՛ւն, մի՛ հավատա նրան, բայց եթե օրը յոթ անգամ էլ ընկնես, ջանա ոտքի ելնել և Աստծո գուժը շարժել ապաշխարանքով: Քսակը դատարկելուց հետո ի՞նչ միտք ունի թաքցնել այն: Ո՞ր մի վաճառականը, երբ առևտուր չլինի, կժողովի մնացած ապրանքները և ծովը կնետի: Մի՛ լքիր քո զենքը, որ քեզ Քրիստոսն է տվել, թիկունք մի՛ դարձրու թշնամուդ առաջ, որպեսզի չվիրավորես Տիրոջը:

Ներկայացնում եմ քեզ բացահայտ և պարզ ապացույց: Այս ունայն աշխարհի հակամարտիկը, եթե նույնիսկ թշնամին նրան խորը խոցի, մարտից՝ չի խուսափի ինքն իր մեջ հուսաբեկվելով, քանզի թեև առժամապես պարտված է, սակայն հետագայում գուցե ի՛նքը հաղթանակի:

Մի՛ հետաձգիր, բարեկա՛մ, օրըստօրե քո աղերսն Աստծուն, որպեսզի հանկարծ քեզ վրա չգա ահարկու Դատավորի դատաստանը, որ կոչում է քեզ վերադարձնելու այն ամենը, որ ձեռք էիր բերել նրա տաղանդներով, և որպեսզի դու գավասանքների փոխարեն ոտ ու ձեռքդ կապված, դատապարտված չնետվես անհուն խավարը: Քանի դեռ ժամանակ կա, ջանա՛ ծնկաչոք ընկնել Դատավորի առաջ, որպեսզի Նա ների քո բոլոր մեղքերը, և մենք բերկրենք քեզ հետ, եղբա՛յր, և Աստված փառաբանվի: Նրան արժանի է փառք և պատիվ հավիտյանս հավիտենից: Ամեն:



## Ապաշխարության և համբերության մասին

**Խ**որհրդածե՞լ է արդյոք որևէ մեկը, որ մեր այս կյանքը նույնն է, ինչ փախստական ստրուկը, փոփոխամիտ խաբեբան կամ խարխլվող տունը: Արդյո՞ք որևէ մեկը իր հոգին այնչափ գերիմաստորեն է պատսպարել, որպեսզի սպասվող սարսափելի և մեծ օրը Աստծո դատաստանին չարժանանա: Արտասուքի ո՞ր աղբյուրներն են բավական այն բանի համար, որ հուրն ավելի վաղ հանգցնենք, քան այն ճաշակել ենք: Եվ կամ մեր փոխարեն ո՞վ կչարժի Դատավորի գուլթը, որպեսզի չդատի մեզ՝ մեղավորներին: Նույնիսկ սուրբերից ո՞վ ներում կհայցի մեզ համար մարդասեր Աստծուց: Աստծո ցասումը ո՞վ կփոխարկի ողորմածության և արդարադատությունը՝ գթության, եթե Դատավորին չաղերսի: Նա՛՝ Միակը, Ով իր վրա վերցրեց մեղքերի բեռը, և՛ տանում է, և՛ ազատում է, և՛ թեթևացնում է, երբ կամենում է: Երբ ծանր մեղքեր ենք գործում, հավելում ենք բեռը, և երբ դառը զղջում ենք, թեթևացնում ենք դրանք. մեզանից է կախված մեր կապերը

քանդելը, կամ ավելի պինդ կապելը: Իսկ Աստծո գործն իրեն հայցողներին ներելն է, քանզի, հիրավի, մենք մարդասեր Տեր ունենք, Ով ապաշխարանքով լուծում է ծառաների մեղքերը:

Այսպիսով, մինչև մեր՝ այն աշխարհ գնալը ջանադրաբար պաղատե՛նք Դատավորին, որ ազատի մեզ գայթակղությունից: Ե՛վ Նոյը, և՛ Հոբբը, և՛ Դանիելը՝ Աստծո բարեկամները և մարգարեները, որքան էլ սխրագործներ էին, եթե սկսեին Աստծուն պաղատել իրենց երեխաների համար՝ ներում հայցելով, ապա դուլզն-ինչ օգուտ չէին բերի նրանց և լսելի և ընդունելի չէին լինի: Իսկ ի՞նչ կանենք մենք, որ հոգ չենք տանում մեր մասին: Ո՞վ կփրկի մեզ Աստծո զայրույթից՝ բացի Միակ դատող և արդարացնող Աստծուց:

Տե՛ս, թե ինչպես հատուցեցին Աստծուն սուրբ նահատակները, ովքեր սխրանքներ գործեցին երկրի երեսին և Աստծուց սխրագործության ի՛նչ շնորհներ ստացան իրենց մարտիրոսությամբ: Քավելով իրենց մեղքերը՝ ոչ միայն դրանով արժանացան ներման շնորհին, այլև ի հավելումն ստացան երկնային Արքայությունն ու Դրախտը, քանզի իրենց

արյունը հեղեցին այն Արյան համար, որի գինը բարձր է ամենայն գնից և անգնահատելի է, այսինքն՝ Տիրոջ Արյան համար: Աստծո սերը գերադասելով երեխաներից, նույնիսկ ամուսիններից, նրանք ի վերջո հաղթողներ դարձան այդ ճանապարհին, որպեսզի մտրակահարույթյամբ փորձվելով՝ պսակներ ստանան իրենց սխրագործության համար: Փրկիչի նկատմամբ սերը նրանց միտքը այնքան էր հափշտակում տանում դեպի Նրա այդ ճանապարհը, որ մարմնավոր լինելով՝ նրանք գնեցին անմարմինը: Իսկ մենք՝ ստրուկներս, ինչո՞վ պիտի հատուցենք փառքի Տիրակալին և Արքային: Մենք հաճախ չենք հանդուրժում մեր եղբոր անգամ մեկ խոցող խոսքը՝ մոռանալով մեր հասցրած վերքերը՝ թե՛ երևելի, թե՛ աներևույթ, որոնք Աստծուն են հայտնի, չենք կարողանում տանել նույնիսկ երկնքից թափվող ձյունը: Հանուն Աստծո նեղություն կրողները փառապսակվեցին, իսկ մենք, թեպետ և առանց կտտանքների կարող ենք մարտիրոսներ դառնալ, հակառակն ենք անում և որևէ բանի պիտանի չենք, և նույնիսկ դառնում ենք մտավոր գազանների և նենգազավ դևերի որսը:

Ի՞նչ ես անում, դու, ո՛վ մարդ՝ հոգ չտանելով առաքինություն մասին: Արարիչը քեզ ստեղծել է, որպեսզի դու գտվես հենց վիրավորանքների և գայթակղությունների միջոցով, ինչպես ոսկի, և քո մեծ համբերության և մեծահոգության շնորհիվ ընտրյալ և մաքուր անոթ լինես, քանզի չփորձված մարդը անվարժ է լինում գայթակղություններին դիմանալու գործում:

Դրանցից մեկը ես եմ, այս տողերը գրողը, ես՝ անարգս և մեղավորս, որ նախանձախնդիր չեմ որևէ առաքինության, անարժան եմ ձեր եղբայրը կոչվելու, քանզի փախա վշտից, որն ինձ պսակ էր պատրաստում, ես՝ անհնարամիտս, ով, սակայն, հանդգնում է գովաբանել մարտիրոսներին: Քանզի հենց որ սկսում եմ այդպիսի գովեստներ ձոնել, սկսում եմ դառնագին տրտնջալ, ահ ու սարսափի մեջ եմ ընկնում, խիղճս տանջում է ինձ, և սարսում եմ, երբ մտածում եմ, թե ապագա Դատաստանի օրը ինչպե՞ս պիտի հատուցեմ վատ գործերիս համար, քանզի դրանցով ծանրաբեռնված և դրանց տակ կքած՝ արժանի չեմ բարձունքին նայելու: Եվ երբ սկսում եմ նահատակների մասին գովա-

սանքի խոսքեր ասել, խիղճս գազանի նման հարձակվում է ինձ վրա մերկացնող Աստծո առջև, Ով տեսնում է բոլոր մարդկանց գաղտնիքները: Եվ ասում է ինձ. «Ո՞վ ես դու, որ բարբառում ես ուրիշների գործերի մասին, երբ ինքդ աղքատ ես դրանցով: Ի՞նչ պատասխան պիտի տաս Աստծուն՝ քեզ խավարից լույս աշխարհ բերողին, համարձակվելով խոսել առաքինությունների մասին, որոնց դու ինքդ չես հետևում»:

Սակայն, քանի դեռ ես չեմ լուել, ավելի լավ է՝ խոսեմ ձեր բարեսիրության մասին, որովհետև այդ առաքինությունը ինքս տակավին ձեռք չեմ բերել: Քանի որ իմ մեջ կրում եմ մարդասեր Տիրոջը, չեմ դադարի մարտիրոսներին գովասանքներ հղելուց: Ինքդ դատիր՝ սոսկ ես եմ անարժան և աղքատացած ամենայն առաքինությունից, սակայն փողերը տալիս եմ պարտատերերին, որպեսզի երբ Աստված գա, մի բան էլ ավելի վերցնի: Կամենում եմ խուլյա տալ տաղանդի համար մեղադրվելուց և դատված չլինել այն նենգադավ մարդու հետ, ով տաղանդը թաղեց հողում: Այդ պատճառով փրկվել կամեցողին խորհուրդ եմ տալիս չընդօրինակել ինձ՝ մե-

ղավորիս, այլ իմ խոսքերն ընդունել որպես իմաստունի: Ի դեպ, այդ մասին խոսելը կատարելու թյուրն չեմ համարում, քանզի Աստծո կամքն ամենքը գիտեն՝ մեծերն ու փոքրերը, մեծատոհմիկներն ու աղքատները: Ամեն ոք, եթե քննի, կտեսնի, թե ինչն է իրեն օգուտ, ինչ է կամենում իրենից Աստված և թե ինչպես պետք է ինքը փրկվի:

Կարծում եմ՝ լսել եք, որ մեզ համար պատրաստված է գեհենը, անմար կրակը, ատամների կրճտոցը, ականակուր խավարը, ինչպես նաև որդը և Դատավորի առջևով սրընթաց հոսող գետը, որով սպառնում է Մարդասերը, եթե չպահպանենք Աստծո պատվիրանները, եթե նախօրոք հուրը արցունքներով չմարենք, եթե գեհենը ապաշխարանքով չհանգցնենք, եթե որդը առաքինություն չսպանենք, եթե անոխակալ Դատավորին չթախանձենք, քանի դեռ այս կյանքում ենք, եթե այնտեղի Դատավորին չնախագգուշացնենք՝ ներկա աշխարհում ապաշխարելով, եթե չցուցաբերենք այնպիսի գղջում, որը կշարժի Դատավորի գուլթը: Աստված ո՛չ թե մեր, այլ սատանայի և նրա գործակալների համար է տանջանքներ սահմանել, մինչդեռ մենք ինքներս ենք

մեր մեծ արատներով մեզ դարձնում այդ սարսափելի տանջանքների ժառանգորդները: Մենք մարդիկս ենք հոժարակամ կրելու այն, ինչը սպառնում էր չարամիտ օձին: Ասում է Անիծյալնե՛ր, գնացե՛ք ինձնից հավիտեանակամ կրակը, որ պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար (Մատթ. 25, 41): Սակայն չի ասում. «Մարդկանց համար պատրաստված կրակը»: Եթե չարը գործողները տակավին այս կյանքում են ճաշակում այդպիսի խիստ տանջանքներ և զանազան անհաշիվ պատիժներ, ապա ճշմարտացի և անկաշառ դատարանը առավել ևս ապագայում անողոք կլինի մեր՝ մեղավորներիս հանդեպ, որ այդչափ հանցավոր ենք Դատավորի առջև:

Օ՛հ, որքան մեծ է մեր կուրու թյուրը: Պաղատում ենք Աստծուն լսել մեզ և բանալ մեր առջև դուռը, որ ինքներս ենք փակել մեր մուտք գործելուց առաջ, այսինքն՝ աղոթքից առաջ: Ի՞նչ ես անում, ո՛վ մարդ՝ անխոհեմություն մտածելով: Տերունական դուռը մշտապես բաց է թե՛ մեծերի, թե՛ փոքրերի համար, իսկ մենք նեղու թյուրն ենք տալիս Տիրոջը՝ մեր առջև այն բացելու համար, մենք, որ ինքներս մեր առջև փակել ենք այն, քան-

զի իշխանություն ունեինք այն բացելու կամ փակելու: Եթե մեղք չգործենք, տերունական շռայլ բարիքների դուռը միշտ բաց կլինի մարդկանց համար, իսկ եթե մեղք գործենք, ապա անմիջապես կփակվի: Աստված դուռը չի փակում իր ծառաների առջև, եթե աղոթքով են մոտենում նրան: Ընդհակառակը, այդ դուռը միշտ բաց է Աստծուն փնտրողների առջև, քանզի նա ասում է. Խնդրեցե՛ք Աստծուց և նա կտա ձեզ, փնտրեցե՛ք և կգտնեք, բախեցե՛ք և կբացվի ձեր առաջ (Մատթ. 7, 7)՝ դրանով արտահայտելով խնդրողին ամեն բան տալու իր պատրաստակամութունը: Դաժան մի՛ եղիր ինքդ քո հանդեպ, դժբա՛խտ, անմարդկայնություն մի՛ վերագրիր Աստծուն:

Մեղավորն ինքներս ենք, որ մեր մեղավորությամբ պարիսպ ենք բարձրացնում և մեր ցանկություններով պղնձե դուռ ենք կռում:

Այսպիսով՝ հաշտվելով խորհրդածի՛ր ինքդ քեզ հետ և կապանքներից ազատի՛ր քո բանտված հոգին: Աստված դեռևս քեզանից սպասում է, որ դու հաշտվես Տիրակալի հետ: Նա դեռևս կամենում է քո վերադարձը, որպեսզի ընդունի քեզ, եթե անկեղծ ապրես: Քո ներքին մարդուն հաշտեցրո՛ւ արտաքինի

հետ և ազա՛տ եղիր դառը ստրկությունից: Այդ դեպքում այն դուռը, որը փակել ես քո դեմ, քո աղոթքների համար միշտ բաց կգտնես, որի համար էլ փա՛ռք Աստծուն և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:



## Սարդկային կամքի փոփոխականության մասին

**Ո**ղորմա՛ծ եղիր, օ՛ Բարեգուլթ, մեր չար կամեցողության՝ բոլոր աղետների արմատի նկատմամբ: Նրա մտքերը գաղտնի հիվանդություններն են, իսկ գործերը՝ բացահայտ հիվանդությունները: Նրանից է առաջացել առաջին պատվիրանագանցությունը, որի հետևանքով մինչև այսօր էլ՝ մեր օրերում, շարունակվում են մեղքերը: Դու՝ Մաքուրդ, մաքրագործի՛ր մեր ազատությունը, որն ինքնին պղտոր աղբյուր է:

Զարմանում եմ մեր ազատ կամքի վրա: Այն ուժեղ է, սակայն՝ տապալված: Այն տիրակալ է, բայց ստրուկ է դարձել, հնարավորություն ունի հաղթանակելու, բայց սիրում է զիջել իր հաղթանակը, թեպետ ազատ է, բայց և ինքն է ստրկության տրվում, որպես գերի, և իր ձեռքով է համաձայնագիր տալիս իր ստրկությանը: Հիրավի անխոհեմ է այն գրագիրը, ով իր ձեռքով է կնքում իր պարտամուրհակը: Սակայն օրհնյալ է նա, Ով իր հացով ազատություն է պարգևել մեզ և իր

Նժարով մարել է մեր ձեռքով գրված պարտամուրհակը:

Մեր կամքը հեշտությամբ վնասվում է: Ով կամենում է իր գանձը երկնքում պահել, նրան այդ ճանապարհից շեղում է ամենքին շփոթեցնող նախանձամիտը, ում սերը մաքրությունն չունի, ում առողջ միտքը քաջալերվում է լուկ գովասանքով, ինչպես ծաղիկը շաղով, իսկ երբ քաջալերությունն չի լինում, խամրում է, ինչպես խոտը տապից, թոչնում է պարսավանքի կիզիչ շնչից և կորցնում է ողջ համն ու հոտը: Փա՛ռք Քո կամքին, Տե՛ր: Այն անդադար ծարավի է մեր ապաշխարությունը:

Թող օրհնյալ լինի առաքինիների հիշատակը, ովքեր ամուր եղան: Նրանք չէին փոխվում, ինչպես լուսինը, այլ նմանվում էին արեգակին, որի լույսը միշտ միևնույնն է: Նրանց հոգին անձրևի շիթերի նման չէր, որոնք մեկ հորդ են, մեկ էլ հանկարծ ցամաքում են: Ամեն տեսակի գայթակղությունների ալիքներ էին գալիս արդարակյացների վրա, բայց նրանք չուժաբեկվեցին: Օրհնյալ է Արդարադատը, Ով նրանց պսակները փառավորում է սխրանքներով:

Եվ փառքը չէր ամբարտավանացնում բարեպաշտներին, և անարգանքը նրանց ուժասպառուծյան չէր հասցնում: Նրանք միշտ միևնույնն էին, երբեք Նրանց վսեմ առաքիլնությունների անուշահոտությունը չէր դադարում բուրբուլից: Նրանց ամեն մի խորհուրդը սիրո անուշահոտություն էր բուրբում: Բարի սխրագործը, որ շռայլորեն շաղ է տալիս իր բույրերի անուշահոտությունը, սիրաշահում է առաքիլների ունկնդիրներին, իսկ նրանք կյանք են տալիս իրենց աշակերտներին: Օրհնյալ է Բարեգութը, Ով իր գանձարաններից տարածում է նրանց գործերի անուշահոտությունը:

Ինչպես Սեմեինը ապստամբեց Դավթի դեմ, այդպես էլ դպիրներն ապստամբեցին Դավթի Որդու դեմ: Սեմեինը Դավթի վրա քարեր էր նետում, նրա վրա հող էր շարտում և անիծում էր նրան, ինչով և նախապատկերեց Հուդայի ժողովրդին: Դավթի լուծում էր, և նրա լուծյունն իր Որդու կերպարն էր, երբ Նա հողի փոխարեն թուք ստացավ, չարախոսություն փոխարեն՝ ապտակ այտերին, նախանշանակ քարերի փոխարեն խոցվեց մեխերով:

Օրհնյալ է Բարեգութը, ով չարչարանքներ է կրել ոչ միայն Սեմեինից, ինչպես Դավթի թը, այլև ողջ ժողովրդից:

Օ՛հ, դառը պարսավանք: Ո՞վ կկամենա քեզանով պղծել իր լեզուն: Միայն անհավատն է մրցման մեջ մտնում ամենահաղթ Տիրոջ հետ և հնարավոր է համարում դիմակայել իր Ստեղծողին: Քանի որ նենգադավը նրան է չարություն է մղում, ուստի նա եզրակացնում է, որ Ամենագութը դաժան է: Բայց Նա, Ով մեզ հաշտեցրել է Արդարադատի հետ, մի՞թե չի փրկի մեզ նենգադավից: Օրհնյալ է Արարիչը, որ անհավատների վրա չի բռնանում, քանզի նրանք ազատ կամք են ստացել:

Մի՞թե Արարիչը հզոր չէ անուժից, և չի կարող նրան վնաս պատճառել: Թե՞ Նրան մեկ այլ ուժ է հետ պահում և Արարչին չի թողնում վատ վարվել նրանց հետ: Այս և մյուս բոլոր ենթադրությունները վերանում են մեկ խոսքով: Ո՞վ է արարել քաղցն ու հիվանդությունը: Եթե նա Արարիչ է, ապա ամենակարող է, եթե բարի է, ապա նաև խիստ:

## Խոնարհության և գոռոզության մասին

**Ո**վ մարտի մեջ է մտնում և ցանկանում է հաղթանակ տանել, ապա թող, որպես զրահով, հանդերձավորվի փառավոր ասպազենով՝ հեզուլթյամբ: Նենգադավի զենքը գոռոզուլթյունն է, դրանով նա մահացրեց մեր հայր Ադամին, դրանով է մահացնում նաև նրա բոլոր ժառանգներին: Իսկ մեր Տիրոջ զենքը հեզուլթյունն է. այդ զենքը՝ Նա պատրաստեց նենգադավի դեմ, որով սատանային տապալեց ինքնակալ տիրապետության բարձունքից: Խոնարհուլթյամբ զինվեցին առաքյալները, դրանով էին հաղթում ճշմարտապես հավատացողները. այն հաղթանակ էր բերում թե՛ հներին, թե՛ նորերին: Գոտեպնդվե՛ք այդ զենքով, Քրիստոսի՛ աշակերտներ՛ր, քանզի դրանով հաղթանակ կգտնեք և կդառնաք Արքայության ժառանգորդներ: Ով հաղթանակ է սիրում, թող այդ զենքով զինվի, ով ցանկանում է Արքայություն մտնել, թող մտնի այդ դարպասներով: Հեզուլթյունը Արքայության ուղին է: Դա երկնային դուռն է, դա սան-

դուղք է, որով մարդ երկինք է բարձրանում: Աստված դրանով իջավ երկրայիններին կացարանը, Ադամի ժառանգները դրանով են ստորոտից ելնում մինչև երկնային կացարանները: Դրանով է ձեռք բերվում ամենայն բարիք, և դրանով է հաղթահարվում ամենայն աղետ:

Մարդն Աստծուն ավելի շատ հաճո է դառնում խոնարհուլթյամբ, քան զոհերով և ընծաներով: Դրանով են բարեպաշտները կատարելուլթյան հասնում, Աստծուց ընդունվում զղջացողները, նրա հետ հաշտվում մեղավորները, արդարացվում հանցավորները: Խոնարհուլթյունն աղբյուր է, որից հոսում է ամենայն բարիք, ընդհակառակը, գոռոզուլթյունը ծով է, որից հոսում է ամենայն չարիք: Ով հեզուլթյուն է հագել, նրանում է ապրում ամենայն բարիք, իսկ ով գոռոզուլթյուն է հագել, նրանում են բոլոր վատ բաները: Խոնարհուլթյունը կատարելուլթյան է հասցնում նույնիսկ մեղավորներին, իսկ գոռոզուլթյունը նույնիսկ կատարյալներին է մեղքերի գիրկը նետում:

Սատանան սկզբում կատարյալ ոգի էր, բայց գոռոզուլթյան պատճառով ընկավ և

դարձավ գեհենի իշխանը: Ավագակը չարագործ էր և ամենայն չարիքով լի, բայց հեզորեն խոստովանվեց և Արքայության ժառանգորդը դարձավ: Եթե մեղավորը հեզուլթյուն ձեռք բերի, արդարակյաց կդառնա, ընդհակառակը, եթե բարեպաշտը գոռոզանա, մեղավոր կդառնա:

Տերը մեր բոլոր առաքիներություններից վեր է դասում սերը, բայց ո՞վ է սիրով հարուստ, եթե ոչ խոնարհը: Խոնարհությամբ են ձեռք բերվում թե՛ սեր, թե՛ հույս ու հավատ: Այն պահքը դարձնում է ճշմարիտ պահք, այն պահպանում է կույսերին, արժեք է տալիս ողորմությանը, այն աստվածահաճո է դարձնում զոհաբերությունը: Ով պահք է պահում առանց խոնարհության, նա իր պահեցողությամբ զայրացնում է Աստծուն, անգամ շնացողները լավ են գոռոզ կույսերից. առանց խոնարհության տրվող ողորմությունը Սուրբ Հոգուն հաճո չէ: Ով առանց հեզուլթյան է հսկում և աղոթում, նա քնկոտից լավ չէ, իսկ խոնարհի աղոթքը, թեկուզ ննջի էլ, անուշահոտ բուրբառ է Աստծո առջև: Խոնարհը, եթե նույնիսկ մեղք գործի, հեշտ կապաշխարի, իսկ գոռոզը, եթե նույ-

նիսկ արդարակյաց է, հեշտությամբ մեղավոր է դառնում:

Ով ծանրացած է մեղքերով և կամենում է ազատվել դրանցից, հարկ է, որ հեզուլթյուն ձեռք բերի: Այն նրան կմոտեցնի Աստծուն, Ումից կստանա մեղքերի թողությունը՝ նոր կյանքի գրավականը: Իմ ասածի ապացույցն անառակ կինն է, ով մեղքերով ծանրացած էր և, հանդերձավորվելով խոնարհության շուրջառով՝ մեղքերի թողություն էր աղերսում: Մեր Տերը տեսավ, թե ինչպես է նա խոնարհանում, և մաքրեց նրան մեղքի կեղտից և բարեհաճեց, որ նրա անունը գրվի Ավետարանում, և որպեսզի նրա փառքը տարածվի աշխարհով մեկ: Իսկ քանի որ նրա հիշատակը այդչափ փառավոր է երկրի երեսին, ապա նրա անունը փառաբանվում է նաև երկնքում: Եվ այդ ամենը նա ձեռք բերեց խոնարհությամբ:

Որովհետև Աս, ով ինքն իրեն բարձրացնում է, պիտի խոնարհվի, – ասում է մեր Տերն Իր Ավետարանում, – և Աս, ով ինքն իրեն խոնարհեցնում է, պիտի բարձրանա (Ղուկ. 14, 11), ուսուցանում է մեզ մեր Փրկիչը: Թե որչափ նողկալի է գոռոզությունը, ցույց է տալիս Քրիստոս՝ ասելով. որով-

հետև այն, որ մարդկանց առաջ բարձր է, Աստծո առաջ  
զագրելի է (Ղուկ. 16, 15): *Կամենում ես բարձ-  
րում լինել: Ջանադրաբար սիրի՛ր խոնար-  
հուլթյունը, այն առանց ճիգերի մարդուն ար-  
դարակյաց է դարձնում: Սիրում ես բարե-  
պաշտուլթյունը: Ատի՛ր գոռոզուլթյունը և  
խորշի՛ր դրանից, այն ճշմարտուլթյան գործե-  
րն անգամ Աստծուն անհաճո է դարձնում:  
Խոնարհամիտ մեղավորները նույնիսկ առանց  
բարի գործերի են արդարացվում, իսկ բարե-  
պաշտները գոռոզուլթյան պատճառով կործա-  
նում են իրենց շատ ու շատ գործերը: Քրիս-  
տոսի՛ աշակերտներ, ձեր աչքերի առաջ ունե-  
ցե՛ք հենց Քրիստոսին, Ով նսեմացրեց իրեն,  
և ջանացե՛ք հեզուլթյուն ձեռք բերել, քանզի  
դրանով Աստծուն հաճո կլինեք: Ով հեզու-  
լթյուն ունի, նրա հետ է ինքը՝ Քրիստոս, իսկ  
ով գոռոզուլթյամբ է լեցուն, նրա մեջ անտե-  
սանելիորեն բույն է դնում նենգադավը: Մե-  
ծամտուլթյանը հավատարիմ մնացողը իրեն  
դեկերի կացարան է դարձնում, իսկ ով խո-  
նարհուլթյամբ է հանդերձավորվել, նրա հա-  
մար հեշտ է Աստծուն սիրելը, իսկ ով գոռո-  
զուլթյունն է սիրում, նա ատում է Աստծուն:  
Եթե կամենում ես նենգադավին հաղթել,*

*զինվի՛ր խոնարհուլթյամբ, քանզի սատանան  
հենց որ տեսնի քո այդ զենքը, քեզանից դո-  
ղահար հեռու կփախչի: Եվ եթե կամենում ես  
հաճո լինել քո Տիրոջը, հագի՛ր խոնար-  
հուլթյան շուրջառը, քանզի հենց որ Նա տես-  
նի քո այդ հանդերձը, կբերկրի քեզ համար և  
կփառաբանի քեզ իր Արքայուլթյան մեջ:*

*Հիասքանչ զենք է խոնարհուլթյունը: Եվ  
ով դրանով է մարտի ելնում, նա չի պարտ-  
վում: Խոնարհուլթյունը բարձր պարիսպ է, ե-  
րանյալ է այնտեղ կացարան գտնողը: Խոնար-  
հուլթյունը անմեղներին օրհնուլթյուններով է  
լցնում և Երկնային Արքայուլթյան մեջ լուսա-  
վոր ապարանքի ժառանգորդները դարձնում:  
Այն Աբելին Աստծուն հաճո զոհ դարձրեց:  
Այն Ենոքին երկինք տարավ, և ցայսօր նա  
մահ չի ճաշակել: Այն Նոյին փրկեց ջրհեղե-  
ղից, և նա ջրհեղեղի ջրերում չապականվեց:  
Այն Մելքիսեղեկին Աստծո քահանա դարձ-  
րեց:*

*Խոնարհուլթյունն Աբրահամին դարձրեց  
Աստծո ընկերը և երկնային ընթրիքում առա-  
ջին բազմողներից մեկը, հեզուլթյունը փրկեց  
Իսահակին զոհ մատուցվելուց, Հակոբին օրհ-  
նուլթյունների ժառանգորդ դարձրեց, Հովսե-*

փին արքայություն պարգևեց, Մովսեսին լուսապսակով զարդարեց, Ահարոնին քահանայապետ դարձրեց, Հեսուրին՝ ժողովրդի առաջնորդ, Դավթին թագավորություն պարգևեց, Գեղեոնին՝ հաղթանակ, Նեփթաղիմին՝ դյուցազնական ամրություն, Եգեկիային՝ փրկություն, Եղիային երկինք հանեց, Եղիսեին հոգի տվեց, Սամուելին՝ օծման եղջյուր, Եսային՝ վսեմ տեսիլքներ, Հովնանին ծովից հանեց, Դանիելին՝ հնոցից մի խոսքով, խոնարհությունը փառավորում է սուրբերին թե՛ վաղնջական, թե՛ նոր ժամանակներում: Աշակե՛րտ, քո հոգում ամու՛ր պահպանիր հեզությունը՝ ամենայն բարիքի այդ աղբյուրը, որից քեզ համար ամենայն հիասքանչ բաներ են բխում, որը քեզ մոտեցնում է Աստծուն, մտցնում է հրեշտակների դասի մեջ, բացում է թաքթաքուր գաղտնիքները, քեզ ամենայն իմաստությամբ է լցնում, բացում է քո առջև խորքերը, ցույց է տալիս անպարագրելին: Այն գոռոզների մեծամտությունը ծնկի է բերում և խոնարհեցնում է քո փառքի առաջ, քո ներսում խաղաղություն, քո շուրջը՝ փառք, քո սրտում մաքուր խորհուրդներ է սերմանում և լուսավոր է դարձնում դեմքը քո:

Խոնարհությունը քո սրտում տեղ չի տալիս բարկացկոտությանը և արմատախիլ է անում զայրույթը քո հոգում, քեզանից հեռու է վանում ատելությունը, նախանձն ու չարությունը, քեզ լցնում է սիրով, խաղաղությամբ, ուրախությամբ ու բերկրությամբ՝ ո՛չ աշխարհիկ հոգսերով տարված մարդկանց, ո՛չ աշխարհի հզորների ուրախությամբ, այլ հոգու բերկրանքով, իմաստության զվարթությամբ: Դու խոնարհությամբ վաստակում ես մարդկանց բարի կամեցողությունը, նրանով հաճո ես դառնում Աստծուն: Հրեշտակները բերկրում են քեզ տեսնելով, իսկ դեերը շփոթահար են լինում: Նույնիսկ նախանձորդները, ովքեր ատում են քեզ, ներքուստ հիանում են քեզանով, որովհետև նրանք հափշտակված են ցասումով, իսկ քո սիրտը հանգիստ է և խաղաղ: Այս աշխարհում ոչ ոք չի ապրում այնպիսի բարձր կյանքով, ինչպես խոնարհը, և միայն կատարյալներն են հասնում խոնարհության բարձունքին: Հաճելի և քաղցր է խոնարհության լուծը, ով կրում է այն, նա վսեմ և բարձր ծառայություն է մատուցում:

Այսպիսով, աշակե՛րտ, որ կամենում ես հաճո լինել Աստծուն, պարանոցդ դի՛ր այդ լծի տակ, և քո աշխատանքն Աստծուն հաճո կլինի: Եթե կամենում ես մեղքերի թողություն ստանալ, կստանաս այն խոնարհուհուհու համար: Եթե կամենում ես քո մեղարատը հաղթահարել, կհաղթահարես խոնարհուհու համար: Եթե կամենում ես հավերժական կյանքի ժառանգորդը լինել, այն քեզ կբարձրացնի, ինչպես գրված է (Մատթ. 23, 12): Եթե սիրում ես մաքրությունը, նրանով մաքուր սրտի տեր կլինես, եթե սրբություններ ես փափագում, այն քեզ սուրբ կդարձնի, եթե կամենում ես կատարյալ դառնալ, այն կատարյալների ուղին է, և ամենայն բարձունք դու կեղնես խոնարհուհու համար:

Խոնարհությունը Արքայության ուղին է, երկնային դուռը, դրախտային այգին, քացրավենիքի սեղանը, բարիքների սկիզբը, օրհնությունների աղբյուրը, ապավենը, որը հուսախաբ չի անում իրեն դիմողներից և ոչ մեկին: Նրանով են մաքրվում մեղավորները, արդարացվում հանցավորները, ճշմարիտ ուղի վերադառնում մոլորյալները, փրկվում կործանվածները, փառավորվում մարտնչող-

ները, պսակավորվում հաղթանակողները: Հիրավի, որքա՛ն բարձր և վեհապանծ է խոնարհությունը: Երանյալ է նա, ով ջերմեռանդորեն սիրում է այն, գնում է նրա հետևից և առաջադիմում է դրանում: Բոլոր գանձերը պարփակված են խոնարհության մեջ, բոլոր բարիքները, բոլոր հոգևոր հարստությունները կարելի է գտնել նրանում: Համրի՛ր և թվարկի՛ր դրանք, եթե կարող ես, քանզի խոնարհության մեջ ամեն ինչ կա: Թվարկի՛ր վաղնջական ժամանակների, միջին և նոր ժամանակների ճգնակյացներին, և եթե ի վիճակի ես, համրի՛ր բոլորին, ովքեր հեզություն բերեց են բերել հաղթական պսակը: Խրատվի՛ր այդ ամենով, Քրիստոսի՛ աշակերտ, և մի կողմ դի՛ր ամենայն գոռոզություն, ընտրիր ուրեմն քեզ համար հեզությունը: Եվ քանզի դու ինձ խնդրում էիր գրել քեզ, թե ինչպիսի գեղքով կարող ես մարտում հաղթել նենգադավին, ով քեզ ատում է իր դեմ մարտնչելու համար, ուստի քո խնդրանքով բացեցի լսողությանս դռները և հույժ բերկրում եմ քո սխրագործությունների համար, քանզի նկատում եմ, որ քո հոգին ջերմեռանդորեն հաղթանակի է ձգտում:

Ես զննել եմ հաղթողների զինատաճարը, խորամուկն էի լինում, թե ո՞ր զենքով հանդերձավորվելն է հաղթանակ բերում: Ես այնտեղ շատ զենքեր տեսա, և դրանցից յուրաքանչյուրով կարելի է փայլուն հաղթանակ տանել: Առաջին հերթին ես տեսա մաքուր պահքը՝ այդ սուրը, որը երբեք չի բթանում: Այնուհետև տեսա կուսությունը, մաքրությունը և սրբությունը՝ այդ աղեղը, որից արձակվող սուրսայր նետերը շամփրում են նենգադավի սիրտը: Տեսա և չքավորությունը, որ քամահրանքով ժխտում է արծաթը և ամենայն ունեցվածք, այդ զրահագգեստը, որը սիրտը պաշտպանում է սատանայական հնարամիտ նետերից. նկատեցի այնտեղ սերը՝ այդ վահանը, և խաղաղությունը՝ այդ պինդ գեղարդը, որոնցից սարսում է սատանան և փախս է տալիս: Տեսա հսկումը՝ այդ զրահը, աղոթքը՝ այդ պահպանակը, և ճշմարտացիությունը՝ այդ թեթև մարտակառքը, սակայն զննելով բոլոր այդ սպառազինությունները և խորհրդածելով, թե որն է դրանցից ամենագորեղը, ես տեսա խոնարհության պատվարը և գտա, որ դրանից զորեղ բան չկա, որովհետև ոչ մի զենք չի կարող տապալել այն, և

նենգադավը ի զորու չէ գրոհով վերցնելու այն: Այդ պատճառով բոլոր թվարկած զենքերը թողնելով՝ քեզ գրեցի միայն խոնարհություն մասին: Եթե կամենում ես հաղթանակ տանել քո վարած մարտում, ապա քեզ ապաստան փնտրի՛ր խոնարհության պատվարի հետևում, այնտե՛ղ թաքնվիր և մի՛ թող այդ պարիսպը, որպեսզի քեզ գիշատիչը չգերեվարի, հույսդ մի՛ դիր քո սեփական զենքի վրա, որպեսզի նենգադավը քեզ չխոցի:

Ահա այն սպառազինությունը, որ քեզ եմ ուղարկում քաջահաղթների զինատաճարից, քանզի հենց դրանով էին նրանք հաղթում: Երանելի է նա, ով մարտի մեջ է մտնում՝ դրանով զինվելով: Մեր Տերն ինքը խոնարհություն հագավ և մեզ խոնարհություն ուսուցանեց, որպեսզի մեզ միջոց տա իր խոնարհությամբ հաղթելու նենգադավին և կործանելու նրա ողջ ուժը: Աստծով քեզ խոնարհություն եմ առաջարկում, լսի՛ր և ուսանի՛ր այդ, աշակե՛րտ, որպեսզի չսխալվես և ինքդ քեզ խոնարհ չկարծես, երբ խոնարհ չես: Շուրթերդ զո՛ւսպ պահիր ավելորդ խոսակցություններից: Վատ բաներ մի՛ խոսիր նրա մասին, ով խորշելի և ատելի է քեզ: Խո-

նարհաբար լսի՛ր քեզանից մեծերին, հետևի՛ր ոչ թե քո կամքին, այլ քո եղբայրների: Կերակրի մեջ ժուժկալ եղի՛ր, երկար քնով մի՛ տարվիր, տքնաջան եղի՛ր աշխատանքում և ուրիշներին ծառայելիս: Զանադրաբար վարժվի՛ր այդ բոլոր առաքինություններին, գերազանցապես խոնարհությունը, որովհետև դրանով կվճարես քո բոլոր պարտքերը, կազատվես քո բոլոր մեղքերից: Այն քեզ կմոտեցնի Աստծուն, և Աստված կբերկրի քեզանով և բերկրանք կպարգևի քեզ, և անոթ կդառնաս ի փառս ու ի պատիվ քո Տիրոջը: Փա՛ռք Տիրոջը, Ով նվաստացրեց իրեն, մեզ խոնարհություն ուսուցանեց և մեզ պարգևեց իր Հոգին, որպեսզի խոսենք խոնարհության հարստության մասին: Օրհնյա՛լ է Հայրը, որ Նրան մեր մոտ է առաքել: Փա՛ռք Միածնին՝ մեզ Փրկողին: Գոհություն Սուրբ Հոգուն, որ մեր միջոցով հայտնում է խոնարհության մասին: Եվ թող ներում չնորհվի այս ամենը խոսող շուրթերին, և թողություն՝ այս գիրը գրող ձեռքին, և թող կարգացողներն ու լսողները ողորմածություն և Դատաստանի օրը մեղքերի թողության արժանանան: Եվ թող մեր Տերը հաղթանակ և ճշմարտության պսակ տա

այն աշակերտին, որն առիթ եղավ այս խոսքի համար: Եվ ով որ կաղոթի խեղճիս համար, որ գրեցի այս տողերը, թող նրա աղոթքները երկինք հասնեն և տեղ գտնեն Երկնային Արքայության մեջ: Փա՛ռք քեզ, Աստված, որ այդչափ սիրում ես Քեզ սիրողներին:



## Մեր ազատության և այն մասին, որ Աստված ազատ է ստեղծել մարդուն

Աստված ազատ է ստեղծել մարդուն՝ փառավորելով նրան խելքով և իմաստունությամբ և նրա հայացքի առջև դնելով կյանքն ու մահը, այնպես որ եթե կամենա ըստ ազատության ընթանալ կենաց ճանապարհով, ապա հավերժորեն կապրի, իսկ եթե չար հոժարություն ընթանա մահվան ճանապարհով, ապա հավերժորեն կտանջվի: Այն, ինչ կախված է բնությունից, անխախտ է. ո՛չ մեծարանքի է արժանի, ո՛չ էլ պատժի, ոչ էլ որևէ մեկը երբևէ չի մեղադրվել, որ սև կամ կարճահասակ է, որովհետև դա մեր կամքից անկախ է: Իսկ պատիժներն ու մեծարանքները մեր կամքից են կախված, որովհետև կա և՛ մեկի, և՛ մյուսի պահանջը՝ ինչպես մեր կամքի և կամեցողության, այնպես էլ աստվածային օժանդակության և պաշտպանության. նրանց որ առաջուց գիտեր Աստված... Ասիսասահմանեց... և նրանց էլ կանչեց (Հոմ. 8, 29-30), բայց, ինչպես առաքյալն է ասում, որոնք էլ կանչվեցին նախասահմանումով (Հոմ. 8, 28), այսինքն՝ ի-

րենց հոժարությամբ և կամքով: Քանզի չցանկացողներին թույլ տվեց ընթանալ ըստ իրենց ցանկության: Աստված բռնություն և վիրավորանք չի հանդուրժում իր և իր պատկերի՝ մարդու նկատմամբ: Նա ինքն անտեսանելի է, իսկ Նրա պատկերը՝ մարդը՝ տեսանելի: Այդ պատճառով, եթե որևէ մեկը մարդուն բարիք կամ չարիք կանի, այդ հենց Նրան է անում: Ուստի ամենայն դառ Նրանից է բխում, որ ըստ արժանվույն է հատուցում: Նա վրեժ է լուծում իր պատկերի համար:



## Ութ խորհուրդների մասին

**Գ**իտցի՛ր, որդեյա՛կ, որ կան ութ խորհուրդներ, որոնցով գործվում է ամենայն չարիք՝ որկրամոլությունը, անառակությունը, արծաթասիրությունը, բարկությունը, անժամանակ տրտմությունը, վհատությունը, փառասիրությունը, գոռոզությունը: Հենց դրանք էլ պատերազմ են մղում մարդու դեմ: Իսկ դո՛ւ, որդեյա՛կ, եթե ուզում ես հաղթահարել որկրամոլությունը, սիրի՛ր ժուժկալությունը, Աստծո երկյուղն ունեցի՛ր և կհաղթես: Իսկ եթե կամենում ես հաղթահարել անառակությունը, սիրի՛ր հսկումն ու ծարավը, միշտ խորհի՛ր մահվան մասին և երբեք զրույցի մի՛ բռնվիր կնոջ հետ և կհաղթես: Եթե ուզում ես հաղթահարել արծաթասիրությունը, սիրի՛ր անշահախնդրությունն ու չափավորությունը: Եթե ուզում ես հաղթահարել զայրույթը, հեզություն և մեծահոգություն ձեռք բերել, միշտ հիշի՛ր, թե հրեաները ինչքա՛ն չարություն արեցին մեր Տեր Հիսուս Քրիստոսին, այդուհանդերձ Նա՛ որպես Մարդասեր Աստված, չէր բարկանում

նրանց վրա, այլ ընդհակառակը, ազոթում էր նրանց համար՝ ասելով. Հա՛յր, Աերի՛ր դուստր, որովհետև չգիտեմ, թե ինչ եմ անում (Ղուկ. 23, 34): Եթե ուզում ես հաղթահարել անժամանակ վիշտը, երբեք մի՛ տրտմիր որևէ ժամանակավոր բանի համար, բայց եթե քեզ խոցում են խոսքով կամ անհանգստացնում են կամ անարգում, մի՛ տրտմիր, այլ բերկրի՛ր: Միայն այնժամ տրտմիր, երբ մեղք գործես, սակայն այդ դեպքում էլ չափը պահպանիր, որպեսզի հուսահատություն մեջ չընկնես ու չկործանվես: Եթե կամենում ես հաղթահարել վհատությունը, զբաղվի՛ր թեկուզ և որևէ կարծատե ձեռագործով, ընթերցի՛ր կամ հաճախ ազոթիր: Եթե կամենում ես հաղթահարել փառասիրությունը, մի՛ սիրիր ո՛չ գովեստները, ո՛չ մեծարանքները, ո՛չ լավ հագուստները: Ընդհակառակը, ուրախացի՛ր, երբ քեզ այպանեն և անարգեն՝ սուտ վկայելով քո մասին, ինքդ քեզ կշտամբի՛ր, որ ամենայն մեղավորից մեղավոր ես: Եթե ուզում ես հաղթահարել գոռոզությունը, ինչ էլ որ անում ես, մի՛ ասա, թե դա անում ես քո աշխատանքով կամ քո սեփական ուժերով: Պահք ես պահում, թե ժամանակդ հսկման մեջ ես անցկաց-

նում, մերկ հողի վրա ես քնում, թե սաղմոսներ ես երգում կամ ծառայում կամ գլուխ ես խոնարհում ասա՛, որ այդ ամենն արվում է Աստծո օգնությունը և Աստծո խնամակալությունը, այլ ոչ թե քո կարողությունը և ջանադրությունը:

Աշխատի՛ր, որդյա՛կ, միշտ պարզասիրտ և անկեղծ լինել, չլինի թե սրտումդ մի բան պահես, իսկ շուրթերիդ վրա՝ մեկ այլ բան, որովհետև դա նենգություն է: Եղի՛ր ճշմարտասեր և անսուտ, որովհետև սուտը նենգադավից է: Չարին չարով մի՛ պատասխանիր, այլ եթե մեկը քո հանդեպ չարիք գործի, ների՛ր նրան, որպեսզի քեզ էլ Աստված ների: Եթե հիշաչարությունը զորում է քեզ տապալել, այդ մասին աղոթի՛ր եղբորդ համար, և հիշաչարությունը կնահանջի: Տե՛ս, թույլ մի՛ տուր, որ մեջդ բույն դնի նախանձի կիրքը, որպեսզի սատանան քեզ ողջ-ողջ կուլ չտա, այլ փութով խոստովանի՛ր և աղոթի՛ր Աստծուն, որպեսզի քեզ ազատի այդ վտանգից: Երբ տեսնում ես, որ մեկը մեղք է գործում, մի՛ հրապարակիր նրա մեղքը, մի՛ դատիր նրան, ատելությունը մի՛ լցվիր նրա հանդեպ, այլ ավելի լավ է ասա. «Ես նրանից վատն եմ, և նա

մեղք գործեց այսօր, իսկ լուսադեմին ե՛ս կգործեմ»»: Գիտցի՛ր և այն, որ դեկերը վախենում են լուսթյունից, պահքից, հսկումից, ժուժկալուսթյունից, խոնարհությունից, աղոթքից, արցունքներից և վանականի մյուս առաքինություններից: Եթե ուզում ես, որ Աստված քեզ արցունքներ ու տրամուլթյուն տա և ազատի կրքերից, միշտ հիշի՛ր մահն ու քո շիրիմը:

Եթե գայթակղվես սատանայից և մեծ կամ փոքր մեղքի մեջ ընկնես, մի՛ հուսահատվիր և քեզ կործանման մի՛ հասցրու, այլ դիմի՛ր խոստովանանքին ու ապաշխարանքին: Աստված քեզանից երես չի դարձնի: Նրան փա՛ռք հավիտյանս: Ամեն:

Աստված կընդունի քեզ: Մի՛ ցանկացիր քաղաքներ գնալ: Եթե չտեսնես նենգադավին, ապա մաքուր կմնաս: Գինի մի՛ խմիր մինչև հարբելդ, այլապես սիրտդ կատաղորեն հաճույք կտենչա: Օրը երկու անգամ մի՛ կեր, որպեսզի մարմինդ չկոպտանա, և նրա հետ չամրանան նաև կրքերդ: Դուռդ մի՛ գոցիր ճամփորդի առաջ, որովհետև ինչ դատաստանով որ դատեք, նրանով էք դատվելու (Մատթ. 7, 2): Այցելի՛ր հիվանդներին, և Աստված քեզ կայցելի: Շատ

մի՛ քնիր, այլ անդադար խնդրիր Աստծո օգնությունը, որպեսզի փրկվես, ինչպես թռչունը ծուղակից (Առակ. 6, 5): Շատ մի՛ խոսիր, որպեսզի ստուգված մեջ չընկնես: Պետք եղածից ավելի ոչ մի բան ձեռք մի՛ բեր, այլ ապրիր համեստ կարողությամբ: Լռի՛ր և քո գործն արա: Ողջ ուժով սանձի՛ր լեզուդ և որովայնդ: Խոնարհամտությո՛ւն ունեցիր և քեզ այնպե՛ս պահիր, ասես անտեղյակ և անգետ ես: Բոլոր մարդկանց հետ խոնարհ եղիր: Շատախոսություն և ծիծաղի վնասը շատ է, և ողջախոս այրը պահպանում է մնջանքը: Աչքիդ առաջ ունեցի՛ր վիշտն ու մահը, և երբեք գայթակղությունը քեզ չի հուսահատեցնի: Ե՛վ երեկոյան, և՛ առավոտյան ինքդ քեզ փորձիր, թե ինչպես ես ժամանակդ անցկացրել: Սակայն առանց աշխատանքի դա անհնար է անել: Գիտցի՛ր, որ ինչպես հողը չի կարող պտուղ տալ ինքն իրենով՝ առանց սերմի ու ջրի, այնպես էլ մարդը չի կարող պտուղ տալ՝ առանց չարաչար տանջանքների և խոնարհամտության: Անդադար հո՛գ տար քո մասին որպես Աստծո պատկերի: Երկյուղի՛ր Աստծուց, որպես բոլոր գործերիդ համար նրան պատասխան տվող պարտապան: Ամեն օր ինքդ քեզ

հա՛րց տուր, թե ի՞նչ կիրք ես քեզանից վանել: Դատաստանին հավատացողը ոչ մեկին չի դատում, այլ իրեն զերծ է պահում նույնիսկ ամենամանր ու անկարևոր բաներից: Ով հավատում է, որ իր մարմինը հարուստուն է առնելու, նա հոգ է տանում այն պղծությունից մաքրելու: Այսպիսով, սիրեցյա՛լ, հաստատվի՛ր Աստծո երկյուղի մեջ, պահպանի՛ր և կատարի՛ր այն ամենը, ինչը որ պետք է անես՝ խղճիդ դեմ չգնալով: Այլ նրա հանդեպ ուշադի՛ր եղիր, որպեսզի նա էլ քո պահապանը լինի և ամեն անգամ ցույց տա, թե ինչի մեջ ես դու ընկնում, և չլքի քեզ՝ թշնամիների ձեռքը մատնելով: Գիտցի՛ր, որ երբ վանականի միտքը սկսում է փախչել իր կամքից և Աստծուն դիմել, նա սկզբում վհատություն մեջ է ընկնում: Իսկ վհատությունը արմատախիլ անելու համար պետք է անդադրում ազդեթել ու անդադրում խորհրդածել Աստծո մասին, իսկ խորհրդածությունը կենդանի է մնում ժուժկալությունը, իսկ ժուժկալությունը պահպանվում է մարմնական աշխատություն: Այդպիսին է դեպի կյանք տանող նեղ ճանապարհը (Մատթ. 7, 14):

Ճանապարհի նեղութիւնը վանականների համար բացվում է խոսքի մեջ, ինչպես հայելում: Քանզի ամենայն ներկան նրանց համար դառն է, սեփականութիւն ունենալը վտանգավոր է, դրանից օգտվելն անհուսալի է, դրանից հրաժարվելը՝ ցավոտ, չքավորութիւնը դառն է, նեղութիւնը՝ տանջալի, ճգնակեցութիւնը ծանր է, ժողովալութիւնը՝ բազմաշխատ, կյանքի խստամբերութիւնը վտանգավոր է, լուութիւնը՝ տանջալի: Եթե վանականը մերկացնի, պարտավոր է լինում մինչև գետին գլուխ խոնարհել, եթե լուի, թուլանում է Աստծո հանդեպ ջերմեռանդութեան մեջ: Բարու թշնամին՝ դէր, ամենայն բարի գործին հակադրում է իր նման մի չար գործ. ողորմութեանը հակադրում է շահամոլութեանը, ճգնակեցութեանը՝ անձնապարծութեանը, հսկումին՝ քնկոտութեան մեղադրանքը, աղոթքին՝ ծուլութեանը, անշահախնդրութեանը՝ ժխտութեանը, սիրուն՝ քծնանքը, պանդխտասիրութեանը՝ սառնութեանն ու որովայնամոլութեանը: Նա ամեն բան խառնակել է, ամեն ինչ իրար է խառնել, ամեն ինչին սկսել է մասնակցել:

Վանական կյանքը վտանգված է, ի վերջո կազմալուծվում է: Գլուխն ու ոտքերը վնաս են կրում, աչքերն ու ձեռքերը տառապում են ախտերից: Սեփականութեան ձեռքբերումը թուլացրել է հավատը, սպառումը փոխել է ճգնակեցութիւնը, կամայականութիւնը ճշում է գործադրում խոնարհամտութեան վրա, ժամանակավորի ձեռքբերումը խորտակել է հույսը, մարմնական աշխատանքը մթագնել է հոգևոր աշխատանքը, մարմնի մասին հոգածութիւնը թուլացրել է մտքի ազդեցութիւնը, խիղճը չի ճգնում արթնացնել միտքը:

Խորհուրդները չեն աճապարում աջակցելու ապաշխարանքին: Եթե այս ասելով չեմ սխալվում, ապա այս վիճակը գերութեան պատկերն է: Քանզի մենք կուրացած ենք և չենք ուզում խելքի գալ, և հոգին չի կարող միաժամանակ և՛ բարիք, և՛ չարիք գործել, մինչդեռ վատը ընդունում է բարութեան քողի տակ, պահքի ժամանակ փառասեր է դառնում, ժողովալութեան մեջ հպարտանում է: Չի ուզում անսալ Աստծուն, որ ասում է. Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել (Մատթ. 6, 24):

Այսպիսով, եթե ճշմարտապես սիրում ես Աստծուն և ջանք ես գործադրում որսալու ապագա Արքայությունը և երզվել ես աշխատանք թափել քո գործած մեղքերի պատճառով, ապա հիշի՛ր Դատաստանն ու հավերժական տանջանքը՝ ահով սպասելով քո՝ այս աշխարհից գնալուն: Հոգ մի՛ տար ո՛չ փողի, ո՛չ ունեցվածքի, ո՛չ ծնողների, ո՛չ աշխարհիկ փառքի, ո՛չ ընկերների, ո՛չ բարեկամների, ո՛չ եղբայրների և ընդհանրապես որևէ երկրային բանի համար: Հոգ մի՛ տար այս ամենի մասին: Սակայն, կտրելով ամենայն կապ, մի կողմ դնելով հոգածությունն ու ատելով այն, նույնիսկ սեփական մարմինդ մերկացնելով այդ ամենից՝ անտրտում և անձանձիր գնա Քրիստոսի հետևից՝ միշտ Նրան հայելով և Նրանից օգնություն ակնկալելով: Քանզի մահը հանկարծահաս է, դատաստանը՝ մոտ, վա՛յ նրան, ով անպատրաստ է:

Վա՛յ քեզ, հո՛գի, որ անզգա ես մնում այս կայանքում՝ ամեն օր տրվելով շվայտության, ծիծաղի, ցրվածության, և անառակորեն ապրելով՝ հետագայում կարտասովես հավերժական կրակի հրում տանջվող հարուստի նման:

Վա՛յ քեզ, հո՛գի, որ չես հանդուրժում

եղբորդ հասցրած ոչ մի վիրավորանքը, անզգամ մի դառը խոսքը և անմիջապես հակաճառում ես և դիմադարձություն ես սկսում, ուստի կորցնում ես համբերության և խոնարհության պսակը, և հավերժորեն կդատապարտվես հիշաչարների հետ:

Վա՛յ քեզ, հո՛գի, որ ատում և անարգում ես եղբորդ, կամ հանդուրժում ես, երբ ուրիշներն են այդ անում, դրա համար մարդասպանների հետ կդատապարտվես: Քանզի ասված է՝ ամեն ոք, ով ատում է եղբորը, մարդասպան է (Ա Հովհ. 3, 15):

Վա՛յ քեզ, հո՛գի, որ քամահրում ես Աստծո պատվիրաններն ու ենթադրում ես, թե փրկությունը միայն վանականի պատկերի և անվան մեջ է: Քանզի ահեղ օրը կլսես, որ Աստված կասի. Ոչ ամեն մարդ, որ ինձ «Տե՛ր, Տե՛ր» է ասում, երկնքի Արքայություն կմտնի. այլ նա՛, ով կատարում է կամքը իմ Հոր, որ երկնքում է (Մատթ. 7, 21): Անիծյալնե՛ր, գնացե՛ք ինձնից ճավիտեճական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար» (Մատթ. 25, 41):

Վա՛յ քեզ, հո՛գի, որ սիրում ես մարդկային փառքը և մեծարանքները, չքեղաշուք հանդերձները և իրեղենի ձեռքբերումը,

ուստի և Դատաստանի օրը նողկալի կլինես Աստծո առջև, կընկնես նրա երեսից և կլինես գոռոզամիտ զևերի բաժնեկիցը:

Վա՛յ քեզ, հո՛գի, որ ամեն օր մեղք ես գործում, իսկ ապաշխարանքն օրեցօր հետաձգում ես: Մահը քեզ վրա կհասնի անսպասելի, ինչպես կողոպտիչը գիշերով, և դու կապկապած կտարվես հրաբորբոք գեհենը՝ անօգուտ արցունք թափելով և մեղադրելով քեզ քո անխոհեմության համար: Վա՛յ քեզ, հո՛գի, որ չես սարսում՝ մտածելով, թե ինչպես Ահեղ Դատաստանի օրը, երբ Երկնային Ուժերն անգամ կդողան ահից, Աստծո առաջ կհայտնվես քո եղկելի և պիղծ հանդերձներով:



### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ս. Եփրեմ Ասորու կյանքն ու  
արեղծագործությունները.....5

Խրատներ.....43

Թարգմ. ռուսերենից՝  
Վ. Ֆերեշեթյանի

Խմբագիր՝	Ասողիկ եպիսկոպոս
Գեղ. խմբագիր՝	Ղևոնդ քահանա
Շապիկը՝	Ա. Օհանջանյանի
Սրբագրիչ՝	Յու. Հովհաննիսյան